ԷՋՄԻԱԾՆ

1980

Թ



ԼԷ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր

1980

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆՈՒՄՆԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Այսօր Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգերորդ տարեդարձն է, որը Մայր Աթոռում կատարվում է ավանդական շուքով և հանդիսությամբ, թեև Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ գահակալության քսանհինգերորդ տարեդարձը համազգային տարողությամբ նշվելու է 1981 թվականի հոկտեմբերի սկզբներին:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը հանդիսավորապես և եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագին և նախագահելու Հայրապետական մաղթանքին:

Օրվա սուրբ պատարագը մատուցում է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որն այս առթիվ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Մայր տաճարի երկու դասերում տեղ են գրավել զանազան երկրներից ժամանած սփյուռքահայ բազում ուխտավորներ, որոնք երկյուղած բարեպաշտությամբ հետևում են ս. պատարագին:

Ս. պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Իրաքի հայոց առաջնորդ Տ. ավագ վրդ. Ատատուրյանը, Դամասկոսի հայոց առաջնորդ Տ. Ոս-

կան ծ. վրդ. Գալբակյանը՝ Տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը՝ Անթիլիասից, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները, մայրավանքի պատասխանատու ղեկավար աշխատողները և այլ հյուրեր:

Ս. պատարագին ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Մայր տաճարը լիքն է հավատացյալ բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը խոսում է Վարագա Ս. Խաչի տոնի և Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգերորդ տարեդարձի առթիվ ոգեշունչ մի քարոզ՝ նշելով, որ խաչը խորհրդանշանն է մեր քրիստոնեական հավատքի, մարդու փրկության ճանապարհի վրա: «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի»:

Խաչի վրա է, որ մեր Տերը Իր անձը զոհեց մարդկության փրկության համար: Ուրեմն, խաչը միաժամանակ սիրո և զոհողության խորհրդանշանն է:

Քրիստոնեական բոլոր Եկեղեցիները ամեն տարի հանդիսությամբ նշում են Ս. Խաչի Երևման, Խաչի Վերացման կամ Խաչվերացի և Գյուտ Խաչի տոները:

Հայ Եկեղեցին, նշեց քարոզիչ սրբազանը, ունի նաև «ազգային խաչի», «մե՛ր խաչի» տոնը, որը ծանոթ է Վարագա Խաչ անունով, և որի հիշատակը նշում ենք այսօր:

Վարագա Խաչի տոնը զուտ ազգային մի հիշատակի պանծացումն է: Տ. Սերովբե արքեպիսկոպոսը հանգամանորեն իր քարոզի մեջ խոսում է Վարագա Խաչի տոնի հաստատման պատմության ազգային հիշատակների մասին, հիշատակներ, որոնք մեր եկեղեցական ավանդությունների մեջ կարևոր տեղ են գրավում:

660 թվականին Վարագա լեռան Գալիլիա բարձունքի վրա ճգնող Թոդիկ և Հովել ճգնավորները իրենց տեսիլքի մեջ ականատես են լինում Վարագա այդ ժայռոտ գագաթի 12 սյուների վրա հաստատված մի եկեղեցու և սյուների միջև հաստատված լուսապլույտ մի խաչի: Դա Ս. Հռիփսիմե կույսի վզից կախված Քրիստոսի իսկական խաչափայտի մի մասունք էր, «զմածեալն տէրունական արեամբ», ինչպես նշում է Խորենացին:

Հռիփսիմյան կույսերը Վարագա լեռան բարձունքին հալածանքների ժամանակ մի քարի տակ պահել էին Ս. Հռիփսիմեի այդ խաչը, երբ իրենք Վասպուրականից հեռանում էին դեպի Վաղարշապատ: Տարիներով Ս. Հռիփսիմեի խաչը թաքնված է մնում: Թոդիկ և Հովել ճգնավորների եղած աստվածային այդ հայտնությունը 7-րդ դարում մեծ խանդավառություն է ստեղծում ամեն կողմ:

Ժամանակի Ներսես Գ Շինող Հայրապետը շտապում է դեպի Վարագ, Թեոդորոս մեծ իշխանի որդի Վարդ պատրիկ սպարապետի հետ և, հաստատելով հայտնաբերված մասունքի ստուգությունն ու պատմական մանրամասնությունները, տնօրինում է ամեն տարի սեպտեմբերի 28-ի մերձավոր կիրակիին կամ Խաչվերաց տոնից երկու շաբաթ վերջ մեծ հանդիսությամբ կատարել Վարագա նորահայտ Խաչի տոնախմբությունը, որպես զուտ ազգային-եկեղեցական տոն: Այս առթիվ Ներսես Գ Շինող կաթողիկոսը գրում է նաև Վարագա Խաչին նվիրված իր գեղեցիկ շարականը՝ «Նշանաւ ամենայաղթ խաչիւդ»:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՁԱՐԴԱՐՈՒՄ Է ԿՈՒՐԾՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆԻ (ԱՄՆ), ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Այսօր, նշում է Սերովբե սրբազանը, մեզ համար կրկնակի ազգային-եկեղեցական մեծ տոն է: Քարոզիչ սրբազանը գեղեցկորեն միացնում է Վարագա ազգային Խաչի տոնակատարությունը Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյա բերկրառիթ տարեդարձի հետ:

Քարոզիչ սրբազանը խանդավառությամբ ներկայացնում է Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյակի եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության տարբեր բնագավառները, շեշտելով, որ հոբելյար Հայոց Հայրապետը մեկն է մեր ազնվական և զոհաբերվող կաթողիկոսներից, Որն Իր արի ու բարի ձեռքերում միշտ բարձր և ծաղկյալ է պահել հայրապետական իշխանության գավազանը կոչումի և պարտքի խորունկ գիտակցությամբ՝ արժանանալով միաժամանակ ոչ միայն մեր ժողովրդի, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, այլ նաև քրիստոնեական Եկեղեցիների և պետական բարձր շրջանակների ուշադրության և երախտագիտության, Իր խաղաղասիրական, ժողովուրդների եղբայրության, Եկեղեցիների ի Քրիստոս սիրո միության, ազգերի համագործակցության Իր սրտառուչ ջանքերով:

«Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ»:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը իր ոգեշունչ և բովանդակալից քարոզն ավարտում է Հայոց Հայրապետի կենաց արևշատության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայց. Եկեղեցու պայծառության, հայրենյաց բարօրության և հայ ժողովրդի միասնության սրտառուչ մաղթանքներով:

Քարոզից հետո Հայոց Հայրապետի նախագահությամբ Մայր տաճարում, Ավագ սեղանի դիմաց, կատարվում է Հայրապետական մաղթանք:

«Զկնի սրբոյ պատարագի» Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարանի ընդունելության դահլիճ, որտեղ շնորհավորություններ է ընդունում Իր գահակալության առիթով:

Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի տոնը հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, ներկա ուխտավորների և հավատացյալների՝ սրտագին բարեմաղթություններ անելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայ Եկեղեցու պայծառության և Նորին Ս. Օծության կենաց արևշատության համար:

Իր պատասխան խոսքում Հայոց Հայրապետը շնորհակալություն է հայտնում եղած շնորհավորանքների համար, ապա ամփոփ կերպով կանգ է առնում անցնող քսանհինգ տարիների ընթացքում Մայր Աթոռում և մեր բոլոր թեմերում կատարված եկեղեցաշեն, հոգևոր-կրթական, մշակութային և հայրենանվեր աշխատանքների վրա, ապա օրհնում է Եկեղեցին ու ազգը՝ թելադրելով, որ հավատարիմ մնանք մեր նախնիների սուրբ հավատքին և նվիրական ավանդներին:

Ներկա ժողովուրդը աջահամբույրով շնորհավորում է Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգամյակը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ

Գերագույն հոգևոր խորհուրդը, ի պատիվ Հայոց Հայրապետի, ընդունելություն էր կազմակերպել Նրա գահակալության քսանհինգամյակի առիթով Վեհարանի սեղանատանը:

Ընդունելությանը ներկա էին Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Կոմիտաս, Տ. Ղևոնդ, Տ. Արսեն, Տ. Գևորգ սրբազանները, Տ. Ոսկան, Տ. Գրիգորիս, Տ. Ավագ վարդապետներ, Երևանի հայրապետական թեմի փոխանորդի փոխանորդ Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը, Հնդկաստանի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ Կարպիս Կարագյանը, Հովհաննես Թոփուզյանը, նկարիչ ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, Հայկ Մելքոնյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամներ դոկտ., պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, ակադեմիկոս Բաբգեն Առաքելյանը, Մայր Աթոռի պատասխանատու աշխատողներ՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Ծահբազյանը, Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, Մայր Աթոռի նախկին դիվանապետ Հայկ Առաքելյանը, վրահայոց թեմի եկեղեցական վարչությունների ներկայացուցիչներ Ռուզաննա Մելքումյանը, Վարանցով Հարությունյանը և ուրիշներ:

Հրավիրյալների թվում էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մայր Աթոռի երիտասարդ բարերարներ տեր և տիկին Հրայր Հովնանյանը՝ ԱՄՆ-ից, և բարերար տիար Ժիրայր Մինասյանը՝ Փարիզից, պ. Թյությունջյանը՝ դարձյալ Փարիզից, տիար Տեր Գրիգորյանը՝ Բուխարեստի եկեղեցական վարչության անդամ, իր տիկնոջ հետ, և այլ հրավիրյալներ:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգերորդ տարեդարձը ջերմորեն շնորհավորեցին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը, որ ներկա էր ընդունելությանը, Տ. Սերովբե, Տ. Կոմիտաս և Տ. Ղևոնդ սրբազանները, Տ. Ոսկան ծ. վարդապետը, տիար Գրիգոր Խանջյանը, տիար Հայկ Առաքելյանը:

Հայոց Հայրապետը Իր պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեց Իր գահակալության առթիվ արտահայտված անկեղծ և ջերմ խոսքերի համար և, այս առթիվ հայրապետական Իր բարձր գնահատությանն ու օրհնությանը արժանացնելով Մայր Աթոռի նոր ու երիտասարդ բարերարներին, տիար Հրայր Հովնանյանի և տիար Ժիրայր Մինասյանի կրծքերը զարդարեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով՝ նրանց Մայր Աթոռի պայծառությանը ի նպաստ կատարած ինքնաբուխ նվիրատվությունների համար, որպես Մայր Աթոռի հարազատ զավակների և ազնիվ, հայրենասեր ու բարեպաշտ հայորդիների:

Շքանշանակիրներ տիար Հրայր Հովնանյանն ու Ժիրայր Մինասյանը որդիական շնորհակալության և երախտագիտության զգացված խոսքեր ասացին Հայոց Հայրապետին, Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանով պարգևատրվելու առիթով:

Օրվա տոնի առթիվ կազմակերպված ընդունելությունն ավարտվեց Հայոց Հայրապետի գոհաբանական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ԶԱՐԴԱՐՈՒՄ Է ԿՈՒՐԾՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՐԵԲԱՐ ԺԻՐԱՅՐ ՄԻՆԱՍՅԱՆԻ (ՓԱՐԻԶ), ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ՎԵՀԱՐԱՆՈՒՄ։ ԱՋԻՆ՝ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԾԵՍ ԵՎ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ*

ԾԵՍ և ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ բառերը իրենց էությամբ իսկ կրոնական բովանդակություն և իմաստ ունին. անոնց կատարողությունը՝ կարտահայտեն մարդուն կրոնական զգացումները գերագույն Ույժին՝ Աստուծո հանդեպ:

Երբ մարդ էակը պատմության թատերաբեմին վրա երևցավ և իր մարդ ըլլալու գիտակցությունն ունեցավ, այդ վայրկյանեն իսկ գիտակցեցավ բնության մեջ գերագույն ույժի մը գոյության. զգաց ուժեղ կերպով Անոր ազդեցությունը իր վրա և Անոր ենթարկված ըլլալը արտահայտեց որոշ արարմունքներով և այլազան ձևերով:

Որչափ անորոշ և տարտամ էր մարդուն ըմբռնումը Աստուծո նկատմամբ, այնչափ ալ նախնական էին իր արտահայտության ձևերը:

Ժամանակի ընթացքին սակայն, որչափ զարգացավ Աստուծո գաղափարը մարդոց մեջ, անոր հետ զուգընթացաբար զարգացան նաև ծեսի և արարողության եղանակները:

Հին Կտակարանի մեջ ծեսն ու արարողությունը կարևոր ազդակ եղած են կրոնական կյանքի արտահայտության, մասնավորաբար Տաճարի շինութենեն հետո, երբ հրեական ծեսը զարգացավ զոհերու մատուցմամբ, սաղմոսներու երգեցողությամբ ու սրբազան գիրքերու ընթերցմամբ:

Կարելի է հիշել նաև արևելյան խորհրդապաշտական կրոններուն հետ կապված կարգ մը ծիսակատարությունները որոնք ներշնչված էին բնության ինչ ինչ երևույթներեն, առնչված ըլլալով բնազանցական մտածումներու և խորհրդապաշտական—միսթիք—ապրումներու:

Քրիստոնեական կրոնը, Աստուծո բացառիկ հայտնությունն ու միջամտությունն է պատմության և մարդկային կյանքին մեջ: Քրիստոս, իր կյանքով և իր կյանքին հետ կապված հրաշալի դեպքերով, նոր հեղաշրջում մը բերավ Աստուծո և մարդոց հարաբերության մեջ: Քրիստոնեությունը՝ իր աստվածային ու բարոյական բացառիկ հանգամանքով, բացառիկ ծեսեր ստեղծեց՝ իր իմաստն ու խորհուրդը փոխանցելու մարդկության, անշուշտ

* Սերովբե արքեպիսկոպոսի սույն բանախոսությունը ընթերցվել է օգոստոսի 8—10 օրերին, Երուսաղեմի հայոց Պատրիարքարանում կայացած միաբանական համագումարում:

տարրեր առնելով Հին Ուխտի պաշտամունքի ձևերեն, վասնզի Քրիստոս ինք արդեն ըսավ թե.—«Ես ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ»:

Քրիստոնեական կրոնքն էր միայն որ ծեսն ու արարողությունը շատ բարձրորակ և արվեստի մակարդակի բարձրացուց, որպես միջոց գործածելով գրականություն, երաժշտություն, նույնիսկ՝ ճարտարապետություն և նկարչություն: Այս կապակցությամբ Ս. Եկեղեցվո մեծանուն Հայրերը խոր ներշնչմամբ և անսասան հավատքով, հորինեցին սրտագրավ աղոթքներ: Անոնք դասավորեցին պաշտամունքի հատուկ կարգեր՝ արտահայտելու համար քրիստոնեական հավատքը, Ավետարանի ուսուցումները և ներկայացնելու համար քրիստոնեական կյանքին խորհուրդը: Այսպես ուրեմն, հետզհետե ծնունդ առավ ծեսը ընդհանուր Եկեղեցվո մեջ:

Քրիստոնեական հավատքն ու ծեսը այնպես ընդելուզված և ներդաշնակված են իրար հետ որ, կրոնքին խորհուրդն ու հայտնությունը կարելի կըլլա ամբողջությամբ աստվածային շնորհներով զգալ:

Ծեսը առհասարակ Ս. Եկեղեցվո մեջ կրոնքին և խորհուրդներուն շտեմարանը ըլլալե զատ եղավ նաև քրիստոնեական կրոնքի դաստիարակության ազնվական միջոց մը: Հավատացյալները բնականաբար ծիսակատարությամբ ի հաղորդության կըլլային Աստուծո հետ և նաև այս միջոցավ կընդունեին Անոր խորհուրդները: Եթե Եկեղեցվո ծեսն ու արարողությունները մեծվայելուչ հանդիսադրությամբ կատարվին, կրոնական ապրումի և զգացումի վեհությունը կարտահայտեն անտարակույս և նույն դերը այսօր ալ կրնան և պետք է ունենան մարդոց կյանքին մեջ:

Համենայն դեպս, ինչ ալ ըլլա քրիստոնեական կրոնքը, Ավետարանի ճշմարտությունը, քրիստոնեական վարդապետությունը առավելաբար կզգացվին և կարտահայտվին խորհուրդներով որոնց արտաքին արտահայտությունը ծեսն ու արարողությունն են:

Ուրեմն ծեսը տեսանելի, արտաքին նշաններով արտահայտվող իբրև կրոնական արարողության մաս, մարդկային մեր միջոցներով կկիրարկվի, անոր ընդմեջեն անտեսանելի կերպով ստանալու համար Աստուծո շնորհները: Օրինակ, մկրտության առիթով, հոգևորականներս ջուր և Ս. Մյուռոն կհայթայթենք, սակայն Աստված երեխային քրիստոնյային շնորհը կու տա: Ս. Պսակի ատեն, հոգևորականներս ամուսնացյալ զույգը կմիացնենք, Աստված նոր ծնանելիք երեխային հոգին կու տա:

Քրիստոս պատարագված ատեն, մենք կհայթայթենք հաց և գինի, սակայն Քրիստոս ինք կպատարագվի և հացն ու գինին կխորհրդակերպվին Հիսուսի Մարմինի և Արյան:

Ուրեմն, ինչպես կտեսնվի, այս առնչությունը այնքան կարևորություն կստանա որ ծեսի վայելչությենեն կարևոր բան մը երբ պակսի, խորհրդակատարության ողջ վեհության և անոր խախտումին վտանգ կսպառնա:

Մեր Եկեղեցվո երանելի Հայրապետները, խոր իմաստությամբ և հայտնատեսական հոգիով օգտված են թե՛ արևելյան ժողովուրդներու և թե՛ Արևմտյան Եկեղեցիներու ծիսական լավագույն տարրերը առնելու, որոշ պատշաճեցումներով մեր ազգային դրոշմը դնելու անոնց վրա: Այնպես որ չափազանցած չենք ըլլար եթե հաստատենք թե, Հայաստանյայց Եկեղեցվո ծեսն ու արարողությունը նաև Եկեղեցիին ընդմեջեն և Եկեղեցիով հայ ժողովուրդի մշակութային ընդարձակ գանձարանին մեջ կարևոր և ընտիր հավելում մըն է:

Պարզ է այլևս որ անհարկի կամ սխալ կամ ըստ կամս փոփոխությունն-

ներ մեր առինքնող և միսթիք ծեսին վրա, հայտնապես նսեմացում կամ մշակութային մեր արժեքներուն մեկ մասին խաթարումը պիտի նշանակեր: Մանավանդ որ դարերու կրկնությամբ, զտմամբ, և հոգևոր կենսափորձի ենթարկված մեր ազգային Եկեղեցվո ծեսն ու արարողությունները իրենց վերջնական ձևին մեջ բյուրեղացած հոգևոր անստույգ գեղեցկություններ են: Հայաստանյայց Առաքելական մեր Ս. Եկեղեցին, սկզբնական շրջանեն իսկ, անսասան հավատքով և խոր իմաստությամբ օգտագործեց ծեսն ու արարողությունը՝ Աստուծո խոսքն ու պատգամը, հավիտենական կյանքի խոստումը փոխանցելու հավատացյալ ժողովուրդին: Արդ՝ մեզի կմնա անշուշտ զանոնք լրիվ ու նույն գեղեցկությամբ և անվթար կերպով փոխանցել ապագային:

Նշանակալից և ուշագրավ է այն պարագան որ քրիստոնեական սկզբնական շրջանի ժողովուրդները, իրենց հատուկ ձևով և ոգիով կազմեցին ու դասավորեցին իրենց ծեսերը. այդ է պատճառը որ քրիստոնեական Եկեղեցին ունեցավ հետզհետե 18 տեսակ ծեսեր, ինչպես բյուզանդական, լատինական, ասորական, եգիպտական, և մասնավորաբար հայկական ծեսերը, որոնք հիմնական կետերու մեջ հասարակաց գիծեր ունենալով հանդերձ, յուրաքանչյուր ժողովուրդ իր շրջանին, իր էության ոգին ու դրոշմը դրավ անոր վրա:

Հայաստանյայց Եկեղեցվո ծեսը քրիստոնեական ընդհանուր Եկեղեցվո պեսպես ծեսերուն մեջ ինքնահատուկ է և շեշտված իր ազգային նկարագրով և արտահայտությամբ:

Մեր Եկեղեցվո հատուկ ծեսը ծնունդ առավ և կազմավորվեցավ գիրերու գյուտով և հուսկ ապա Աստվածաշունչի թարգմանությամբ: Անկե սկսյալ էր որ Հայաստանյայց Եկեղեցին թե՛ իր վարդապետական ըմբռնումով և թե՛ իր յուրահատուկ ծեսով, ազգային ուրույն դրոշմ ստացավ և ազգայնացավ:

Մեր Ս. Եկեղեցվո երանյալ և հավատավոր Հայրապետները, Ս. Սահակեն, Ս. Մեսրոպեն, Գյուտ Հայրապետեն, Մանդակունիեն սկսյալ, մինչև Ներսես Շնորհալի Հայրապետ և բազմաթիվ հայտնի կամ անծանոթ վարդապետներ, շարականներով, հոգևոր երգերով, աղոթքներով դասավորեցին և կազմեցին մեր Եկեղեցվո ժամագիրքը, հոգերգեցին Շարակնոցը, Մաշտոցը, ձևավորեցին ամենօրյա պաշտամունքը, խորհրդակատարությունները ամենեն վայելուչ կերպով: Ծիսականորեն խոսելով, բոլոր արարողություններուն աստիճանական հառաջընթացը կհասցնե հավատացյալը բարձրագույն աստիճանին որ ս. պատարագն է, բոլորն ալ սակայն, արվեստի բարձր ճաշակով, աստվածահաճո եղանակով ու հավատքի հզոր արտահայտությամբ որպեսզի անշուշտ ճշմարտությամբ և երգոք հոգևորոք փառավորենք զԱստված համառոտելով հունկն հավատացելոց զբաանն ճշմարտության:

Ավելորդ չենք համարիր կրկնելու թե Հայաստանյայց Եկեղեցվո թե՛ ժամերգության կարգերը և թե՛ ս. պատարագը այնպիսի վայելչագեղ ճաշակով և բարձրարվեստ արտահայտություններով ձևավորված են որ հայ ժողովուրդը միշտ ալ իրապես անոնցմե կրցած է ներշնչվիլ և ընդունիլ քրիստոնեական կրոնի աստվածատուր սկզբունքները, ոգին, բարոյականը և ապրիլ այդ հրահանգներուն և առաքինի ազդեցություններուն շնորհին ներքո:

Կուզեմ մասնավորաբար շեշտել թե Հայաստանյայց Եկեղեցվո ս. պատարագը իր հիմնական գիծերուն մեջ, նույնը ըլլալով մեկտեղ քրիստոնեա-

կան ընդհանուր Եկեղեցվո պատարագներուն հետ, այնպիսի գեղարվեստական, վեհ և իմաստուն կերպով դասավորված և կազմված է, որ թե՛ իր արարողական ընթացքին մեջ և թե՛ իր աղոթքներով և հատկապես իր երաժշտությամբ բոլորովին բացառիկ ազդեցություն կգործե ունկնդիրներուն վրա և մասնավորաբար ներշնչման հոգեհորոգ և առատահոս աղբյուր կըլլա բոլոր հավատացյալներուն համար: Նույնը կրնանք ըսել անվարան մեր հոգևոր երգերուն, շարականներուն համար ալ որոնք ընտիր բանաստեղծությամբ, ճշմարիտ ներշնչմամբ և վեհին թևերուն վրա թռիչք կառնե, ընդելուզված անուշ երաժշտության սրբազան ապրումներով, առ Աստված երթալու, իր հետ տանելու հավատացյալ ժողովուրդին միտքն ու հոգին: Կըկրկնեմ, ամենքս ալ կրնանք վկայել այն մասին թե դարերու ընթացքին մեր ժողովուրդը իր քրիստոնեական ապրումներն ստացավ և զանոնք պահեց այդ սրբազան արարողություններուն ուշադիր հետևելով, զանոնք յուրացնելով և մանավանդ անոնց հավատարիմ մնալով:

Մինչև համաշխարհային առաջին պատերազմը, մեր Եկեղեցվո ծեսն ու արարողությունները, ս. պատարագը իր պաշտամունքներով գոհացում տվավ մեր ժողովուրդի կրոնական ապրումներուն, զգացումներուն և պահանջքներուն:

Համաշխարհային Ա պատերազմեն հետո, երբ բռնագաղթի պատճառով կոտորակվեցավ և ցրվեցավ մեր ժողովուրդը ամեն կողմ, փոխվեցավ իր ճակատագիրը, բոլորովին հեղաշրջվեցավ և փոխվեցավ նաև մեր Եկեղեցվո կյանքը: Իր բնիկ երկրեն դուրս, ընդարձակ երկիրներու մեծ քաղաքներուն մեջ, հեռավորությամբ իրարմե անջատված և հոգեպես տկարացած, ժողովուրդը չկրցավ ի հաղորդության մնալ ծեսին, արարողության, և անոնց բարիքին: Ծեսն ու արարողությունը ևս Եկեղեցվո միջոցավ չկրցան այն ուժեղ ազդեցությունը, այն շինիչ դերը ունենալ այնպես և այն աստիճանով կամ չափով որ անցյալին եղած էր:

Պատճա՞ռ:

Պակսեցան մեր եկեղեցիներուն մեջ, կամ տեղ տեղ արտակարգ պայմաններու բերմամբ գրեթե դադրեցան, ավանդական և կանոնական արարողություններու կատարումը: Սակայն անպայման պահպանվեցավ կիրակի օրերուն՝ ս. պատարագ մատուցանելու դրությունը:

Տարակույս չկա, որ միայն ս. պատարագով, առանց կրոնական դաստիարակության, առանց աղոթքներու, խնկաբույր արարողության հոգեվից մթնոլորտին, մեր ժողովուրդի կյանքեն հետզհետե դուրս կու գա կրոնքին բարերար ազդեցությունը:

Ներկայիս, հին դրությամբ կատարվող արարողություններ մի միայն պահպանված են սակավաթիվ երեք կամ չորս վանքերու մեջ: Այն եկեղեցիները որոնք առավելությունը և բարեբաղդությունը ունին կատարելու նաև կիրակնօրյա մյուս ժամերգությունները, անոնք այնպիսի ձևով մը կկատարվին որ բարերար ազդեցություն չեն ունենար ժողովուրդին վրա: Հավատացյալները գրեթե անհաղորդ կմնան կատարված աղոթքներուն ու երգված շարականներուն, նույնիսկ ս. պատարագի խորհուրդին:

Այս բոլորեն կհետևի որ այժմ մեր ժողովուրդը և եկեղեցական արարողությունները իրարու հետ չեն շաղախված և ծեսն ու արարողությունը իրենց օգտաշատ ազդեցությունը չեն կրնար ունենալ ժողովուրդի կյանքին ու անոր կրոնական զգացումներու զարգացման վրա:

Անշուշտ ասոնց պատճառը անպայման արարողություններու երկարու-

թյունը չէ և ոչ ալ երբեմն անոնց հասկնալի չըլլալու պարագան: Արարողություններ կկատարվին մեքենական ձևով մը: Ժողովուրդը՝ զրկված կրոնական դաստիարակութենեն, չի կրնար հաղորդ ըլլալ կատարված արարողություններուն և այսպեսով մեր ժողովուրդի կյանքին մեջ կրոնքին զգացումը հետզհետե կտկարանա և կպակսի:

Տրված ըլլալով որ անքնական պայմաններու և զանազան գաղթօճախներու մեջ կապրի հայրենի երկրեն դուրս և հեռու ապրող հայ ժողովուրդի կարևոր մեկ մասը և իր կրոնական ու հոգևոր ըմբռնումներուն և կյանքին վրա այսպիսի կարևորություն ունեցող հարցի մը կապակցությամբ, որպիսին է ծեսն ու արարողությունը, անոնց անվթար պահպանման համար կառաջարկենք.—

1) Ծեսը պետք է կատարվի հավատքով, ապրումով և երկյուղածությամբ, այնպես որ հավատացյալը զգա ազդումը ու շնորհը Աստուծո ներկայության: Քահանան պարզ ծիսակատար մը չըլլա այլ նույնանա խորհուրդին հետ զայն կարենալ փոխանցելու հավատացյալին:

2) Եկեղեցվո մեջ ստեղծել մթնոլորտ խորհրդավորության, լուռ երկյուղածության որպեսզի արարողության վսեմությունը զգալի և իմանալի դառնա:

3) Որպեսզի Հայաստանյայց Եկեղեցվո ծեսին և արարողության միօրինակությունը և միությունը պահվի, ծիսական բարեկարգության համար ըլլալիք որևէ տեսակի փոփոխություն կարգադրվի եկեղեցական բարձրագույն իշխանության կողմե և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի վավերացումեն ետք կիրարկության տրվի, և ոչ թե ըստ կամս իմաստի խաթարման աստիճան համառումներ և իբր թե տեղական պայմաններու համաձայն փոփոխություններ կատարվին:

4) Դպրեվանքերու մեջ պատրաստվին հավատավոր, նվիրյալ և իրենց պաշտոնին և հանգամանքին գիտակից հոգևորականներ, ու ցուցվի ծեսի և արարողության կատարման ձևերը, զարկ տրվի հոգևոր երաժշտության:

5) Հրատարակվին Հայց. Եկեղեցվո հոգևոր երաժշտության առձեռն գիրքեր որպեսզի անոնց ուսուցումը դյուրացվի և ընդհանրանա:

6) Ավելի ևս կազմակերպվին սարկավագներու և դպրաց դասերն որպեսզի միշտ վեհ, վայելուչ կատարվին ծեսերն ու արարողությունները, և երգեցողություններն Հայաստանյայց Եկեղեցվո մեջ:

7) Վարժեցնել ժողովուրդը որ ինքը ևս մասնակցի Եկեղեցվո պաշտամունքներուն, անոնց սորվեցնելով կարգ մը շարականներ, աղոթքներ և մանավանդ ս. պատարագի գլխավոր մասերը: Շատ անգամ աղոթքի կամ շարականի վերհիշումը անոնց մեջ կվառե հավատքի կայծը և զանոնք կկապե Եկեղեցվո: Դարերու ընթացքին մեր ժողովուրդին մեջ քրիստոնեական հավատքը առավելաբար պահպանված է ծեսի և արարողություններու միջոցավ: Մենք վստահ ենք որ ասկե հետո ալ ծեսը և արարողությունները նույն դերը կրնան կատարել եթե կատարվին հավատքով և վայելչությամբ:

Ժողովուրդը իր աղոթքները միախառնելով ծիսակատար հոգևորականներուն և դպիրներուն, իբրև հոտ անուշության, մեր սրտագին մաղթանքն է որ ծեսը և արարողությունը Աստուծո ամենառատ ողորմությամբ միշտ իրենց զորությունը, նշանակությունը և իմաստը ներգործեն ի պայծառություն մեր Եկեղեցվո և ի փառս Ամենասուրբ Երրորդության:



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՅԱԼԻՆ ԵՎ ԱՅՍՕՐ*

Կրոնական դաստիարակության անհրաժեշտությունը ստիպողական հանգամանք մը կստանա մանավանդ ներկա դարու մեջ, ուր «աշխարհը փոքրացեր է» ինչպես կըսեն: Ուր ազգեր և ժողովուրդներ սկսեր են միախառնվիլ, և փոխադարձ ազդեցությանց ենթարկել իրենց ժողովուրդներու ընկերային, քաղաքական, բարոյական և կրոնական ըմբռնումները, հավատալիքը և ավանդությունները: Ուր ընտանիքը և կրոնական համայնքը հետզհետե կկորսնցնեն իրենց հմայքը, և ընկերության հիմերը ապահովող ազդակներ ըլլալու երաշխիքը: Եվ ուր մանավանդ ընկերաբանական, քաղաքա-գիտական, նոր տեսություններ, ծննդաբանական նոր գյուտեր, ամբողջովին կհեղաշրջեն մարդուն մտածելակերպը, աշխարհայացքը իր գոյության, տիեզերքի գոյության, և այս բոլորով համադրված հարաբերությանց, և աստվածաստեղծ ծրագրյալ նպատակի մը իրականության մասին:

Հակառակ այս բոլորին սակայն, մեր քրիստոնեական հավատքը չէ լքած մեզ, չէ խաբած մեզ, և այսօր ևս կհավատանք պիտի չլքե մեզ հուսահատության անդունդի վիհին բերանը:

Ինչ քաոս ալ որ մարդու միտքը և կամքը հառաջացնեն, և մարդ ինքզինքը դնե ինքնակործանման անդունդի եզերքին, նորեն աստվածային միջամտություն մը զայն պիտի վերադարձնե ինքզինքին, հաստատելով կարգ ու կանոն, համաչափություն, և գիտակցություն տիեզերական կարգավորության մը, որուն մեջ մարդ արարածը ունի և պիտի ունենա իր տեղը և պատասխանատվությունը, համաձայն Աստվածաշնչական հայտնության:

Եկեղեցիին կոչումը և պարտականությունն է մարդուն և մարդկային ընկերության հայտարարել Աստվածաշնչական հայտնությունը և «իր դրախտը միշտ կորսնցնող» մարդը վերադարձնել ինքզինքին և «դեպի իր Հոր տունը»:

---

* Թորգոմ արքեպիսկոպոսի սույն բանախոսությունը ընթերցվել է օգոստոսի 8—10 օրերին Երուսաղեմի հայոց վանքում կայացած միաբանական համագումարում:

Հայ Եկեղեցին կոչումը, ընդհանրական Եկեղեցին սարվածքին մեջ, առաջնորդել է հայ մարդը, հայ ընտանիքը, հայ համայնքը և ազգը, դեպի իր գոյության նպատակակետը, «դեպի իր հոր տունը»:

Եվ այս պիտի ընե դաստիարակելով անհատը, ընտանիքը, համայնքը և ազգը:

Հայ Եկեղեցին դաստիարակչական այդ գործը կատարած է սերունդե սերունդ և ժամանակի պայմաններուն համաձայն:

* * *

Հայաստան աշխարհի նախաքրիստոնեական շրջանի դաստիարակության մասին անցողակի տեղեկություններ միայն ունինք: Ակնարկներ կգտնենք մեր պատմիչներու մոտ, մասնավորաբար Մովսես Խորենացիին, ի շարս կարգ մը հեքիաթներու և ժողովրդական առասպելներու:

Նախարարական տուներու զավակներու կրթությունը առ հասարակ կվստահվեր դայակի մը, որ ուրիշ նախարարական տոհմի մը անդամ կըլլար ընդհանրապես: Այդ ժամանակ դաստիարակության նյութերը կբաղկանային ռազմավարության վերաբերյալ մարզանքներե. օրինակ՝ ձի ընտանեցնել, ձի հեծնել, նետ ու աղեղ գործածել, ևն., նաև կրոնական հավատալիքներե:

* * *

Քրիստոնեության պետական կրոնք հռչակվիլը Տրդատ թագավորին կողմե 301-ին մեծ շրջադարձ մը եղավ հայ ժողովուրդի պատմության մեջ: Թեև Աստվածաշունչը այլևս հիմը կդառնար ժողովուրդի կենցաղին, սակայն հայերեն գիրերու չգոյության պատճառով հունարեն կամ ասորերեն քարոզված Աստվածաշունչը և քրիստոնեական վարդապետությունը առեղծված կմնային ժողովուրդի մեծամասնության համար: Այս քարոզության շնորհիվ չէ՞ր որ քրիստոնեությունը տարածվեցավ Հայաստանի մեջ: Ժողովուրդը թեև քրիստոնյա, կշարունակեր իր հեթանոսական բարքերը, առասպելները, և ոմանք գաղտնաբար նույնիսկ պաշտամունքի սովորությունները: Սկզբնական շրջանին քրիստոնեությունը համատարած ազդեցություն մը չունեցավ ժողովուրդի դաստիարակության վրա:

Ավետարանի պայքարը հառաջ տանելու համար Ս. Գրիգոր Լուսավորիչ հեռատեսությամբ և ողջմտությամբ շարժեցավ երբ քրմական ընտանիքներու զավակները առավ և զանոնք դաստիարակեց քրիստոնեական սկզբունքներու հիման վրա: Այս վիճակը շարունակվեցավ մինչև Ե դար երբ երկրորդ մեծ անկյունադարձը տեղի ունեցավ գիրերու գյուտով:

* * *

Աստվածաշունչի ի նպաստ պայքարող մըն էր Մեսրոպ Մաշտոց, որ Գողթան գավառի իր այցելութենեն ետք միայն անդրադարձավ սեփական գիրեր ունենալու անհրաժեշտության: Բարեբախտաբար հովանավորությունը վայելեց երկու ողջմիտ առաջնորդներուն՝ Սահակ կաթողիկոսին և Վռամշապուհ թագավորին: Կարելի է ըսել որ Հայ Դպրոցի և դաստիարակության պատմությունը կսկսի անոր գիրերու գյուտով: Մեսրոպ Մաշտոց կհանդիսանա առաջին ուսուցիչը, մանկավարժը և դպրոցի հիմնադիրը, որ ՀԱՅ ԳԻՐԸ սորվեցուց ՀԱՅ պատանիներու ՀԱՅ ԴՊՐՈՑԻ մեջ. այսպիսով ան ազատագրեց հայ պատանիներու միտքերը հունական, ասորական և այլ մշակույթներու տիրապետութենեն:

Հայ ժողովուրդը «սրտալիր ուրախությամբ», ինչպես Կորյուն կըսե, ընդունեց Մեսրոպի գյուտը, անոր միջոցավ վերակերտեց իր հոգին և միտքը քրիստոնեական սկզբունքներու հիման վրա և անոր կառչած մնաց միշտ:

Ս. Մեսրոպ իր դպրոցներեն շրջանավարտ փայլուն երիտասարդները կղրկե Եդեսիա, Անտիոք, Աղեքսանդրիա, որոնք ուսումնական կեդրոններ էին: Հայաստանի ամբողջ տարածքին վրա բազմաթիվ դպրոցներ բացվեցան, և ուսման հիմը Աստվածաշունչն էր:

Արշակունյաց հարստության անկումին հաջորդող դժբախտ դեպքերուն պատճառով կարելի չէ եղած շարունակել և ընդլայնել Ս. Մեսրոպի հիմնած դպրոցներու ցանցը: Հիմնական դաստիարակության գործը սահմանափակվեցավ, և վանական դպրոցները դարձան կրթության օճախներ: Ե դարու վերջավորութենեն մինչև ԺԹ դարու կեսերը վանական դպրոցներու պատմությունն է որ ունինք, իրենց վերիվայրումներով:

* * *

Պատմության ընթացքին բացառիկ գագաթներու հասան Սյունյաց և Տաթևի վանքերը և Գլաձորի համալսարանը: Իսկ Սանահինի և Հաղբատի նման վանքեր միշտ ունեցած են իրենց դպրոցները և հաճախ փայլուն արդյունքներ տված:

Այս շրջանի դաստիարակության հիմնական նյութերը կկազմեին Աստվածաշունչը, պատմություն, փիլիսոփայություն, քերականություն, նաև մասամբ արտաքին գիտություններ—ուսողություն, գիտություն, աստղաբաշխություն, բժշկություն և այլն:

ԺԱ դարեն սկսյալ հայոց համար նոր շրջան մը կսկսի Կիլիկիո մեջ: Այդտեղ կարելի կըլլա ռուբինյան հարստությունը հիմնել: Եվ Կաթողիկոսական Աթոռն ալ Անիեն Հռոմկլա և ապա Սիս կփոխադրվի: Այնտեղ ևս կշինվին վանքեր և դպրոցներ: Այդ վանքերը բավական բարգավաճ վիճակ ունեին: Ս. Ներսես Շնորհալի և Ներսես Լամբրոնացի և բազմաթիվ նման դեմքեր արգասիքն են իրենց շրջանի դաստիարակության: Կիլիկիո քաղաքական անկումեն ետք —1375—և Կաթողիկոսական Աթոռին Էջմիածին վերադառնալեն հետո—1441—, վանքերը շարունակեցին իրենց գոյությունը, համեստ արդյունքներով:

Հայաստանի մեջ Գլաձորի համալսարանը Եսայի վրդ. Նշեցիի օրով—14-րդ դար—ուսումնական բարձր մակարդակի հասավ, սակայն հազիվ 60 տարվան կյանք մը ունեցավ: Նշեցիի աշակերտներեն Հովհաննես Որոտնեցին Տաթևի վանքին մեջ շարունակեց անոր գործը: Իսկ եռամեծար Գրիգոր Տաթևացի վարդապետը, արևմտյան հասկացողությամբ ծրագրյալ կըրթության զենքերով զինեց իր աշակերտները, պաշտպանելու համար Հայաստանյայց Եկեղեցին լատինական միսիոնարներու և ունիթոռներու ներխուժումին դեմ:

Սելճուգյան, մոնկոլյան և ապա թրքական անհատնում արշավանքներուն, գրավումներուն և ահավոր քանդումներուն պատճառով կարելի չէր կանոնավոր դաստիարակություն տալ հայ մանուկներուն: Այդ սարսափազդու տարիներուն վանքերը իրենց աշխատանքով, հոգ չէ թե բացառիկ արդյունք տված չեն, դաստիարակության ջահը՝ հայ լեզուն ու գրականությունը, վառ պահած են:

Դաստիարակության գործով հատկապես զբաղած և գրավոր վկայություններ թողած են 1) Ս. Ներսես Շնորհալի որ աշխատանք տարավ մա-

նուկները և ռամիկ ժողովուրդը դաստիարակելու իր քերթվածներով, աղոթքներով... 2) Հովհան և Մովսես Երզնկացիք՝ որ ծնողաց վրա պարտականություն կդնեն մանուկները դաստիարակել... 3) Գրիգոր Տաթևացին՝ որ երեք մասի կբաժնե նպատակը դաստիարակության.

ա) Սնուցանել մանուկը.

բ) Դաստիարակել բարեպաշտությամբ.

գ) Արհեստ մը սորվեցնել, որպեսզի չգողնա:

Տաթևացիի «Քարոզներու» հատորին մեջ թելադրված այս դաստիարակությունը համապատասխան է հետամուտ ըլլալու և անհրաժեշտությունը շեշտելու հայ մանուկներու՝ իմացական, գիտական կրթության. կրոնական կրթության, և բարոյական, ընկերային կրթության:

* * *

ԺԹ դարուն սկիզբները կսկսին նաև համեստ ծխական դպրոցներ: Գյուղերու մեջ քահանաներ և տիրացուներ մանուկներուն հազիվ սաղմոս, նարեկ կարդալ կսորվեցնեին: Գրել կարդալե զատ որևէ ծրագիր չկար:

Արևելահայ կրթական զարթոնքը սկսավ նախ քան արևմտահայությանը: Մոսկվայի Լազարյան ճեմարանը—հիմնված 1815-ին—առաջին արդիական կրթական օճախներեն էր: 1828-ին, Արևելահայաստանը Ռուսաստանի պետական կազմի մեջ մտնելով, պայմանները համեմատաբար ավելի նպաստավոր եղան: Թիֆլիսի Ներսեսյան վարժարանը արևելահայ մտավորականության աղբյուրը եղավ:

Ռուսական և գերմանական ազդեցությունը տիրապետեց արևելահայ զարթոնքին վրա:

1789-ի ֆրանսական հեղափոխությամբ սկսող և ԺԹ դարուն ամբողջ Եվրոպայի վրա տարածվող ազգային ազատագրական պայքարները, ճարտարարվեստի հեղափոխությունը և դպրոցներու վերածնունդը իրենց ազդեցությունը ունեցան նաև հայ ժողովուրդի արևմտահայ հատվածի կյանքին վրա:

Պոլսեն հայ ամիրաներու և հարուստ վաճառականներու զավակները, ԺԹ դարուն սկիզբները, Եվրոպա, հատկապես Ֆրանսա արդեն սկսած էին երթալ համալսարանական կրթություն ստանալու համար: Անոնք իտեալներով լեցված Պոլիս վերադարձան և անմիջապես լուսավորության աշխատանքներու սկսան:

1853-ին առաջին ուսումնական խորհուրդը կազմվեցավ Պոլսո մեջ, ուր 1838-են ի վեր կգործեին Սկյուտարի ճեմարանը և Նուպար-Շահնազարյան վարժարանը:

Թեև ուսումնական խորհուրդը երկար կյանք չունեցավ Պոլսո մեջ, սակայն այնպիսի կրթական ոգևորություն մը ստեղծվեցավ, որ կարճ ժամանակամիջոցի մը մեջ հիմնվեցան բազմաթիվ կրթասիրական միություններ, նոր տպարաններ և գրադարաններ: Եվրոպական գրականութենեն թարգմանություններ հրապարակ ելան և սկիզբ առավ ռոմանթիկ շարժումը, և բազմաթիվ թերթեր սկսան հրատարակվիլ: Այս միությունները անմիջապես ձեռնարկեցին թաղային վարժարաններ բանալու գործին: Վարժարանները անխտիր կերպով կընդունեին թաղային եկեղեցվո կից, անոր հովանավորության ներքև և ծախքերը կհոգացվեին Եկեղեցվո գանձեն: Այս դպրոցները և կրթական դրությունը կշարունակվին մինչև այսօր Պոլսո մեջ:

Կրթական այս շարժումը Պոլսո մեջ սահմանափակված չմնաց այլ տա-

ռածվեցավ Հայաստանի գավառներուն մեջ ևս: Դպրոցներ բացվեցան Խարբերդ, Մալաթիա, Կարին, Վան, գրեթե բոլոր գավառներուն մեջ:

Տոքթ. Սերովբե Վիչենյանի—Սերվիչեն—«Մանկանց խնամատարության հատուկ բնական, բարոյական և իմացական հրահանգ» (1844), Նիկողայոս Զորայանի «Նկարագիր ազգային դաստիարակության» (1849), և անոնց հաջորդող մանկավարժներու գիրքերուն շնորհիվ արդի եվրոպական դրությունը ներմուծվեցավ Հայաստան և անոնց շնորհիվ վերջ գտավ «միսը քեզի, ոսկորը ինձի» դրությունը:

Կրթական ոգևորության արդյունք դպրոցները հայ գիրի ու գրականության վերածնունդի վառարաններ եղան ԺԹ դարու երկրորդ կիսուն: Բացառիկ արդյունքներ տվին Պերպերյան վարժարանը—հիմնված 1876-ին—և Կեդրոնական վարժարանը—հիմնված 1886-ին—. իսկ գավառի մեջ փայլեցավ Կարինի Սանասարյան վարժարանը: Վերածնունդի զավակները ստեղծեցին իրապաշտ գրականությունը և ապա Արվեստագետ սերունդի գրականությունը:

Վերածնունդի շրջանի դպրոցները եվրոպական արդի դրությունը գործածած են, իսկ դասավանդված նյութերը առհասարակ կըլլային՝ հայերեն, տաճկերեն և ֆրանսերեն լեզուները. թվաբանություն, գիտություն, աշխարհագրություն, ազգային-եկեղեցական պատմություն, կրոնագիտություն, եկեղեցական և ազգային երաժշտություն.. գծագրություն, գեղագրություն...

Իսկ դպրոցները եկեղեցական և անոր կից ըլլալուն՝ աշակերտները կմասնակցեին նաև արարողությանց: Գրեթե նույն կացությունը կտիրեր Պոլսո և գավառի մեջ:

Կրթական այս վերածնունդի արդյունքներեն մին եղավ քաղաքական շարժումը թե՛ գավառի և թե՛ Պոլսո մեջ:

Վերածնունդի այս խանդավառությունը երկար չտևեց, որովհետև շուտով վրա հասան Օսմանյան Կայսրության ոճրալիր արարքները, որոնք իրենց գագաթնակետին հասան 1915-ի եղեռնին: Այս մեծ աղետը վերածնունդի շարժումը սպաննեց, անցյալի հետ կապը կտրեց վերապրողներուն համար:

* * *

Արևելահայ կրթական զարթոնքին արդյունքներեն մին եղավ վերակազմակերպումը Էջմիածնի Դպրեվանքին Գեորգ Դ կաթողիկոսի ջանքերով: Դպրեվանքն ալ վերանվանվեցավ Գեորգյան ճեմարան:

Գեորգյան ճեմարանը իր գագաթնակետին հասավ 20-րդ դարու սկիզբները երբ ունեցավ շրջանավարտներու ցանց մը, որոնք Գերմանիա ուսանելով մասնագիտացան լեզվաբանական և պատմա-բանասիրական, իմաստասիրական և երաժշտական ճյուղերու մեջ, և Էջմիածին վերադարձան ուսուցանելու: Անոնցմե մին էր Գարեգին արք. Հովսեփյանց, ինչպես նաև Երվանդ Տեր-Մինասյան, Գալուստ Տեր-Մկրտիչյան, Կոմիտաս Վարդապետ և ուրիշներ, որոնք ոչ միայն լավ գործեր արտադրեցին այլ նաև կարելի է նկատել զանոնք իբրև հիմնադիրները Հայաստանի արդի հայագիտական զարթոնքին:

* * *

Արևմտահայ կրթական ու մտավորական զարթոնքին մեծ արդյունքներեն մին եղավ Արմաշու Դպրեվանքին հիմնադրությունը, Խորեն Աշըգյան

պատրիարքի օրով 1889 սեպտեմբեր 18-ին, Մաղաքիա վարդապետ Օրմանյանի տեսչությամբ: Թեև ազգային վարժարանները կրոնագիտության դասընթացքներ ունեին, բայց միայն տարրական էին: Հայաստանյայց Եկեղեցին չէր կրնար մասնակից չըլլալ այդ զարթոնքին, հետևաբար պետք էր վերականգնել հին վանական վարժարանները, հասցնելու համար գիտնական հոգևորականներ: Տեսուչ Մաղաքիա վարդապետի Պոլսո պատրիարք ընտրվելեն ետք, Եղիշե վրդ. Դուրյան տեսչության պաշտոնը կստանձներ: Շրջանավարտ սաներ, աբեղաներ, կղրկվեին Եվրոպա, հատկապես Գերմանիա, բարձրագույն ուսում ստանալու...: Արմաշի Դպրեվանքը իր արդյունավետ գործունեությունը շարունակեց մինչև համաշխարհային առաջին պատերազմը:

Երբ Ոսկեդարու նման զարթոնքի մը ճառագայթները երևնալ սկսած էին, Մեծ եղեռնը այդ ալ մարեց:

Արմաշու շրջանավարտները իբրև առաջնորդներ պաշտոնավարեցին Օսմանյան տերության թեմերուն մեջ, մինչև եղեռն, որմե վերապրողները գաղթաշխարհի մեջ շարունակեցին ծառայել: Այս ծառայության մեջ ամենեն աչքառուն այն իրողությունն է որ Արմաշի ոգին և անոր սաները եղան նախաձեռնողները վերականգնելու Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը և ընծայարանը, Դուրյան պատրիարքի օրով, ինչպես նաև Անթիլիասի Դըպրեվանքը, և Պոլսո Ս. Խաչ Դպրեվանքը՝ Գարեգին Խաչատուրյան պատրիարքի օրով:

* * *

Գաղթաշխարհը երկու հատվածներու պետք է բաժնել. Արևելք և Արևմուտք: Արևելքի մեջ, հայությունը պահած է իր լեզուն իբրև առօրյա, սովորական հաղորդակցության միջոց: Իբրև փոքրամասնություններ՝ բացած են վարժարաններ՝ ուր կդասավանդվին հայերեն լեզուն, պատմությունը, կրոնը և այլ նյութեր: Սակայն այս վարժարանները միշտ ենթակա եղած են տեղական սահմանափակումներու և այդ սեղմումները օրե օր բազմացած են: Այս սահմանափակումներու արդյունք եղած է հիմնադրությունը կիրակնօրյա վարժարաններու, Հալեպի թեմեն սկսելով 1927—1930 թվականներուն:

* * *

Այսօր կրոնական դաստիարակություն ընելով պիտի հասկնանք մտահոգությունը ունենալ պատրաստելու գիտակից, անհրաժեշտ ծանոթություններով օժտված, և իրենց հավատքը կիրարկող հայ քրիստոնյաներ: Եվ այս՝ երկու գլխավոր բաժանումներով.

ա) Ընդհանուր ժողովուրդի կրոնական դաստիարակությամբ.

բ) Մասնագիտացած դպրեվանքային դաստիարակությամբ, կրթյալ հոգևորականներ պատրաստելու նպատակով:

Ընդհանուր հայության կրոնական դաստիարակության պարագային դժվար է հիմնական ծրագիր մը կազմել, որովհետև յուրաքանչյուր աշխարհագրական շրջանակ տարբեր պահանջքներ կներկայացնե ընկերային, տնտեսական և քաղաքական կացություններու համաձայն:

Միջին Արևելքի մեջ հայ վարժարանները որոշ դաստիարակություն մը կու տան, բայց բավարար չէ: Ավելին չեն կրնար ընել տեղական սահմանափակումներու պատճառով, հետևաբար զայն պետք է լրացնել կիրակնօրյա վարժարաններով:

ՀԱՅԿ.ՍԱՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՍԼԻԴԵՄ ԱՅԻ

Արևմուտքի մեջ ավելին պետք է կատարել, որովհետև պետական և այլ վարժարաններու մեջ հայկական կրոնական դաստիարակություն չի տրվիր, հետևաբար Եկեղեցին այդ պակասը լրացնելու մտահոգությունը պետք է ունենա:

* * *

Կրոնական աղանդներու, «հոգևոր վերածնունդի» շարժումներու դիմաց, հայ երիտասարդներ իրենք զիրենք հաճախ կորսված կզգան և հոսանքներե տարվելով կհեռանան Եկեղեցիեն: Եթե մեր նախնիք արյունով պաշտպանեցին իրենց հավատքը, այսօր միայն գիտությամբ կարելի է ընել զայն: Այդ գիտությունն ալ մարդկութենեն սկսյալ մինչև մահ շարունակական գործողություն մը, ապրելակերպ մը պետք է ըլլա: Կիրակնօրյա վարժարաններու ծրագիրները պետք է զգուշությամբ կազմակերպվին, գործադրվին, որպես զի բողոքական ազդեցութենե հեռու մնան և ըլլան կրթօճախներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո:

* * *

Դպրեվանքներու պարագան տարբեր է: Ընդհանրապես ենթակա չեն տեղական սեղմումներու, սակայն ունին ուրիշ տեսակի դժվարություններ: Ինչպես՝

1) Եկեղեցվո և եկեղեցականության հանդեպ հետաքրքրության նվազում, զանազան պատճառներով՝ տնտեսական և ընկերային:

2) Տիպար իտեալ Առաջնորդողներու և դաստիարակներու պակաս:

3) Դպրեվանքները նպաստամատույց և որբախնամ հաստատությանց վերածելու մտահոգություն, որոնք կազդեն վարժարանի կրթական մակարդակին, ուսուցիչներու և աշակերտներու որակի տեսակետեն:

Դպրեվանքներու ուսումնական մակարդակը վերականգնել անհրաժեշտ է: Հետևաբար կարգ մը հիմնական բարեփոխություններ պետք է կատարել անոնց կենցաղական և ուսումնական դրության մեջ:

Ուսումնական ծրագիրը գոնե «գոլեճ»ի մակարդակին պետք է հասցնել: Եթե մեր այժմու երեք դպրեվանքները այդ մակարդակին հասնին՝ կարելի պիտի ըլլա չորրորդ մը հիմնել, ուր երեքին շրջանավարտները շարունակեն ուսանիլ ամերիկյան սեմիներիի մը մակարդակով:

* * *

Հայ դպրեվանքներուն ուսումնական մակարդակը բարձրացնել անհրաժեշտ է, որովհետև

ա) Այսօր ընդհանուր ուսման մակարդակը ընկերության բարձր է, և հոգևորականներու ուսումը՝ համապատասխան կամ ավելի պետք է ըլլա:

բ) Միջեկեղեցական հարաբերություններու մեջ Հայ Եկեղեցին ներկայացնող աշխարհական և եկեղեցական ներկայացուցիչներ պետք է ունենանք, որոնք մասնագիտացած ըլլան զանազան մարզերու և կրթանքներու մեջ, որոնցմով մտահոգ է աշխարհ և որոնց քրիստոնեական լուծումները գտնելու և կիրարկելու կհրավիրվի յուրաքանչյուր կրոնական համայնք:

Բարեփոխումները պետք է ըլլան կանոնավոր, ծրագրված, և հետապընդվին հետևողականորեն: Կառաջարկենք որ կազմվի կեդրոնական մար-

մին մը բաղկացած հոգևորականներե և աշխարհականներե, որոնք կազմեն ուսման ծրագիր մը մեր դպրեվանքներուն համար, և վերահսկեն անոր գործադրության Էջմիածնի, Անթիլիասի և Երուսաղեմի մեջ, և ապագային ուր որ դպրեվանք բացվի:

* * *

Եթե Հայաստանյայց Եկեղեցին թերանա իր կոչումին մեջ և չհետապնդե իր խնամքին հանձնված հոտին դաստիարակության գործին կազմակերպումը, և եթե առավել կարևորությամբ չհետամտի իր հոգևոր սպասավորներու պատրաստության և կրթության որակը բարձրացնելու, այն ատեն գառնուկի մորթով գայլեր պիտի մտնեն հոտին մեջ: Եվ մեր Տիրոջ խոսքին համաձայն, մեր տունին կործանումը պիտի լինի «չար քան զառաջինն»:

Աշխարհացրիվ հայ ժողովուրդի պատմության մեջ, եղած են փորձեր մեր տունը ինք իր մեջ բաժանելու և մեր հոտը պառակտելու: Ներկա ժամանակներու մեջ և ապագային ևս, արտաքին ուժեր և հանուն «հոգիներու փրկության» խոսող խումբեր պիտի չդադրին մեր տունին շուրջը դառնալու, և մեր զավակներուն մոտենալու, որպես զի փորձեն թե քանիները պիտի կարենան որսալ և խարբալել:

* * *

Անհրաժեշտ է այսօր մեր ժողովուրդին մեջ կրոնական դաստիարակությունը կազմակերպել, և զայն առողջ ու հաստատուն հիմերու վրա դնել:





ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՐԳ ՈՒ ՍԱՐՔԻՆ ՎՐԱ*

Ի՞նչ պատկեր կներկայացնե Հայց. Եկեղեցին, արտասահմանի մեջ այսօր: Այս մասին խոսելու համար պետք է հետադարձ ակնարկով վերադառնալ տխուր թվականի մը, Հայկական Եղեռնին:

Համաշխարհային Ա պատերազմեն, Ապրիլ 1915ի աղետեն և հայոց բռնագաղթեն առաջ, դարերե ի վեր իր ուրույն կազմակերպչական վարչամեքենայով Հայց. Եկեղեցվո կրած վնասը, այս թվականեն ետքը շատ խոշոր է: Կ. Պոլսո Պատրիարքությունը իր նախկին ազդեցութենեն տկարացավ: Իսպառ փակվեցավ Արմաշի վանքը: Գաղթականությամբ տեղափոխվեցավ Սսո Կաթողիկոսությունը: Կորսնցուցինք տասնյակներով, պատմական Հայաստանի մեջ փառավոր, մշակութային հոգևոր անցյալ ունեցող վանքեր և հարյուրավոր եկեղեցիներ: Զանազան վայրերու մեջ նահատակվեցան հարյուրավոր հայ եկեղեցականներ: Անշուշտ «Եթէ ոչ պահէ Տէր զտունն, ի նանիր վաստակին շինողք կամ բնակիչք նորա»: Եթե Քրիստոս ինք հիմնած չըլլար Հայց. Եկեղեցին, ուրիշ ոևէ հաստատության նման վերոհիշյալ հարվածներուն ներքև ի հիմանե պիտի սարսեր, ճարճատեր:

Ավելի քան տասնյոթը դարերու, պատմական, հոգևոր, մշակութային մեծապայծառ կենսափորձ անցուցած և այլ բազմաթիվ քաղաքական վերիվայրումներու ընթացքին աներեր մնացած Հայց. Եկեղեցին, ուրեմն հայ ժողովուրդին հետ անճիտվելու, սպառելու վտանգին ենթարկվեցավ քսաներորդ դարու առաջին քառորդեն ետք:

Հաղթանակներով և պարտություններով իր արյունոտ պատմությունը նշանավորած հայ քրիստոնյա և խորապես հավատացյալ ժողովուրդը, ամբողջ իր պատմության երկայնքին, այնքան խոշոր վնաս, ավեր, կորուստ չէր ունեցած, որքան այս թվականին: Հայց. Եկեղեցին նմանապես: Իր հավատքին համար մարտիրոսացած է ամբողջ ժողովուրդ մը: Ցեղասպանության անորակելի արարքին համար, նահատակված է ամբողջ երկիր մը, ժողովուրդը և անոր հոգևորականության կարևոր մասը:

* Զավեն արքեպիսկոպոսի սույն բանախոսությունը ևս ընթերցվել է օգոստոսի 3—10 օրերին Երուսաղեմում գումարված միաբանական ժողովում:

Այս էր տխուր պատկերը վեց տասնամյակներ առաջ:

Պատմական այս փաստին, անմխիթար այս իրադրության առջև ձեռնածալ չմնաց սակայն աղետեն վերապրող անձնազոհ հայ հոգևորականությունը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եթե կորսնցուցինք Արևմտյան Հայաստանը, մնաց սակայն պատմական Հայաստանի մեկ տասներորդը հաշվող Արևելյան Հայաստանը որ, 1920-են ի վեր կկոչվի Խորհրդային Հայաստան: Հայց. Եկեղեցին բաղդ ունեցավ, քանի որ այս համեմատաբար փոքր տարածությամբ Հայաստանի կրծքին վրա, Արարատյան դաշտին մեջ ունինք, Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ուր հաստատված է Առաքելական պատմական հաջորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը: Խորհրդային Հայաստանի, Սովետական Միության զանազան շրջաններու մեջ ապրող հայ ժողովուրդի, անոր հոգևոր կյանքին և հոն գոյություն ունեցող Հայց. Եկեղեցվո կյանքին և գործունեության մասին խոսիլ, ինձի պարտականություն տրված խոսքին ծիրեն դուրս կգտնվի: Մենք այստեղ կքննարկենք սոսկ արտասահմանի մեջ Հայց. Եկեղեցվո վիճակը:

Հայ ժողովուրդի և Հայց. Եկեղեցվո պատմությունն ու կյանքը,—ինչպես կրկնված է ստեպ—այնպես սերտորեն ընդելուզված են իրար հետ որ կարելի չէ խոսիլ մեկուն մասին, առանց նկատի առնելու մյուսը: Անանջատելի միություն մը և ամբողջություն մը կկազմեն անոնք:

Արդ անցնող վաթսուն տարիներուն, գաղթական հայ ժողովուրդը իր ջանասիրության, հարատևության, պարկեշտության, վստահելիության և այլ առաքինություններու հիմամբ, ուրախ ենք վկայելու թե ի սփյուռս աշխարհի ընկերային, տնտեսական, մշակութային հրաշալի հառաջդիմություններ արձանագրած է իր կենսունակության ուժեղ և նոր մեկ ապացույցը տալով: Սակայն ցավոք սրտի, կարելի չէ հաստատել թե Հայց. Եկեղեցին, հայ ժողովուրդի հառաջդիմության հետ քայլ պահած ըլլա: Ինչո՞ւ: Վերին աստիճանի հետաքրքրական հարցում մըն է ասիկա արդարև: Չի բավեր անշուշտ ըսել թե Հայց. Եկեղեցվո կորուստը ավելի խոշոր էր, թե իր նահատակ հոգևորականներուն թիվը համեմատաբար ժողովուրդի թիվին ավելի էր: Այս պահուս ճիշտ այս հարցը քննելու վրա ենք արդեն:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ԽՈՇՈՐ ՄԱՅՐ ՑԱՄԱՔԱՄԱՍԵՐ

Գաղթականության հաջորդող տասնամյակներուն, մինչև համաշխարհային Բ պատերազմի ավարտը, արտասահմանի մեջ հայ ժողովուրդի վերապրող մասին, քանակական բաշխումի պատկերը մոտավորապես հետևյալ ձևով կներկայանար: Մերձավոր Արևելքի Արաբական կիսանկախ կամ հոգատար պետություններու հովանիին տակ եղող և պատմական Հայաստանի դրացի երկիրներուն մեջ, հայահոծ գաղութներ ուր արդեն բռնագաղթեն առաջ, հայկական գաղթօճախի փոքր բջիջներ գոյություն ունեցած են, համայնքային և եկեղեցական կյանքով և ուրույն օրենսդրությամբ, այսինքն Ազգային Սահմանադրության կիրարկումով:

Հայ Եկեղեցին այս հայահոծ շրջաններուն մեջ գործեց, ջանալով դար-

մանել, հայ ժողովուրդին վրա գործադրված աղետը: Այսինքն խնամատարական, որբահավաքի, մարդասիրական, մխիթարական ամոքումի գործ կատարեց: Նախկին փոքր կառույցներով եկեղեցիները ընդլայնեց և նոր շրջապատին մեջ ջանաց ընձյուղներ արձակել և իր ներկայությունը զգացնել:

Հրապարակին վրա կերևին վերապրող քանի մը մեծանուն հոգևորականներ, ինչպես Երուսաղեմի Ամեն. Պատրիարքը, և Սուրիո, Լիբանանի, Պարսկաստանի, Ռումանիո, Հունաստանի, Եգիպտոսի թեմերու հոգելույս առաջնորդները: Սակայն նոր սերունդը հինին առնչող կապը տկար է: Աշխարհի չորս կողմը ցրված, հովիվը զարնված և հոտը խուճապահար եղած հայության և Հայց. Եկեղեցվո բազմաթիվ կարիքները հոգալու համար միջոցները անբավարար են, վերքը շատ խորունկ է: Հոգևոր ասպարեզին ծառայելու պատրաստակամները քանակությամբ անբավարար են: Ավելին՝ նորօծյալ հոգևորականները կպարտավորվին ինքզինքնին, իրենց մտավորական ուժն ու ժամանակը սպառել միայն ու միայն զանազան թեմերու վարչական գործերուն մեջ: Այսպիսի պայմաններու մեջ սակավաթիվ հայ եկեղեցականներ կհաջողին Աստվածաբանական օտար համալսարաններե վկայվիլ:

Այնքան ատեն որ հայությունը մեծ թվով կապրեր Մերձավոր Արևելքի կիսանկախ Արաբական երկիրներուն մեջ, իր հետ բերած ըլլալով բնիկ երկրեն իր տոհմիկ ավանդությունները, սովորությունները ու բարքերը, տեսակ մը երկարաձգումն էր Հայկական բարձրավանդակին վրա իր անցուցած դարավոր կյանքին: Սակայն արտագաղթին բերմամբ և հսկա տարածություններու վրա ցրվումով, հետզհետե կկորսնցնե վերոհիշյալները, շփման մեջ մտնելով այլ բարքերու և մշակույթի տեր ժողովուրդի հետ և բնականաբար կտուժե նաև Հայց. Եկեղեցին: Նաև բնական կերպով, հին սերունդի անդամներուն ընդմիշտ մեկնելովը այս աշխարհեն:

Ցորչափ վերապրող հայությունը կապրեր պատմական Հայաստանի դրացի մահմետական երկիրներուն մեջ,

1.—Կվայելեր ուրույն փոքրամասնության կամ Միլլեթ-ի մը առանձնաշնորհումները, ինչպես կրոնական Ատյան, հատուկ օրենսդրություն, պետութենեն անձնական իրավիճակի ճանաչում, ժողովներու ընտրություն և վավերացում պետութենեն, ևն:

2.—Բնիկ ժողովուրդին հետ կրոնական տարբերություն և միջամասնություններու անգոյություն:

3.—Ազգային կյանքը գոյություն ուներ սոսկ ազգային Եկեղեցիի և ազգային վարժարանին առանձքին շուրջ. կերպով մը դարձյալ շարունակությունը Հայաստան աշխարհի մեր նախկին կյանքին: Սակայն հատկապես համաշխարհային Բ պատերազմեն ետք, Մերձավոր Արևելքի Արաբական աշխարհին մեջ գոյություն առած ընկերային, տնտեսական, մշակութային, ռազմական, կրոնական մոլեռանդական և այլ մեծ շարժումներուն պատճառավ, կտեսնենք թե արտասահմանի Հայոց կյանքին ամենեն կարևոր դեպքը կպատահի. ներգաղթ դեպի Սովետական Հայաստան: Հետո հարատև հոսք մը ծայր կուտա դեպի Արևմտյան կողմն աշխարհի: Առ այս, կպարպվին վաղուց ի վեր կազմակերպված, ազգային վարժարաններու ցանցով, մշակութային հարկերով և մանավանդ ազգային-եկեղեցական հատուկ կյանքով, եռուն գործունեությամբ հայ գաղութները և կստվարացնեն Եվրո-

պայի, երկու Ամերիկաներու, Գանատայի, Ավստրալիո մեծ ցամաքամասերու հայության թիվը:

Ստվարացող կամ նորակազմ համայնքներու համար անհրաժեշտ նկատվող եկեղեցիներ կկառուցվին: Իսկ հոգևորականի համար շատ հեղ և շատ մը տեղեր արագորեն կճարվի նվազ փորձառու եկեղեցական մը: Դժբախտաբար շատ վայրերու մեջ կտեսնենք այս կապակցությամբ իրենց կոչման բարձրության վրա չգտնվող և իրենց Աստվածատուր պաշտոնը փառավորելու անատակ հոգևորականներ: Վիճակագրական ճիշտ տվյալներ կպակսին մեզի, բայց տեղ տեղ, մոտավոր հաշվարկումներով, հայ հավատացյալներու և հայ հոգևորականներու թիվին առ հարյուր բաշխումը կըլլա շուրջ ութը կամ տասը հազար հայու, մեկ հոգևորական, ինչպես է պարագան Հարավային Ամերիկայի մինչև այսօր:

Բարեբախտաբար վերջին քսանամյակին այս պատկերը կփոխվի հատկապես Միացյալ Նահանգներու մեր թեմին մեջ ուր կտեսնենք հետզհետե հասակ առնող, Աստվածաբանական ուսումնառությամբ պատրաստված երիտասարդ հայ հոգևորականներու հույլ մը:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՏԶՀԵՏԵ ԱՄԵՆՈՒՐԵՔ

Արտասահմանյան պայմաններու ամենեն աչքառու դժվարություններն ու ազդեցությունները Հայց. Եկեղեցվո վերաբերմամբ հետևյալներն են.—

1.— Մեր Եկեղեցվո զավակներուն միջամուսնությանց աճը.

2.— Մեծ քաղաքներու մեջ ցրված և հեռավորությամբ իրարմե բաժնված ու իրար հետ նվազ ի հաղորդության ժողովուրդ որ էապես գյուղատնտեսական միջավայրե գալով կտրված է իր անցյալեն ու զետեղված հարուստ երկիրներու մայրաքաղաքներուն մեջ:

3.— Ազգային վարժարաններու կարևոր և միաձուլող դերին պակասը:

4.— Ազգային ներքին հակամարտություններու և ոչ-էական հարցերու համար ազգամիջյան վեճերու գործած ավերը:

5.— Հավատացյալներուն քաղքենիացմամբ Հայց. Եկեղեցվո վարչական դրության աշխարհականացման ընթացքը:

6.— Միջավայրի և պայմաններու բերմամբ, ծիսակատարության կամ արարողություններու կրճատում կամ մասնակի բարձում, և անկարգություններու գործած վնասը:

7.—Եկեղեցվո մեջ գործածական գրաբար լեզվի անգիտությունը:

8.— Կրոնական սիստեմաթիք դաստիարակության պակաս իբրև արտադասարանական ընթացք և նույնիսկ գոյություն ունեցող հայ վարժարաններե ներս, այլ դասավանդությանց խճողման համար:

9.— Հաղորդակցության միջոցներու բարվոքմամբ, լրատվությանց և սինեմա-թելեվիզիոնի գործած վնասը:

10.— Աշխարհի ներկա քաղաքա-տնտեսական, մանավանդ բարոյական ըմբռնումներու հոռի ազդեցությունն ու խաթարումը.

11.— Հատկապես Արևմտյան երկիրներու մեջ, տեղական բարքերու և սովորություններու բերմամբ, եկեղեցվո ընկերային գործունեությունը որ ինքն ըստ ինքյան, գովելի է, կշփոթվի հաճախ նպատակին հետ: Եկեղեցվո ընկերային գործունեությունը ինքնանպատակ չէ, այլ անշուշտ միջոց է միայն: Հասութաբեր ձեռնարկումներու հաճախակի կազմակերպումը, պետք չէ շփոթվի նպատակին հետ որ է եկեղեցվո առաքելությունը:

Ուրեմն

1.— Իր բնիկ երկրեն աշխարհամաս մը անդին, հոգևորապես ցրտահար հայ մարդը, միջամուսնությամբ քիչ մը ավելի կհեռանա իր ավանդություններեն, պատմութենեն, անցյալեն, ազգային ոգիեն, բնականաբար այս բոլորը էացնող և տարրացնող Հայց. Եկեղեցիեն: Եթե մանավանդ Հայ Եկեղեցին ավելի առինքնող, ավելի հոգեպարար բան մը չներկայացնե իբրև երաժշտություն, քարոզխոսություն, ծիսակատարություն, կազմակերպություն, մեկ խոսքով, ապրված կյանքով հավատք չներշնչե:

2.— Որոշ դժվարություններ ինչ կվերաբերի երթևեկության, տեղափոխության, մեծապես կբարդացնե հարցը:

3.— Ավելցնելով ասոնց վրա հայ վարժարանին խոշոր նպաստին պակասը կամ չգոյությունը, այսինքն երբ հայ մարդը կամ ընտանիքը, եկեղեցվո արարողություններեն շատ բան կամ բնավ բան չի հասկնա, այն ատեն մեծ զոհողություններով կառուցված բայց հավատացյալներե, մանավանդ հոգևոր կյանքե զուրկ եկեղեցիներ կրնանք ունենալ: Այս պարագան խորապես մտահոգիչ կրնա ըլլալ եթե ոչ աղետալի: Թուրքիո զանազան գավառներու մեջ անուս և ոչ հայախոս հայ շինականներու պարագան նույնը չէր, որովհետև մեր բնիկ երկրին մեջ էինք: Դարերով հայ վարժարանը կառուցված կըլլար Հայ Եկեղեցվո կից, անոր շուքին ու հովանիին տակ: Դժբախտաբար, հետզհետե հայ վարժարանը դուրս կուգա Հայ Եկեղեցվո ուղղակի հակակշռեն, այս երկու հարազատները կամ երկվորյակներու զիրար առնչող կապը կթուլանա և կտուժե անշուշտ կրոնական դաստիարակությունը և Հայ Եկեղեցվո մատաղ հոգիներուն վրա ներգործելիք բարերար ազդեցությունը:

4.— Շատ բարդ հարցեր են մեր ներքին, այսպես կոչված գաղափարական տարակարծություններն ու հակամարտությունները, որոնք էապես հավատքի ու Եկեղեցվո հետ մոտեն աղերս չունենալով հանդերձ, բուռն պայքարի ձև ստացան կարգ մը գաղութներու մեջ և տագնապեցուցին եկեղեցական կյանքը, ինչպես հոգելույս Ղևոնդ Դուրյան Սրբազանի սպանութենեն ետք, Միացյալ Նահանգներու մեջ, ի Լիբանան և այլուր և որոնք շուրջ քառորդ դարե ի վեր հառաջ բերին Հայց. Եկեղեցվո մեջ այսպես կոչված ազգային-եկեղեցական երկփեղկումն ու տագնապը: Այժմ կունենանք ոչ լրիվ, սակայն բավականին ստվերամած մեկ պատկերը արտասահմանի Հայց. Եկեղեցվո այժմու վիճակին:

5.— Կուզեմ կարևորությամբ մատնանշել այն թե Հայց. Եկեղեցվո վարչական-տնտեսական գործերուն մատակարարումը աշխարհական հավատացյալները կարդարացնեն առ այն թե, Եկեղեցին ազդակ է հայապահպանման, որը քայլ մըն ալ առաջ տանելով կստեղծե շեշտված կերպով ժողովրդավարական չընելու համար ակմբային հասկացողություն մը: Հայց. Եկեղեցվո բերկրառիթ արդյունքներեն մեկն է, հայապահպանումը կամ հայակերտումը, բայց իր գոյության իմաստ չէ, վասնզի Եկեղեցին փրկագործության, քարոզչության և Ավետարանչության սուրբ բեմն է:

Կարգ մը թեմեր ներսեն, մասնավոր գաղութային ընտրություններով գրավել, ապա բանկալային վեճեր ստեղծել, հյուծում, սպառումն է Հայց. Եկեղեցիին: Թանկագին կորովի, ճիգերու հումպետս վատնում կնշանակե: Բարոյական նաև հոգևոր իմաստով խոշոր է կորուստը հավատացյալները ազգամիջյան փուճ վեճերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն հեռացնել կամ անջատելը: Ըսված է.— «Տուն իմ, տուն աղօթից եղիցի»:

6.— Կհավատանք թե մայրենի լեզուն ամենեն կարևոր կապն է տվյալ

ժողովուրդի մը կամ ազգի մը զավակները իր մշակույթին նաև պետք է ըսել հոգևոր կյանքին հետ առնչելու համար: Երբ կարգ մը թեմերու և համայնքներու մեջ պարտադրաբար, իրաց բնական հետևողությամբ, քարոզխոսություն, խորհրդակատարություններեն ոմանք տարբեր, օտար լեզուներով կկատարվին, Հայց. Եկեղեցվո ավանդութենեն, հոգևոր կառույցեն, միստիք վեհութենեն, ինծի այնպես կթվի թե—գեղեցիկ բան մը կպակսի: Պողոս Առաքյալ կըսե.—«Եթե հրեշտակներու լեզվով խոսինք և սեր չունենանք, նաև եթե մեր խոսածը անիմանալի ըլլա, օգուտ մը չունի»: Կկարծենք թե սխալած չենք ըլլար հաստատելու թե ժամանակ մը ետք, գուցե և այսօր կարգ մը վայրերու մեջ, Առաքելական թուղթերը, ճաշու Աւետարանեն առաջ և կարգ մը աղոթքներ աշխարհաբար լեզվով կարդացվելու պարագային իսկ, օգուտ մը չունին որովհետև տեղ տեղ աշխարհաբար լեզուն ևս անհասկընալի է ժողովուրդեն: Երիտասարդներ կճանչնամ, իրենց ուսումը օտար վարժարաններու մեջ ստացած, որոնք այլադավան եկեղեցիներ կհաճախեն, ուշադիր կհետևին արարողություններուն որովհետև կհասկնան: Մեր պարտականությունն ու առաքելությունն է հավաքել «զնշխարեալ բեկորս ժողովրդեան», ի հարկին օտար լեզվով ալ ավետարանելով անոնց:

7.— Համաշխարհային տարողությամբ հարցեր կան, հոգեբանական, ընկերա-փիլիսոփայական, տնտեսական-քաղաքական որոնք մեր հարցերը չեն, սակայն մեր ժողովուրդը աշխարհաքաղաքացի լինելով, չի կրնար չազդվիլ և հետևաբար մեր Եկեղեցին ևս կկրե հոգի ազդեցություն: Օրինակ, ներկա ժամանակաշրջանին Արևմտյան երկիրներու բնակիչները կկոչվին արտադրող և սպառման հավաքականություններ: Տիրապետող ոգին նյութապաշտությունն է, թե Արևմտյան աշխարհի զանգվածին և թե Արևելյան ժողովուրդներու սլոքին: Հասկնալի է որ նյութապաշտ ընկերություն մը հետամուտ է հաճույքներու, ցոփության որոնք զմարդ կհեռացնեն Եկեղեցիեն և Աստուծմե: Եթե մտածենք թե արդի մարդը սարսափ ունի վաղվան անստուգության և պատերազմի, այսինքն աթոմական փճացումե, կսկսի մտածել մի միայն հաճույքի մասին, վասն զի վաղը կրնա զորակոչվիլ կամ մեռնիլ: Հայ մարդը և ընտանիքը այս և այսպիսի ուղղություններե բնականաբար կազդվի և իրմով կազդվի հոգևոր կյանքն ու Հայց. Եկեղեցին:

8.— Եթե ավելցնենք նաև լրատվությանց, սինեմա-թելեվիզիոնի և այլ հաճույքներու գործած վնասները, կմղվինք մտածելու թե ինչպիսի դարմաններ պետք է առաջարկել նման կացություններու առջև, երբ նույն ինքն հոգևոր կյանքի կարևորությունը հարցականի առջև կդրվի մարդկային հավաքականություններու և նոր սերունդի երիտասարդներուն մոտ:

Առաջարկներ.—

Եթե արտակարգ պայմանները որոնց ենթարկված է Հայց. Եկեղեցին արտասահմանի մեջ, չենք կրնար փոխել, մեր ուժերեն վեր ըլլալուն համար, մյուս կողմե սակայն, բնականաբար դարմաններու մասին պարտինք մտածել. կաշխատինք դարմաններ և լուծումներ առաջարկել:

Թեև ընդհանուր երևույթ է քսաներորդ դարու այս շրջանին վկայել թե ամենուրեք կուսակրոն ծառայության ասպարեզին համար կոչումի ակնառու պակաս կա, այնուամենայնիվ կառաջարկենք որ.—

ա.— Հատկապես Երուսաղեմի Ս. Աթոռո Ժառանգավորաց վարժարանեն պատրաստված, կոչումի բարձրության վրա, իրենց պաշտոնը փառա-

վորելու և անմնացորդ զոհողությամբ, ծառայելու պատրաստակամությամբ նոր հոգևորականներ հասցվին ավելի շատ թիվով:

բ.—Եպիսկոպոսական ժողովը օրինադրե որ թեմերու և ծուխերու մեջ ամուսնացյալ և ձեռնադրյալ սարկավագներ ունենանք որոնք հատուկ արտոնությամբ, օրինակ Մեծ-Պահոց և այլ առիթներու կարենան քարոզել,— եթե կարողություն ունին, եկեղեցական բարձրագույն իշխանութենեն հատուկ արտոնությամբ:

գ.— Պատրաստել հատուկ ուսուցչական ուժեր, զարկ տալու համար կրոնական դաստիարակության, Հայց. Եկեղեցվո պատմության և դավանանքին, բոլոր թեմերու բոլոր ծուխերուն համար, գեթ տարրական մասը ուսուցանելու համար:

դ.— Խոր գնահատանք և անվերապահ համակրություն հայտնելով հանդերձ մեր նվիրապետական Աթոռներու, կրոնական պաշտոնաթերթերուն, անոնց հարատև աշխատանքին, գտած ենք որ ատոնք մեր հավատացյալ ժողովուրդի միջին զանգվածին մատչելի չեն: Մասնագիտական նյութեր, բանասիրական, աստվածաբանական, ազգագրական, պատմական նյութեր բարձրաթռիչ ոճով ներկայացնելուն համար: Կառաջարկենք պարզ, եկեղեցագիտական, հոգևոր-կրոնական, հասկնալի, դյուրամատչելի, աժան գնով կրոնական շաբաթաթերթի մը հրատարակվիլը տեսնել և ջանալ անոր համար ամենեն շատ տարածումը ապահովել, լայն շրջանակներու մեջ:

ե.— Շրջուն լիազոր հոգևոր հովիվ մը տրամադրել, կամ նշանակել որ պարբերաբար այցելե բոլոր թեմերը և հոգևոր Առաջնորդներուն հետ սերտ գործակցությամբ տեղեկագրեր պատրաստե թեմերու, ծուխերու, եկեղեցիներու վիճակին և կարիքներուն համար և տեղեկագրի օրինակները տրամադրե Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին հետ նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո նվիրապետական Աթոռներու Ամենապատիվ Պատրիարքներուն, վասն զի անոնք կպատրաստեն կուսակրոն հայ հոգևորականներ:

զ.— Ստեղծել, կյանքի կոչել Հայց. Եկեղեցվո կեդրոնական հիմնադրամ որուն անձեռնմխելի դրամագլուխի տոկոսային եկամուտներեն արժանավոր նոյոծյալ կուսակրոն հոգևորականները օգտվին, անպայման Աստվածաբանական ուսում ստանալու համար, ծանոթ համալսարաններու մեջ, եթե կարողությունը ունեն ուսանելու:

Սույն անձեռնմխելի դրամագլուխը կարելի է հավաքել նվիրապետական Աթոռներու գահակալներու կողմե լիազորելով վերոհիշյալ շրջուն հոգևոր հովիվը իբրև նաև նվիրակ:

է.— Ամեն ճիգ, ջանք, մանավանդ բարեկամեցողություն ի գործ դնել, Քրիստոնեական սիրով հարթելու համար Հայց. Եկեղեցվո երկփեղկումն ու այսպես կոչված ազգային, եկեղեցական տագնապը որ այս օրերուն, քաղաքական ինչ ինչ դեպքերու բերմամբ, մեղմացած կթվի ըլլալ, շեշտելով միշտ մեկ Եկեղեցի, մեկ մշակույթ և մեկ պատմություն ունենալու կարևոր սկզբունքին վրա:

ը.— Զարկ տալ կիրակնօրյա վարժարաններու ստեղծման, կամ եղածները ամրացնել:

թ.— Հրատարակել կրոնական-բարոյական և եկեղեցագիտական իմաստով գրականություն առատորեն և մատչելի գիներով և թեմերու միջոցավ ցրվել:

ժ.— Ստեղծել կամ գոյություն ունեցող եկեղեցվո շուրջ և Հայց. Եկեղեցվո հովանիին տակ գործող պատանեկան կազմակերպությունները ամ-

ռացնել, ֆուայե կամ սերքլը տե ժեռն Արմենիեն իմաստով, եթե հայ կազմակերպություններու հետ այս պարագային տեղի ունենալիք ընդհարումները այս պատճառավ ուժեղ չըլլան, որովհետև անոնք կրնան ընդդիմանալ այս ծրագրին հասկնալի պատճառներով:

Այս բոլորեն ետք, մեր հաստատ համոզումն է որ Աստված թեև անսասան կպահե իր դաստակերտած Եկեղեցին, սակայն այսօր մենք ստացած ենք զայն պատշաճորեն պայծառ պահելու վերին աստիճանի ծանր պատասխանատվությունը:

Թող Աստված շնորհազարդե մեր նվիրապետական Աթոռներու գահակալները նաև մեզ բոլորս և պարգևե առողջ և երկար կյանք և նոր հովիվներ հարուցանե որպեսզի ժողովրդյան միշտ համառոտեն զբաղն ճշմարտության:



ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 36-րդ տարեշրջանի՝ 1980—1981 ուսումնական տարվա բացման հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հյուրեր:

Հանդիսությունը սկսվում է խմբովին արտասանած «Հայր մեր»-ով, որից հետո Մայր Աթոռի միաբան և հոգևոր ճեմարանի դասախոս Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9) հատվածը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Որք զարդարեցին» և «Աշակերտք Քրիստոսի» շարական-խմբերգերը: Իսկ Բ լսարանի ուսանող Մեսրոպ Խաչիկյանը Նարեկից կարդում է Ս. Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Հոգևոր ճեմարանի ուսումնական տարեշրջանի սեմին բացման խոսքով հանդես է գալիս ճեմարանի նորընտիր տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

«Աստուծո ողորմությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հավաքվել ենք այստեղ՝ կատարելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1980—81 ուսումնական տարեշրջանի բացումը:

Ամառային արձակուրդներից հետո դողանջելու են շուտով ուսումնական զանգերը՝ հրդեհելու, պարուրելու համար մեր բոլորի հոգիները ուսումնատենչ կրակով:

Հայ Եկեղեցու կենտրոնը՝ Ս. Էջմիածինը, իր գոյության առաջին իսկ օրից ունեցել է իր հոգևոր դպրոցը, ուր դարեր շարունակ ուսանել, դասավանդել, աշխատել ու տքնել են Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի մշակութային նշանավոր գործիչները՝ հյուսելով մեր Եկեղեցու փառքը մեր ժողովրդի և համաշխարհային պատմության առջև:

Այսօրվա հոգևոր ճեմարանը հանդիսանում է այդ դպրոցի շարունակությունը:

Հարուստ և անսահման է հայ եկեղեցական մշակույթի անդաստանը, հարուստ, սակայն ցավոք սրտի տակավին փոշեծածկ իր զգալի տարածքով: Հայ Եկեղեցու բազմաթիվ փառահեղ գործիչները սպասում են լույս աշխարհ գալու, հայ աստվածաբանական և մեկնողական գրականությունը, Հայ Եկեղեցու պատմության և ծեսի բազմաթիվ հարցեր կարոտ են լուրջ ուսումնասիրությանց:

Ահա մի նվիրական առաքելություն, որը Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հիմնա-

կան պարտականություններից մեկն է, անկասկած:

Մյուս կողմից, հայ ժողովրդի ներկա իրականությունը, հատկապես սփյուռքի տարածքի վրա, հրամայական կերպով պահանջում է կրթված, գիտուն, ազնիվ, անշահախնդիր և Հայ Եկեղեցուն և մայր հայրենիքին նվիրված հոգևորականների պատրաստությունը Հայ Եկեղեցու հոգևոր դրպրոցներից:

Հետևաբար, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ինչպես մինչև այսօր, այնպես էլ հետ այսու գործելու է երկու հիմնական նպատակներով.

1.— Պատրաստելու համար մշակներ, հերկելու հայ հավատացյալի հոգին և սպասարկելու այսօրվա հայ համայնքներին ու ծուխերին:

2.— Պատրաստելու համար մշակներ, հերկելու հայ եկեղեցական մշակույթի անդաստանը՝ արժեվորելու համար մեր նախնիների փառավոր ավանդությունը:

Վեհափառ Տեր,

Դուք մեծ հոգատարությամբ և սիրով եք շրջապատել հոգևոր ճեմարանը, Ձեր հայրապետության առաջին իսկ օրից:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը վստահ է, որ այդ սերը և հոգատարությունը պիտի շարունակի վայելել նաև հետ այսու: Այդ վստահությունը թույլատրում է մեզ՝ դիմելու այժմ Ձերդ Սրբությանը և հայցելու Ձեր հայրական օրհնությունը հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար»:

Տեսուչ տեր հայրը, իր խոսքը ավարտելուց հետո, հրավիրում է Վեհափառ Հայրապետին, որպեսզի տա Իր օրհնության խոսքը հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ

(8 սեպտեմբերի 1980 թ.)

Մեր հաճելի պարտականություններից մեկն է, ամեն տարի գալ այստեղ, մեր հոգևոր ճեմարանի հարկի ներքո, կատարելու դպրոցական տարեշրջանի բացումը: Ահա այդ հաճելի պարտականությունը մի անգամ ևս Մենք կատարում ենք այսօր 25-րդ անգամը լինելով: Կարևոր տարեթիվ է Մեզ համար, որովհետև 25 տարիները բավական լուրջ մի ժամանակաշրջան են ընդհանրապես մարդու կյանքում և հատկապես մեր այս կրթական հաստատության կյանքում: Եվ այս 25 տարիների ընթացքում ինչքան Մեր ժամանակը ներեց, Մենք մոտիկից հետևեցինք հոգևոր ճեմարանի աշխատանքներին՝ մի քանի դասեր էլ ավանդելով:

Պետք է Մենք անկեղծորեն վկայենք, որ այս ժամանակաշրջանում մեր հոգևոր ճեմարանի բոլոր տեսուչները և դասախոսները իրենց պարտականությունները կատարեցին բարեխղճությամբ, սիրով և նվիրումով: Ինչպես գիտեք, անցյալ տարվանից սկսյալ, Մենք որոշեցինք հրավիրել այս հաստատության գլուխը մեր երիտասարդ հոգևորականներին: Եվ հիշում եք երևի, թե Մեր վստահությունը հայտնեցինք երիտասարդ հոգևորականների նկատմամբ անցյալ տարի նույն այս առիթով, երբ պատասխանատու ղեկավար աշխատանքի կոչվեցին հոգեշնորհ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, իբրև տեսուչ, և Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, իբրև ուսմասվար:

Անցյալ տարի փորձի և աշխատանքի ժամանակաշրջան եղավ, և երկու մեր հոգևոր հայրերը իրենց պարտականությունները ի կատար ածեցին բարեխղճությամբ և սիրով: Այս տարի նոր կացություններ ստեղծվելով, հարկ եղավ հրավիրել Գրիգորիս վարդապետին այլ պատասխանատու աշխատանքի: Այս կացության առաջ Մենք հարմար գտանք, և Գերագույն հոգևոր խորհուրդը որոշեց ճեմարանի տեսչության պաշտոնը վստահել նախկին ուսմասվար Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանին:

Մենք վստահ ենք, անցյալ տարվա փորձը էլ նկատի ունենալով, որ նոր տեսուչը, հակառակ տակավին իր շատ երիտասարդ տարիքին, բավարար գիտական պատրաստությունը ունի՝ նաև աշխատանքի եռանդ, նախաձեռնություն, և հետևաբար վստահ ենք, թե այս տարի հետզհետե առավել կազմակերպված մի տարեշրջան պիտի լինի ամեն տեսակետով: Մեր նոր տեսուչին մաղթում ենք նորանոր ուժեր, ներշնչանքներ, որպեսզի նա կարողանա իր պարտականությունները կատարել փայլուն կերպով:

Կարևոր նոր մի պաշտոն էլ հաստատեցինք այս տարի: Դա ճեմարանի ընդհանուր դաստիարակի պաշտոնն է, զոր հանձնեցինք մեր երիտասարդ միաբան հոգեշնորհ Տ. Ստեփանոս աբեղա Զագալյանին: Հայր սուրբը վերջին երեք տարիների ընթացքում ցուցաբերեց բարոյական ազնիվ նկարագիր, որին մենք կարող ենք վստահել մեր ճեմարանի ընդհանուր դաստիարակի գործը: Միշտ շեշտել ենք, թե հոգևոր ճեմարանի ուսանողները երկու ուղղությամբ պետք է զարգանան: Նախ՝ մտավորապես, ամբարելով գիտելիքներ, այսինքն այն ամենը, ինչ որ դասավանդվում է նրանց դա-

սախոսների կողմից: Բայց այդքանը բավական չէ: Մտավոր, գիտական պատրաստությունը պետք է ամբողջանա բարոյական ճկարագրի կազմությամբ: Մեր կարծիքով բարոյական ճկարագիրը վճռական դեր ունի ընդհանրապես մարդկային կյանքում, ընտանեկան և հասարակական կյանքում: Բոլոր այդ վայրերում, որտեղ հանցագործություններ են կատարվում կամ անազնիվ արարքներ, պատճառը մեկ է՝ բարոյական ճկարագրի պակասը: Երբ մարդիկ բարոյական ճկարագիր չունեն, ինչքան էլ գիտուն լինեն՝ կարգին գործ չեն կարող անել: Առավել ևս դա անհրաժեշտ տվյալ է հոգևոր կյանքում:

Այն հոգևորականը, որ բարոյական ճկարագրից զուրկ է, նա արժանի չէ հոգևորական լինելու: Դժբախտաբար այդպիսի հոգևորականներ էլ լինում են երբեմն, որոնք ապրում են նաև մեր շարքերից ներս: Բայց կարճ ժամանակի ընթացքում նրանք դիմակազերծվում են, իրենց գույնը դուրս են տալիս, ինչպես ժողովուրդը պիտի ասեր, և մեկուսացվում են ու հեռացվում:

Ահա թե ինչու Մենք վճռական նշանակություն ենք տալիս բարոյական ճկարագրի կազմությանն: Եվ այդ ճկարագիրը կարելի է ձեռք բերել հոգևոր բարոյական դաստիարակությամբ, կարգապահությամբ, կարգ ու կանոնի զգացումով և կրոնական ապրումների ճանապարհով:

Մեր ամբողջ Սուրբ Ավետարանը ուրիշ բան չէ, իր ընդհանուր նպատակների առումով, եթե ոչ՝ կատարյալ մարդ պատրաստել: Կատարյալ մարդ, այսինքն բարոյական ճկարագիր ունեցող մարդ: Բարոյական ճկարագրի կերտումը հենց Քրիստոսի Ավետարանի նպատակն է, հիմնական նպատակը:

Սիրելի ուսանողներ, մի հանգամանք էլ պետք է ձեր ուշադրության հանձնենք, այն, որ չի բավեր միայն հայր Ստեփանոսի աշխատանքը: Նրա աշխատանքը վճռական կարևորություն ունի, բայց ամբողջապես բավարար չէ: Դուք էլ պետք է նրան օգնեք, այսինքն դուք էլ ձեր սիրտը, ձեր հոգին պետք է բանաք, որպեսզի ընդունեք սիրով, համոզումով, այն, ինչ որ ձեզ ջամբում է հայր Ստեփանոսը: Դուք էլ գործոն կերպով, անկեղծորեն պետք է ջանաք յուրացնել ձեզի ուղղված պատվիրանները: Այլապես կնմանիք այն հողին, ուր բարի սերմեր ընկնում են, բայց չեն աճում և չորանում են, ինչպես քիչ առաջ «Սերմնացանի առակի» ընթերցումից լսեցիք: Արմատ են արձակում և աճում այն սերմերը, որոնք ընկնում են պարարտ հողի վրա: Եվ արդյունքը լինում է մեկի դեմ երեսուն, նույնիսկ մեկի դեմ վաթսուն, իսկ երբեմն էլ մեկի դեմ հարյուր:

Դուք պետք է գիտենաք ձեր միտքը, ձեր հոգին դարձնել պարարտ հող, որպեսզի այն սերմերը, որ սերմանվում են ձեր հոգիների մեջ՝ պտղառատ դառնան:

Այս տարեշրջանի բացման առթիվ Մենք կողջունենք նաև մեր հարգարժան դասախոսներին, որոնք ձեռք-ձեռքի տված, ճեմարանի տեսչության ղեկավարության ներքո պիտի սկսեն իրենց գործունեությունը:

Մեր գնահատանքը, Մեր քաջալերանքը, Մեր օրհնությունը մեր կրթական մշակներին:

Թող Աստված մեզ բոլորիս օգնական լինի և զորավիգ, որ ամեն մեկս մեր աշխատանքով կարողանանք մեր պարտականությունը ի կատար ածել, պտղառատ արդյունքներով:

Հոգևոր ճեմարանի բացման հանդիսությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Հանդիսության ավարտից քառորդ ժամ հետո ճեմարանում գումարվում է մանկավարժական խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվում են ճեմարանի ուսումնա-դաստիարակչական ծրագրերի հետ կապված մի շարք հարցեր:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 9-ին, հոգևոր ճեմարանում հնչում է ուսումնական տարվա սկիզբն ազդարարող առաջին զանգը, և ճեմարանի հարկից ներս սկսվում են դասավանդությունները:





ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔՈՒՄ

Օգոստոսի 3—10 օրերին Երուսաղեմի հայոց վանքում գումարվեց միաբանական համագումար, որի ավարտին կատարվեցին նաև հանդիսություններ՝ նվիրված Երուսաղեմի հայոց երջանկահիշատակ Տ. Զաքարիա պատրիարք Կոփեցու ծննդյան 200-ամյակին, ինչպես նաև նրա օրով Ժառանգավորաց վարժարանի հիմնադրության 140-ամյակին և լուսահոգի Տ. Եղիշե պատրիարք Դուրյանի մահվան հիսնամյակին:

Տ. Զաքարիա պատրիարքի ծննդյան տարեդարձի, կյանքի ու գործի մասին, նաև որպես Ժառանգավորաց վարժարանի հիմնադրի, հանդիսության ժամանակ խոսել է Դետրոյտի **Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը:**

Սույն զեկուցումից քաղվածաբար ներկայացնում ենք որոշ հատվածներ:

Զաքարիա պատրիարքը ծնվել է 1780 թվականին Հին Հարքի Կոփ գյուղում, հայ քահանայի ընտանիքում: Տասը տարեկան հասակում Զաքարիան իր նախնական կրթությունը ստանում է Մուշի Ս. Առաքելոց վանքում և ապա Ս. Էջմիածնում մի քանի տարի աշակերտում է Ներսես Աշտարակեցուն:

Ս. Էջմիածնից վերադարձին անցնում է Կ. Պոլիս, ուր աշակերտում է Մխիթարյանների վարժարանը և ապա Վենետիկում՝ Ս. Ղազար վանքում շարունակում է իր ուսումնառությունը:

1818 թվականին վերադառնում է Կ. Պոլիս և Երուսաղեմի հայոց Տ. Թեոդորոս պատրիարքից կուսակրոն քահանա է ձեռնադրվում: 5—6 տարի Ս. Երուսաղեմի Պատրիարքության նվիրակի պաշտոն է կատարում Տիգրանակերտ, Սասուն և Զմյուռնիա քաղաքներում:

1826 թվականին նշանակվում է Կ. Պոլսում Երուսաղեմի Պատրիարքության փոխանորդ և ձեռնհասորեն զբաղվում է Սուրբ Աթոռի և մասնավորաբար Սուրբ Տեղյաց հարցերով:

1831 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում և իր հետագա ողջ կյանքն ու գործունեությունը կապում է Երուսաղեմի Աթոռի հետ:

1833 թվականին Երուսաղեմի հայոց վանքում հաստատում է Սուրբ Աթոռի տպարանը, «որ կարելի է ըսել թե Օսմանյան Կայսրության մեջ, Թուրքիայեն դուրս գտնվող միակ հայ տպարանն էր բավական երկար ժամանակ»:

Սույն տպարանում Զաքարիան 1833—1846 թվականներին հրատարակում է 18 անուն գրքեր:

1841 թվականի օգոստոսին Զաքարիան Երուսաղեմի հայոց Աթոռի պատրիարք է

ընտրվում: Նրա պատրիարքության կարևոր ձեռնարկներից մեկն է լինում Ժառանգավորաց վարժարանի բացումը 1843 թվականին, նախ Ռամլեի հայոց Ս. Գևորգ վանքում: Վարժարանը ապա փոխադրվում է Երուսաղեմ՝ հայոց վանք:

Զաքարիա պատրիարքը 1843 թվականին Ներսես Աշտարակեցու հետ կաթողիկոսական թեկնածու է ներկայանում: Բայց միաձայն ընտրվում է Ներսես Աշտարակեցին:

Զաքարիա պատրիարքը վախճանվում է 1846 թվականին, չորս և կես տարի պատրիարքություն անելուց հետո:

Զաքարիա պատրիարքը եղել է «շրջանի ամենեն կարկառուն հոգևորականներեն մին իր պատրաստությամբ, իր ուսմամբ, իր նոր գաղափարներ հետամտելու ջանասիրությամբ, ըլլա ադիկա տպարանի գործը, ըլլա ադիկա Ս. Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանի հաստատման գործը... թերևս մեծագույն վկայությունը անոր կարողությանց մասին իր թեկնածու համարվիլն է Ներսես Աշտարակեցիի հետ» Ամենայն Հայոց Կաթողիկոսության:

*
* *

Երուսաղեմում նույն օրերին նշվում է մեծ հանդիսությամբ նաև երջանկահիշատակ Տ. Եղիշե պատրիարք Դուրյանի մահվան 50-ամյակը (1930—1980):

Այս առթիվ մեծանուն պատրիարքի կյանքի, գործունեության, անձնավորության և մատենագրական վաստակի մասին բովանդակալից և ոգեշունչ զեկուցումով հանդես է գալիս **Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Իսահակ ծ. վրդ. Ղազարյանը:**

Սույն զեկուցումից ևս քաղվածաբար ներկայացնում ենք «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին որոշ հատվածներ:

Տ. Եղիշե պատրիարք Դուրյանը (աշխարհական անունով՝ Միհրան) ծնվել է 1860 թվականին Սկյուտարում (Կ. Պոլիս), երկաթագործ արհեստավորի ընտանիքում:

16 տարեկան հասակում «կանուխեն հայտնաբերված իմացական ցցուն իր կարողությունները զինք կդարձնեն ուսուցիչ Սկյուտարի ճեմարանի մեջ»:

1877 թվականին սարկավագ է ձեռնադրվում Ս. Կարապետ եկեղեցում՝ ձեռամբ նույն եկեղեցու քարոզիչ Տ. Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանից, որը նրա անունը փոխում է Եղիշեի:

Եղիշե սարկավագ Դուրյանը «մասնավոր արտոնությամբ կսկսի քարոզել եկեղեցվո բեմեն»:

1879 թվականին, 19 տարեկան հասակում, ձեռնադրվում է կուսակրոն քահանա Տ. Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանից, նշանակվում է Սկյուտարի ճեմարանի տեսուչ և ստանում է մասնավոր վարդապետական իշխանություն: «Դուրյան վարդապետի հոգին ու նկարագիրը կկազմվի գեղեցիկ այն միջավայրին մեջ որ եղավ Սկյուտարը»:

Այնուհետև հաջորդ տարիներին Դուրյան վարդապետին տեսնում ենք հովվական-քարոզչական, կրթական ու մշակութային գործունեության նվիրված՝ նախ Պարտիզակում, «ուր Դուրյան վարդապետ կծաղկի ու կգործե» շուրջ տասը տարիներ, մեծ արդյունավորությամբ:

1890 թվականին վերադառնում է Կ. Պոլիս և Իզմիրլյան սրբազանից ստանում է ծայրագույն վարդապետական իշխանություն:

Նույն տարին Կ. Պոլսի Խորեն Աշըգյան պատրիարքի հրավերով պաշտոնի է կոչվում պատրիարքության նորաբաց Արմաշ դպրեվանքում, ուր «խաղաղ, անդորր, Չարխափանի վանատան, վարժարանի, անտառակի, ագարակի, վարդապետաց և աշակերտներու շրջապատին մեջ Դուրյան ծայրագույն վարդապետը, սերտ գործակցությամբ գիտնական Օրմանյանի, կապրի ստեղծագործական աշխարհի մը մեջ»:

1896-ին, Օրմանյան սրբազանի Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրությամբ, Դուրյանը ստանձնում է Արմաշի դպրեվանքի վերատեսչությունն ու վանքի վանահայրությունը: Նույն թվականին Դուրյանը եպիսկոպոս է ձեռնադրվում 33 տարեկան հասակում:

14 տարիներ Արմաշում գործելուց և կուսակրոն հոգևորականության ընտիր և ուսումնական մի սերունդ պատրաստելուց հետո, 1904 թվականին, Դուրյան սրբազանն ընտրվում է Զմյուռնիայի հայոց թեմի առաջնորդ: Այստեղ է, որ Դուրյանը հրատարակում է, որպես իրավ բանաստեղծ, իր հոգեշունչ քերթվածների գողտրիկ ժողովածուն «Հովվական սրինգ» անունով:

Հնգամյա առաջնորդական բեղուն գործունեությունից հետո, 1909 թվականին, Դուրյան սրբազանը ընտրվում է Թուրքիայի հայոց պատրիարք. «Սկյուտարեն, Պարտիզակեն, Արմաշեն, Զմյուռնիայեն ետք, Պոլսո այս միջավայրը ոչ միայն բարձր, այլ նաև փորձիչ ժամանակաշրջան մըն է... Դուրյան սրբազանը կուտա իր վերջնական հրաժարականը 1911-ին ու կմնա 10 տարի անպաշտոն, մինչև իր Երուսաղեմ ժամանելը»:

1910 թվականից Հարություն պատրիարք Վեհապետյանի մահով շուրջ 10 տարի Երուսաղեմի առաքելական Աթոռը թափուր

էր մնում: 1921 թվականին Դուրյանն ընտրվում է Երուսաղեմի հայոց պատրիարք:

Զափազանց հուզիչ, տպավորիչ և իմաստալից է տաճարում Դուրյան պատրիարքի արտասանած ուխտի ճառի նաև հետևյալ արտահայտությունը. «Ստանձնած եմ ինձի առաջարկված այս պաշտոնը ամեն բանե առաջ կատարելու սրբազան **վրեժխնդրության մը** գործը: Թշնամին որ ուզեց մահացնել մեր ժողովուրդը, իր հարվածը ուղղեց նախ իր մտավորական և հոգևոր ուժերուն:

Դպրեվանքի մեջ պատրաստված սերունդի մեծագույն մասը զոհ գնաց չար կանխամտածության: Իմ ուշադրությունս մեծագույն մասամբ պիտի ուղղվի այդ նպատակին: Այս Աթոռը, այս Հաստատությունը լավագույնս ծառայած կըլլան ազգին և Եկեղեցիին, եկեղեցական կրթության, հոգևոր գործիչներու դաստիարակության նվիրելով իրենց ուժը և միջոցները: Սրբոց Հակոբյանց ուխտը, ատենն է որ ավելի ընդարձակ և կարևոր պայմաններու մեջ կատարե Հայաստանյայց Եկեղեցիին մատուցանելիք իր ծառայությունները. անարյուն ու սուրբ վրեժխնդրության մը նվիրական գործի մըն է որ կլծվինք ամենքս ալ»:

Դուրյան պատրիարքը իր այս ուխտի խոսքից հետո, հետևողականորեն նվիրվում է հոգևոր, առաքելական, կրթական, մշակութային, շինարարական, վերանորոգչական, կառուցողական աշխատանքներին և գործունեությանը, իր պատրիարքական պաշտոնավարության 9 տարիների ընթացքում:

1929 թվականի հոկտեմբերին արժանավայել հանդիսությամբ և համազգային շուքով նշվում է Դուրյանի քահանայական գործունեության 50-ամյակը:

Ուրախ ու գեղեցիկ այս օրերից 6 ամիս հետո վախճանվում էր ապրիլին, Նոր կյուրակեի առավոտյան, մեծանուն և մեծավաստակ Դուրյան պատրիարքը. «Դուրյան սրբազանը մաքուր, ամբասիր եկեղեցական մըն էր, կենդանի, ապրող սուրբ մը... ինչպես արևածաղիկ մնաց մշտապես իր կյանքի բոլոր «հիմա»ներուն մեջ—գիրին, գիրքին ու Աստծո Արևին սևեռուն՝ իր ներսեն...

Դուրյան սրբազանի ստույգ արժանիքը իր **քահանայությունն** էր: Իր պատարագները, քրիստոնեական իր խոկումները հավատքով պայծառացած, ըրին զինքը տիպար մարդ մը և տիպար եկեղեցական ու վերացյալ միստիկ պատարագիչ: ...Ապրում էր Դուրյան սրբազանը ամբողջությամբ: Այդ ապրումը քրիստոնեական էր, որ դարձուցած էր զինքը միստիկ մարդերեն մին:

Կհավատամ որ ան մեր մեջն է, ու կկենա դարերու և սերունդներու դիմաց, մտքի իր փառքովը ու հոգիի իր շքեղությամբ... «որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող: Պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն», պատմահոր այս խոսքը հյուսված Սահակ Պարթևին համար, որքա՜ն կպատշաճի նաև իրեն իբրև աստվածային պատկերը չեղծանող ու Տիրոջ ծառայող մը... եկավ ու անցավ պատմութենեն իբրև ոգի մը, երևույթ մը...», նշել է իր բանախոսության մեջ Տ. Իսահակ ծայրագույն վարդապետ Ղազարյանը:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 2-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անգլիայի հայրապետական պատվիրակ և հայոց առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

*
* *

Սեպտեմբերի 5-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը քարոզում է Ավետարանի «Հացի բազմացման» հրաշքի հոգևոր նշանակության մասին:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ հայ ժողովրդի ազնիվ բարեկամ պրոֆ. Հովհաննես Լեյպցիուսի հիշատակին՝ նրա դստեր՝ Վերոնիկա Լեյպցիուսի խնդրանքով:

Վերոնիկա Լեյպցիուսը նույն օրը ուխտավորաբար այցելում է Մայր Աթոռ և Վեհարանում սիրով ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից:

*
* *

Սեպտեմբերի 9-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որին հրավիրված էին նաև ներքին թեմերի թեմական առաջնորդները:

Հավաքույթի ընթացքում նախ Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը համառոտակի զեկուցում է վերջերս, օգոստոսի 3—10 օրերին, Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում գումարված միաբանական հավաքույթների և հոբելյանական հանդիսությունների մասին:

Այնուհետև ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 18 հուլիս 1980 թվակիր ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղված Երուսաղեմի միաբանական խորհրդակցական համագումարի մասնակիցներին:

Ժամը 20.30-ին վանքի միաբանական սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կայացած ընթրիքից հետո, տեղի է ունենում ժողովի շարունակությունը, որի ընթացքում քննարկվում են մի շարք հարցեր և կատարվում կարծիքների փոխանակություն:

*
* *

Նույն օրը, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Անգլիայի հայրապետական պատվիրակ և հայոց առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

*
* *

Սեպտեմբերի 13-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջուզեպպե Վալտեր Մակոտտան՝ իր տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և մեծարգո դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում օրվա մեծ տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, կատարվում է «Թափոր Խաչվերացի»՝ նախագահությամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

*
* *

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հավաքույթ, որի ընթացքում նախ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը խոսում է վերջերս Հարավային Ամերիկա կատարած իր ուղևորության տպավորության մասին, իսկ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ Երուսաղեմի միաբանական խորհրդակցական համագումարին կարդացված դասախոսությունների մասին:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը, Վեհափառ Հայրապետի ծննդյան օրվա առթիվ, Վեհարանում այցելում է Նորին Սուրբ Օծությանը և 72 վարդերից բաղկացած գեղեցիկ ծաղկեփնջով շնորհավորում Նրա ծննդյան 72-րդ տարեդարձը:

*
* *

Սեպտեմբերի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբղ. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» (Սաղմ. ԺԹ 2) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին են այցելում Մայր Աթոռի բարերարներ ֆրանսահայ Ժիրայր Մինասյանը և ամերիկահայ Հրայր Հովնանյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

*
* *

Սեպտեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Գերագույն հոգևոր

խորհրդի անդամ դոցենտ Հովհաննես Թոփուզյանը խոսում է վերջերս, սեպտեմբերի 9—12 օրերին, Տաշքենդում գումարված Իսլամական կոնֆերանսի աշխատանքների մասին:

*
* *

Նույն օրը Բեյրութից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անթիլիասի Կիլիկյան Աթոռի միաբան Տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը:

*
* *

Սեպտեմբերի 26-ին, ուրբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Լոնդոն է մեկնում Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Հովնան աբղ. Տերտերյանը՝ Օքսֆորդի Ս. Ստեփանոս քոլեջում իր աստվածաբանական ուսումը կատարելագործելու համար:

*
* *

Սեպտեմբերի 27-ին- շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Ռումինիայի կրոնական գործերի դեպարտամենտի նախագահ դոկտոր Իոն Ռոշքանուի, որին ընկերակցում էին նույն դեպարտամենտի պատասխանատու անձնավորություններ Նյագան և Զիմբոյեռուն:

Հարգելի հյուրերին Մոսկվայից ուղեկցում էր ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը:

Հարգելի հյուրերին ուղեկցում էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը և տեղակալ Ա. Հասրաթյանը:

Հայոց Հայրապետի և հարգարժան բոլոր ներկաների միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

Ժամը 14.30-ին, Հայոց Հայրապետը Վեհարանի սեղանատանը հարգելի հյուրերին պատվում է մասնավոր ընդունելությամբ, ուր փոխանակվում են ողջույնի և բարիգալստյան ճառեր:

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, Երևան ժամանեց Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Կյոնիգը՝ մի խումբ ավստրիացի այցելուների հետ:

Խմբին ուղեկցում էր Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, հարգելի հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և Տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը:

Սեպտեմբերի 23-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հյուրերն այցելեցին Մայր տաճար, այնուհետև՝ Վեհարան, Վեհափառ Հայրապետին:

Այցելուների խմբին մաս էին կազմում Սովետական Միությունում Ավստրիայի լիազոր դեսպան Ալֆրեդ Շտերմանը, դոկտ. Թեոդոր Պիֆլ-Պերչևիչը, դոկտ. Օտտո Շուլմայստերը, պրոֆ. Քրիստոֆեր Սուտները, դոկտ. Էրհարդ Պուսեքը և այլ անձինք:

Հայոց Հայրապետը սիրով ընդունեց կարդինալ Ֆրանց Կյոնիգին և ավստրիացի հյուրերին Վեհարանի ընդունելության դահլիճում և բարի գալուստ մաղթեց նրանց:

Ընդունելությանը ներկա էին նաև Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը և կարդինալ Կյոնիգը ողջույնի և բարիգալստյան ճառեր և հուշանվերներ փոխանակեցին:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Հայոց Հայրապետը Վեհարանի սեղանատանը, ի պատիվ օրվա հյուրերի, տվեց ճաշկերույթ:

Ճաշկերույթից հետո հարգելի հյուրերը այցելեցին Նոր Վեհարան, Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարան, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե վանքեր:

Հյուրերը Երևանում գտնվելու օրերին այցելեցին նաև Հայ նահատակաց հուշարձան Ծիծեռնակաբերդում, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և ապա՝ Ս. Գեղարդ վանք:

Սեպտեմբերի 25-ին, հինգշաբթի օրը, Վիեննայից ժամանած հյուրերի խումբը Մայր Աթոռից և Երևանից ստացած լավագույն տպավորություններով մեկնեց Թբիլիսի:



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԵՐԻՆ

Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը օգոստոսի 3—10 օրերին, Երուսաղեմի միաբանական խորհրդակցական ժողովին և հոբելյանական հանդիսություններին մասնակցելուց հետո, մեկնում է Հարավային Ամերիկա՝ տանելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները Արգենտինայի, Ուրուգվայի և Բրազիլիայի հայ թեմերին և հավատացյալ ժողովրդին:

Օգոստոսի 13-ին, չորեքշաբթի օրը, Սիոն արքեպ. Մանուկյանը ժամանում է Բուենոս Այրես, ուր դիմավորվում է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ Տ. Դավիթ եպս. Սահակյանի, եկեղեցական դասի և թեմական-եկեղեցական վարչության կողմից:

Օգոստոսի 14-ին Կենտրոնական վարչությունը, ի պատիվ սրբազան հոր, տալիս է ճաշկերույթ, որտեղ փոխանակվում են ողջույնի ու բարիգալստյան ճառեր: Ճաշկերույթի ընթացքում խոսք առնելով սրբազան հայրը բոլոր ներկաներին հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Օգոստոսի 17-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի առթիվ Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում ս. պատարագ է մատուցում Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ Տ. Դավիթ եպս. Սահակյանը, իսկ քարոզում է Սիոն արքեպ. Մանուկյանը, ժողովրդին հաղորդում Վեհափառ Հայրապետի օրհնությունները և ապա խոսում հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցու կատարած ազգապահպանման դերի մասին և կոչ է անում համերաշխ համագործակցության:

Նույն օրը, երեկոյան, Մայրերի տոնի առթիվ, կազմակերպվել էր հանդիսություն, որին իր մասնակցությունն է բերում նաև Սիոն սրբազանը:

Հանդիսության ժամանակ սրբազան հայրը խոսում է հայ մայրերի կոչումի և նրանց կատարած դերի մասին հայոց լեզվի և հայ հավատքի պահպանման գործում:

Հաջորդ շաբաթ Սիոն սրբազանը, Դավիթ եպիսկոպոսի ընկերակցությամբ, այցելում է Բուենոս Այրեսի և արվարձանների վեց հայկական ամենօրյա երկրորդական վարժարաններ, ուր հայեցի դաստիարակություն են ստանում ավելի քան երկու հազար հայ պատանիներ ու աղջիկներ: Ամենուրեք սրբազան հայրը քաջալերանքի և հորդորի խոսքեր է ուղղում ուսանողությանը՝ միաժամանակ խոսելով հայ լեզվի և մշակույթի պահպանման (կարևորության) մասին սփյուռքի տարածքում:

Սրբազան հայրը տեսակցում է նաև Բուենոս Այրեսի չորս հայկական թերթերի թղթակիցների հետ՝ նրանց տալով տեղեկություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Երուսաղեմի միաբանական խորհրդակցական համագումարի մասին:

Բուենոս Այրես հյուրընկալության օրերին սրբազան հայրը այցելում է տեղի և արվարձանների բոլոր եկեղեցիներ և Ազ-

գային ու Հայրենակցական միությունների կենտրոններ:

Օգոստոսի 24-ին սրբազան հայրը մեկնում է Մոնտեվիդեո:

Կիրակի օրը, օգոստոսի 25-ին, Սիոն սրբազանը Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցում, բազմաթիվ հայ հավատացյալների ներկայությամբ, քարոզ է խոսում և կոչ անում ժողովրդին՝ բոլորվելու Հայ Եկեղեցու և դպրոցի շուրջ, որոնք են միակ միջոցները մեր ազգային սրբությունները պահպանելու համար:

Սրբազան հայրը այցելություն է տալիս նաև տեղի զույգ վարժարաններին, երկուստեք քաջալերելով ուսանողներին, նրանց խոսում է հայ մշակույթի պատմության մեջ Հայ Եկեղեցու կատարած դերի մասին:

Օգոստոսի 26-ին, երեքշաբթի օրը, սրբազան հայրը Մոնտեվիդեոյից մեկնում է Սան Պաուլո: Տեղի օդանավակայանում սրբազանին դիմավորում է Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակի Բրազիլիայի փոխանորդ Տ. Տաթև ծ. վրդ. Ղարիբյանը՝ քահանա հայրերի և Կենտրոնական վարչության անդամների հետ միասին:

Երկու շաբաթվա ընթացքում սրբազան հայրը այցելում է եկեղեցի, հայ դպրոց, Հ. Բ. Ը. Մ.-ի ընդհանուր կենտրոն, հայկական ակումբ և Մարաշցիների հայրենակցական միության կենտրոն՝ ամենուրեք խոսելով Հայ Եկեղեցու և Ս. Էջմիածնի նախախնամական դերի մասին հայ ժողովրդի պատմության ընթացքում: Ապա սրբազան հայրը հորդորում է ժողովրդին, որպեսզի ընդանք բոլորվեն եկեղեցու և դպրոցի շուրջ ու սկսեն համերաշխ գործակցություն՝ ի նպաստ գաղութի հայեցի պահպանման ու զարգացման:

Օգոստոսի 31-ին, կիրակի օրը, Սան Պաուլոյի Ս. Գևորգ Մայր եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Տաթև ծ. վրդ. Ղարիբյանը: Խուռներամ բազմության ներկայությամբ քարոզ է խոսում Սիոն սրբազանը և բոլորին հաղորդում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և կրկին կոչ է անում ժողովրդին՝ գործել համերաշխ Հայ Եկեղեցու պայծառության և հայ դպրոցի զարգացման ու պահպանության համար:

Հաջորդ կիրակի, սեպտեմբերի 7-ին, սրբազան հայրը պատարագի ընթացքում քարոզ է խոսում Օզասքո քաղաքի հայ եկեղեցում՝ անդրադառնալով քրիստոնեական սիրո և հավատքի մասին և հավատացյալ ժողովրդին կոչ է անում սիրել իրենց մայրենի Եկեղեցին, Ս. Էջմիածինը, Հայաստան աշխարհը, հայոց լեզուն ու մշակույթը:

Եվ այսպես, իր շուրջ մեկամսյա հովվական այցելություններից հետո Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը սեպտեմբերի 12-ին լավագույն տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:

Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության թեմի մեջ են մտնում չորս երկրներ՝ Արգենտինան, Բրազիլիան, Ուրուգվայն ու Չիլին:

Մի փոքրիկ համայնք է գործում նաև Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում:

Մոտավորապես 100.000 հայեր են ապրում Հարավային Ամերիկայի այս երկրներում, որտեղ գործում են 10 հայկական եկեղեցիներ և նույնքան հայկական վարժարաններ:

Միայն Արգենտինայում հայերեն լեզվով հրատարակվում են չորս թերթեր:

Ուրուգվայի համայնքն ունի նաև հայկական ռադիոյի ժամեր:

Հարավային Ամերիկայի հայ գաղութը գտնվում է բարեկեցիկ, բարգավաճ և կազմակերպված վիճակում: Եկեղեցական, ազգային, բարեգործական և մշակութային կազմակերպությունները եռանդուն աշխատանք են տանում՝ պահպանելու համար հայ լեզուն և մշակույթը, ազգային ավանդությունները ու հայկական ոգին:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 14—22-ը Ժնևի էկումենիկ կենտրոնում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը:

Այս առթիվ Ժնև էին ժամանել ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի շուրջ 120 անդամներ, խորհրդականներ, թղթակիցներ, դիտորդներ և այլ պաշտոնական եկեղեցական և աշխարհական հյուրեր, թվով 350 հոգի:

Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սույն նստաշրջանին ներկա գտնվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը՝ իբրև ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի անդամ:

Կենտրոնական կոմիտեի անդամները մեծ հետաքրքրությամբ ունկնդրեցին երկու կարևոր զեկուցումներ. առաջինը՝ ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի ատենապետ գերաշնորհ Էտ. արքեպիսկոպոս Սկոթի, իսկ երկրորդը՝ ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրի:

Ժողովականներն այնուհետև քննարկեցին վերոհիշյալ զեկուցումները և իրենց գնահատանքի խոսքն ուղղեցին զեկուցողներին:

Նստաշրջանի հետագա օրերին ժողովականներն իրենց աշխատանքները շարունակեցին երեք ենթահանձնաժողովներում և ընդհանուր քարտուղարությանը վերաբերող հանձնաժողովում:

Ապա վերոհիշյալ չորս խմբերում աշխատանքի արդյունքները բերվեցին ընդհանուր ժողովին, քննարկվեցին և վավերացվեցին Կենտրոնական կոմիտեի անդամների քվեարկությամբ:

Օգոստոսի 17-ին, կիրակի, հետ միջօրեի, ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեն առանձին շուքով նշեց ԵՀԽ-ի պատվո նախագահ դոկտ. Վիսերտ Հուֆթի ծննդյան 80-ամյակը, որը, իբրև հիմնադիրներից մեկը ԵՀԽ-ի, իր հուշերը պատմեց ներկաներին:

Ապա տեղի ունեցավ մասնավոր հյուրասիրություն և շնորհավորություններ: Այս առթիվ Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորական մի հեռագիր էր ուղարկել հարգելի դոկտ. Վիսերտ Հուֆթին հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անունից ամենաջերմ զգացումներով շնորհավորում ենք Ձեզ Ձեր ծննդյան ութսունամյակի առթիվ: Ձեր ողջ կյանքը, հատկապես այս վերջին տասնամյակների ընթացքում հանդիսացավ ավետարանական

մի սուրբ առաքելություն՝ ամբողջապես նվիրված համայն քրիստոնյաների եղբայրության ամրապնդմանը:

Թույլ տվեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղել Ձեզ մեր Տիրոջ օրհնություններն ու Մեր ամենաանկեղծ մաղթանքները Ձեր կենաց արևշատության և քաջառողջության համար: Թող Աստված միշտ օգնական լինի Ձեզ՝ շարունակելու Ձեր սուրբ առաքելությունը ի ծառայություն կենդանի Քրիստոսի և համայն մարդկության:

Եղբայրական սիրո ջերմ զգացումներով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
8 օգոստոս 1980 թ.»

Ի պատասխան Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագրի, դոկտ. Վ. Ա. Վիսերտ Հուֆթից ստացվեց հետևյալ հեռագիրը.

«Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք ինձ հայտնել իմ խորին շնորհակալությունը Ձեր սրտագին շնորհավորանքի և այն բարի մաղթանքների համար, որ բարեհաճել էիք ուղարկել ինձ իմ ծննդյան ութսունամյակի առթիվ:

Իմ թանկագին հիշողությունների անբաժան մասն են կազմում այն եղբայրական շփումները, որ ես ունեցել եմ Էջմիածնում և Ժնևում Ձերդ Սրբության և ձեր հարգարժան Եկեղեցու հետ: Ես չափազանց ուրախ եմ ստանալով Ձերդ Սրբության օրհնությունը և խնդրում եմ Ձեզ ընդունել իմ եղբայրական հարգալից զգացումների հավաստիքը:

ԴՈԿՏ. Վ. Ա. ՎԻՍԵՐՏ ՀՈՒՖԹ

Ժնև,
26 օգոստոս 1980 թ.»



Ժնևի էկումենիկ կենտրոնի տարեկան նստաշրջանի պատգամավորների մի խումբ

ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի նստաշրջանում քննության առնվեց նաև ԵՀԽ-ի առաջիկա Զ համաժողովի նշանաբանը: Հանձնաժողովներում երկար քննարկումներից և մտքերի փոխանակումներից հետո ներկաները կանգ առան «Հիսուս Քրիստոս կյանքն աշխարհի» նշանաբանի վրա և քվեարկվեցին ի նպաստ այդ նշանաբանի: Համաժողովը տեղի է ունենալու 1983-ին Կանադայի Վանկուվեր քաղաքում:

Նստաշրջանի մասնակիցները վերջում միահամուռ կերպով խնդրեցին ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրին, որ շարունակի իր պաշտոնը իբրև ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար մինչև 1984 թվականը: Վերջինս ընդունեց եղած առաջարկը՝ հակառակ իր ցանկության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՄՆ-Ի ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 22—25-Ը ԺՆԵՎՈՒՄ

Ժնևում հավաքված Սովետական Միության և ԱՄՆ-ի Եկեղեցիների ներկայացուցիչները (սովետական կողմից՝ 8 հոգի, ԱՄՆ-ի կողմից՝ 12 հոգի) պաշտոնական հանդիպում ունեցան Ժնևի Ճոն Նոքս տան մեջ՝ նյութ ունենալով «Սովետական Միության և ԱՄՆ-ի Եկեղեցիների ծառայությունը համագործակցության, խաղաղության և զինաթափման համար»:

Վերոհիշյալ թեմայի շուրջ առանձին զեկուցումներով հանդես եկան. Ռուս պրավոսլավ Եկեղեցու անունից՝ գերաշնորհ Յուվենալի միտրոպոլիտը, վարիչը Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի, դոկտ. Քլեր Ռենտալը՝ ընդհանուր քարտուղարը ԱՄՆ-ի ազգային Եկեղեցիների խորհրդի, վերապատվելի Ալեքսեյ Պուչկովը՝ ընդհանուր քարտուղարը Մոսկվայի ավետարանական-մկրտչականների միության, դոկտ. Ուիլիամ Թոմսոնը՝ պատասխանատու վարիչը ԱՄՆ-ի Փրեսպիթարյան միացյալ Եկեղեցու:

Երկու կողմերի ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակում ներկայացված զեկուցումների շուրջ:

Ապա կազմվեց երկու կողմերի համար ընդունելի մի հաղորդագրություն, որն ստորագրվեց միտրոպոլիտ Յուվենալիի և դոկտ. Ք. Ռենտալի կողմից: Երեք օր տևած այս ջերմ հանդիպումը նպաստեց երկու երկրների եկեղեցական ներկայացուցիչների բարեկամության սերտացմանը:

Արսեն եպիսկոպոս Բերբերյանը Ժնևում գտնված օրերին հետաքրքրվում է համայնքի եկեղեցական, մշակութային կյանքով և այդ առնչությամբ հանդիպումներ ունենում համայնքի հարգարժան ներկայացուցիչների հետ:

Օգոստոսի 17-ին, կիրակի, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի առթիվ, Ժնևի եկեղեցական վարչության հրավերով տեղի Ս. Հակոբ եկեղեցում Արսեն սրբազանը մատուցում է սուրբ պատարագ, ապա քարոզում օրվա մեծ տոնի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Մեծի Տանն Կիլիկիայի աթոռակից կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ը, որը օգոստոսի 14—22 օրերին մասնակցել էր Ժնևի էկումենիկ կենտրոնի Կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանին:

Նորին Սրբությունը խաղողօրհնեքի արարողության ժամանակ Ժնևի հայոց Ս. Հակոբ եկեղեցում խոսք է ուղղում հավատացյալներին:

Պատարագից հետո եկեղեցու սրահում տեղի է ունենում հյուրասիրություն եկեղեցու Տիկնանց Հանձնախմբի կողմից ի պատիվ Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևոր հյուրերի:

Արսեն եպիսկոպոս Բերբերյանը օգոստոսի 27-ին Մոսկվայի վրայով վերադառնում է հայրենիք՝ իր հետ բերելով Շվեյցարիայի հայության՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի նկատմամբ տածած որդիական սիրո և հավատարմության ջերմ զգացումները:



«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ» ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏՈՐ ԳԼԵՆ ԳԱՐՖԻԼԴ ՎԻԼՅԱՄՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի սեպտեմբերի 13—15 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում էր գտնվում «Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը՝ իր տիկնոջ հետ:

Սեպտեմբերի 14-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհարանի իր ընդունարանում Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի պատվարժան հյուրին և զրույց ունեցավ նրա հետ:

Զրույցն անցավ եղբայրական ջերմ ու սրտագին մթնոլորտում: Դոկտոր Վիլյամսի և Հայոց Հայրապետի միջև փոխանակվեցին հուշանվերներ:

Նույն օրը հարգարժան հյուրն իր տիկնոջ հետ Մայր տաճարում ներկա եղավ սուրբ պատարագի արարողությանը: Ս. պատարագը մատուցեց Տ. Արսեն եպիսկոպոսը: Պատարագից հետո Մայր Աթոռի վանական սեղանատանը Հայոց Հայրապետը հյուրերի պատվին տվեց ճաշկերույթ:

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, ժամը 16-ին, դոկտոր Վիլյամսը քաղաքավարական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի պաշտոնատեղի և ընդունվեց խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանի կողմից: Մայր Աթոռի մեծարգո հյուրի և պրն. Անդրանիկ Հասրաթյանի միջև տեղի ունեցավ զրույց: Զրույցին ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Մայր Աթոռում գտնվելու օրերին դոկտ. Վիլյամսն այցելեց Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Գեղարդ պատմական վանքեր, Հայ նահատակաց հուշարձան՝ Ծիծեռնակաբերդում, եղավ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան պետական Մատենադարանում, ուր նրան ջերմորեն ընդունեց Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը:

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, «Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» գլխավոր քարտուղարը հրաժեշտ տվեց Մայր Աթոռին և մեկնեց Թբիլիսի, որպես Վրաց Եկեղեցու հյուրը:

«Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը», որի կենտրոնը գտնվում է Ժնևում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ սերտորեն գործակցող, բայց նրանից անկախ գործող եկեղեցական մի կազմակերպություն է, որի կազմում ընդգրկված են 113 անդամ Եկեղեցիներ եվրոպական՝ շուրջ 25 տարբեր երկրներից: Հայ Առաքելական Եկեղեցին մի քանի տարուց ի վեր անդամակցում է վերոհիշյալ կազմակերպությանը:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՆՆՈՎԵՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Սույն թվականի հունիսի 15-ին Արևմտյան Գերմանիայի Հաննովեր քաղաքի եկեղեցական խորհրդի ու համայնքի նախաձեռնությամբ տեղի է ունենում էկումենիկ մի հանդիպում հայ համայնքի հետ՝ գլխավորությամբ Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ վարդապետ Գըլընճյանի:

Առավոտյան ժամը 10.30-ին Ֆրիդենս եկեղեցում, բազմաթիվ հայ և գերմանացի հավատացյալների ներկայությամբ, տեղի է ունենում աղոթք և ճառերի փոխանակում՝ նվիրված երկու Եկեղեցիների և ժողովուրդների բարեկամական միության ու եղբայրության:

Քաղաքի գերմանական երգչախմբի մի շարք հոգևոր երգեր կատարելուց հետո, հայոց երգչախումբը՝ ղեկավարությամբ պրն. Փոլ Ավգերօղլույանի, կատարում է Կոմիտասյան «Սո՜ւրբ, Սու՜րբ...», «Խորհուրդ խորին», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» և «Մարմին Տէրունական» տաղերը՝ մեծ բավականություն պատճառելով հյուրերին:

Արարողությունից հետո համայնքապետ Կարլ Ֆրիդրիխը, ողջունելով բոլոր հավատացյալների ներկայությունը, հրավիրում է Հակոբ վարդապետին՝ ներկայացնելու իր համայնքն ու եկեղեցին: Տ. Հակոբ վարդապետը գերմաներեն լեզվով նախ շնորհակալություն է հայտնում այդ հանդիպման ու հյուրասիրության համար, ապա համառոտակի ներկայացնում Հայ Եկեղեցին, նրա առաքելական ծագումը, անցյալում հայ ժողովրդի կրած տառապանքներն ու նահատակությունները՝ «վասն Յիսուսի և վասն Հայրենեաց»:

Այնուհետև Եկեղեցիների էկումենիկ հարաբերությունների մասին ասում է.

«Էկումենիկ շարժումը դրական և քաջալերելի մի երևույթ է Եկեղեցու կյանքում, որտեղ Եկեղեցիներն էլ իրավունք ունեն հավասար ընդ հավասարի զրույցի և իրար հետ գործակցության ուղի բռնելու՝ իրագործելով մեր Փրկչի այն բացառիկ ցանկությունը, որ է՝ միությունը մեր ամենքին:

Եկեղեցիների տարբեր ավանդությունները երբեք չեն կարող բաժանման երևույթ նկատվել: Մենք քաջ գիտենք, որ յուրաքանչյուր ազգ տարբեր նկարագիր և խառնվածք ունի, որ յուրաքանչյուր ազգ իրենից ներկայացնում է քրիստոնեական Ավետարանով ապրված մի կյանք»:

Այնուհետև հայր սուրբը խոսում է նաև Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի (1167—1173) Եկեղեցիների միության վերաբերյալ կատարած աշխատանքների մասին:

Հանդիպման վերջում տեղի է ունենում հավատացյալների համայնական սիրո ճաշ: Սեղանի շուրջ հարցազրույց է տեղի ունենում երկու Եկեղեցիների հավատացյալների միջև՝ բարեկամական մթնոլորտում:

Հաջորդ օրը այս հանդիպման մասին արձագանքում է նաև գերմանական մամուլը:



ԳԱՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐ ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա-Ի

Սույն թվականի սեպտեմբերի 14-ին Դամասկոսի ասորական Ս. Գևորգ եկեղեցում տեղի է ունեցել Անտիոքի և Համայն Արևելքի ասորիների նորընտիր Պատրիարք և Ասորական ուղղափառ Եկեղեցու գերագույն Պետ Նորին Սրբություն Մար Իգնատիոս Զաքքա Ա-ի ընտրության և գահակալության հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա են եղել Սիրիայի Հանրապետության նախագահ Հաֆեզ Ասադի ներկայացուցիչ Աբդել Քերիմ Ադին, պետական մինիստր Անուար Համադեն, Լիբանանի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ մինիստր Միշել Մըրը և այլ պետական պաշտոնական անձինք:

Հանդիսությանը ներկա են եղել նաև քրիստոնեական տարբեր հարանվանությունների և դիվանագիտական մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Հայրապետի անունից Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրել է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր 4 սեպտեմբեր 1980 թվակիր հեռագրով շնորհավորեց Մար Իգնատիոս Պատրիարքի ընտրությունը: Հայոց Հայրապետի հեռագիրը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի օգոստոսի համարում՝ էջ 10:

Պատրիարք Մար Իգնատիոս Զաքքա Ա-ն ծնվել է 1933 թվականին, Մուսուլում: Նախնական ուսումը ստացել է համայնքային դպրոցում, ապա սովորել է ծննդավայրի Ս. Աֆրամ աստվածաբանական ճեմարանում և այն ավարտել 1954 թվականին: 1955 թ. եղել է Ասորի Եկեղեցու պատրիարքի քարտուղար: 1957 թ. նոյեմբերի 17-ին ձեռնադրվել է վարդապետ հանգուցյալ Յակոբ Գ Պատրիարքի ձեռամբ: 1960 թ. մեկնել է Նյու Յորք, որտեղ երկու տարի սովորել է եպիսկոպոսական Եկեղեցու աստվածաբանական վարժարանում, հմտանալով անգլերեն և արևելյան լեզուների, ինչպես նաև հովվական աստվածաբանության մեջ:

1962 և 1963 թթ. մասնակցել է Վատիկանի էկումենիկ երկրորդ ժողովի երկու սեսիաներին, որպես դիտորդ:

1963 թ. նոյեմբերի 17-ին ձեռնադրվել է եպիսկոպոս Մուսուլի վրա և ստացել Մար Սևերիոս Զաքքա անունը: 1969 թ. տեղափոխվել է Բաղդադ և գործել այստեղ որպես թեմի առաջնորդ մինչև իր Պատրիարք ընտրությունը: 1980 թ. հուլիսի 11-ին նա ընտրվել է Պատրիարք Ասորի ուղղափառ պատմական Եկեղեցու: Նա հեղինակ է եկեղեցագիտական մի շարք գրքերի: Ունի դոկտորի աստիճան:

Սեպտեմբերի 19-ին, ուրբաթ օրը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, ընկերակցությամբ Տ. Սահակ քհն. Ալակերտյանի, պաշտոնական այցելություն է տալիս նորընտիր պատրիարքին և զրույց ունենում նրա հետ՝ ջերմ և սիրալիր մթնոլորտում:

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐ ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա



ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՏԱՇՔԵՆԴՈՒՄ

Սեպտեմբերի 9—12 օրերին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում տեղի ունեցավ Սովետական Միության մուսուլմանների իսլամական կոնֆերանսը՝ Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների հոգևոր խորհրդի նախագահ մուֆթի Զիաուտդինխան Բին Իշան Բաբախանի հրավերով:

Կոնֆերանսի բնաբանն էր՝ «Հիջրեթի 15-րդ դարը պետք է լինի աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության դար»:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Սովետական Միության տարբեր հանրապետությունների (Ուզբեկստան, Ղազախստան, Տաջիկստան, Կիրգիզիա, Թուրքմենստան, Ադրբեջան), ինքնավար հանրապետությունների (Բաշկիրիա, Թաթարստան, Դաղստան, Չեչենո-Ինգուշիա, Կաբարդինա-Բալկարիա), տարբեր մարզերի ու շրջանների մուսուլմանների պատվիրակությունները, թվով 173 պատգամավոր:

Կոնֆերանսին ներկա էին նաև 71 ներկայացուցիչներ Աֆրիկայի (Ալժիր, Գանա, Լիբիա, Մավրիտանիա, Մալի, Սենեգալ, Սուդան, Տանզանիա, Տոգո, Ուգանդա, Բենին, Գվինեա, Եթովպիա), Ասիայի (Աֆղանստան, Եմենի Արաբական Հանրապետություն, Եմենի Դեմոկրատական Հանրապետություն, Քուվեյթ, Բանգլադեշ, Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետություն, Շրի Լանկա, Պակիստան, Ճապոնիա), Մերձավոր Արևելքի (Հորդանան, Սիրիա, Լիբանան, Թուրքիա, Կիպրոս), Եվրոպայի (Բուլղարիա, Ավստրիա) երկրներից: Բացի այդ, հյուրի հանգամանքով ներկա էին Սովետական Միությունում գործող մուսուլմանական տարբեր հաստատությունների շուրջ 800 ներկայացուցիչներ:

Կոնֆերանսին, որպես դիտորդ, հրավիրված էին և ուղերձներով հանդես եկան Ռուս պրավոսլավ Եկեղեցու, Համառուսական ավետարանական խորհրդի, Վրաց ուղղափառ Եկեղեցու, Լատվիայի լութերականների, ինչպես նաև Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի, Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի և այլ եկեղեցական հաստատությունների ներկայացուցիչները:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թոփուզյանը:

Կոնֆերանսում վեց լեզվով (հայերեն, արաբերեն, ռուսերեն, ուզբեկերեն, ֆրանսերեն, անգլերեն) հրապարակվեց Տ. Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի հետևյալ խոսքը՝ ուղղված իսլամական կոնֆերանսի մասնակիցներին:

5 սեպտ. 80 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՄԵԾ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՋՐԵԹԻ ՀԱԶԱՐՀԻՆԳՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Հարգարժան եղբայրներ Մեր,

Հայ Առաքելական Եկեղեցու և Սովետական Հայաստանում ու արտասահմանում ապրող հայ հավատացյալների անունից, ուրախ սրտով ողջունում ենք ձեր կոնֆերանսը, ուր հավաքված եք ոգեկոչելու մեծ հիշատակը Մուհամեդ մեծ մարգարեի, որ մեր օրերի հոգևոր-բարոյական արժեք ու

այժմեություն է ներկայացնում ոչ միայն իսլամական աշխարհի համար, այլ նաև համայն մարդկության՝ հատկապես իր խաղաղասիրական և մարդասիրական պատգամներով:

Մենք հավատում ենք, թե բոլոր պատմական կրոնները և կրոնական կազմակերպությունները, որոնք դավանում են միևնույն Աստծուն, պետք է իրար մոտենան, իրար ավելի լավ ճանաչեն ու գնահատեն, և ձեռք-ձեռքի տված միատեղ աղոթեն ու գործեն, որպեսզի մեր օրերի ժողովուրդներն ու պետությունները գտնեն և ամրապնդեն խաղաղ գոյակցության, համերաշխ գործակցության ուղիները՝ հերջանկություն աշխարհի բոլոր մարդկանց:

Վստահ ենք, թե այս մարդասիրական ազնիվ ճանապարհին ձեր կոնֆերանսի որոշումներն ու միջոցառումները կարևոր մի նպաստ պիտի հանդիսանան:

Մաղթում ենք ձեր աշխատանքներին լիակատար հաջողություն Բարձրյալն Աստուծո օգնականությամբ:

Եղբայրական սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կոնֆերանսում լսվեցին տարբեր մայրցամաքների մուսուլմանական ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակը և քաղաքական տրամադրություններն արտահայտող բազմաթիվ զեկուցումներ, հաղորդումներ:

Կոնֆերանսի աշխատանքներն ավարտվելուց հետո տարբեր երկրներից հրավիրված հյուրերին հնարավորություն տրվեց այցելելու Բուխարա, Սամարղանդ, Ալմա Աթա և այլ քաղաքներ: Նրանք այդ վայրերում ծանոթացան Սովետական Միության մուսուլմանների մշակույթի և տնտեսական նվաճումներին, կենցաղին:



ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ*

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սյունյաց աշխարհի պատմության եկեղեցական ու քաղաքական դեպքերով հարուստ ու նշանակալից մի ժամանակաշրջանում է ապրել ու ստեղծագործել միջնադարյան հայ մատենագրության և մշակույթի ականառու դեմքերից մեկը՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը:

Աստվածաբան, գիտնական պատմիչ, եկեղեցական ու քաղաքական ականավոր գործիչ Ստ. Օրբելյանի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են համեմատաբար հարուստ տեղեկություններ իր իսկ աշխատություններում: Օրբելյանը «Պատմութիւն Տանն Սիսական» աշխատության 65-րդ և 70-րդ գլուխներում խոսում է նաև իր մասին՝ որպես Սյունիքի միտրոպոլիտ և առաջնորդ: ԺԳ դարի վերջերից մինչև ԺԴ դարի առաջին տարիները Ստեփանոս Օրբելյանը, վարելով Սյունիքի միտրոպոլտի պաշտոնը, Հայաստանի այդ բավականաչափ ընդարձակ երկրամասի եկեղեցական, քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալի դեր է խաղացել:

«Հավանաբար, Օրբելյանը նույնպես մեր անցյալի շատ հեղինակների նման իր մասին ոչինչ չասեր, եթե պաշտոնի բերումով միջամուխ չլիներ այն երկրամասի եկեղեցական ու քաղաքական անցուդարձերին, որի ընդարձակ պատմությունը գրել է ինքը»[1]:

Օրբելյանը փոքր հասակից որդեգրվում է իր «անզաւակ» հորեղբոր՝ Սյունիքի ամենանշանավոր իշխաններից մեկի, իր խոսքերով ասած՝ «մեծ և արքայաշուք» Սմբատ իշխանի կողմից: Վերջինս նրան տալիս է «յուսումն գրոց եւ ի հրահանգս քահանայութեան»[2]:

1273 թվականին, Սմբատ Օրբելյանի մահվանից հետո, Սյունիքի իշխանության հետ միասին, Ստեփանոս Օրբելյանի բախտի տնօրինությունն անցնում է իր հորը՝ Տարսայիճ իշխանին: Ստեփանոսը կրթվում է «ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան»[3] և շուտով դառնում է դպիր, իսկ հետո՝ սարկավագ: 1280 թվականին, Տարսայիճի նախաձեռնությամբ Նորավանքում հրավիրված «հոգեւորականաց» ժողովից

---

* Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը հոգևոր ճեմարանն ավարտելիս ավարտաճառի համար նյութ էր ընտրել «Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն և նրա նորագյուտ հատվածները» թեման:

Աշխատությունը բաղկացած է երեք մասերից: Առաջին մասում ներկայացվում է Ստեփանոս արքեպ. Օրբելյանի կյանքը, գործունեությունը և մատենագրական վաստակը, երկրորդ մասում՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի գրության դրդապատճառը, հրատարակությունը, Երևանի Մատենադարանում պահվող այդ աշխատությանն ձեռագրերը և նրանց բովանդակությունը: Իսկ վերջին մասում խոսվում է ժողովածուի նորագյուտ հատվածների ու նրանց արժեքի մասին և հավելվածի կարգով ներկայացվում են նորագյուտ հատվածների համեմատական բնագրերը:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում այդ աշխատությունից մի հատված:

[1] **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1979, էջ 194:

[2] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 307:

[3] Նույնը, էջ 349:

անմիջապես հետո, Ստեփանոսը ձեռնադրվում է քահանա: «Եւ մանկական տիօք կարգեալ կղերիկոս,—ասում է նա իր համար,—վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից ... և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»[4]:

Եթե ընդունենք, որ այդ ժամանակ Օրբելյանն առնվազն պետք է 25—30 տարեկան լիներ, ուրեմն նրա ծննդյան ժամանակը մոտավորապես ընկնում է 1250-ական թվականներին[5]:

Ինչպես երևում է, իր գիտելիքների ու ընդունակությունների շնորհիվ Ստեփանոս Օրբելյանը նոր կոչման մեջ շատ շուտ է աչքի ընկնում ու առաջադիմում, որովհետև քահանա ձեռնադրվելուց ընդամենը հինգ տարի անց, 1285 թվականին, հայրը եպիսկոպոսական ժողովի որոշմամբ նրան ուղարկում է Կիլիկիա՝ Հռոմկլայի հայոց կաթողիկոսի մոտ՝ եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Սակայն մինչև Ստեփանոսը հասնում է Կիլիկիայի Սիս քաղաք՝ Հակոբ կաթողիկոս Կլայեցին (1268—1286) վախճանվում է: Դրա համար էլ նա հարկադրված է լինում երեք ամիս ապրել Ադանայում, որպես Կիլիկիայի Հայոց Լևոն Գ թագավորի (1270—1289 թթ.) հյուրը, մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը:

Ադանայում Ստեփանոսը շուտով իր համար ստեղծում է մտերմական ու անկեղծ մի միջավայր, որի ներկայացուցիչների վրա նա թողնում է գիտակ ու գործունյա մարդու տպավորություն: Նրան առանձնապես շատ է հավանում թագավորը: Վերջինս նույնիսկ Ստեփանոսին առաջարկում է ընդունել Հայոց Կաթողիկոսության թափուր Աթոռը:

Ստեփանոսի մերժման վրա «մեծ աշխարհաժողով» են գումարում, և կաթողիկոս է ընտրվում Կոստանդին եպիսկոպոսը: Կաթողիկոսական ընտրությունից և օծումից անմիջապես հետո, 1286 թվականի գարնանը, Զատկի օրը, ապրիլի 14-ին, Ստ. Օրբելյանը ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում Սյունիքի միտրոպոլիտ և Արևելյան Հայաստանի հոգևորականության գլուխը: Նույն թվականին նա Կիլիկիայից վերադառնում է հայրենիք:

Առաջին և ամենադժվարին խնդիրը, որը ծագում է նրա առաջ, անհնազանդ և կենտրոնախույզ տրամադրություններ ունեցող հոգևորականներին զսպելն էր, մարդիկ, որոնք, ինչպես Օրբելյան պատմիչն է ասում, «բազում ոճիրս սերմանեցին» Սյունիքում:

Սակայն Օրբելյանն իր հակառակորդների դեմ հաջողություն չէր ունենա, եթե այստեղ, Հայաստանում, նա չկարողանար ձեռք բերել մոնղոլ իշխանավորների հովանավորությունը: Օրբելյանը, Կիլիկիայից վերադառնալուց հետո, իսկույն և անձամբ մեկնում է մոնղոլական կառավարիչ Արղունի մոտ (այդ ժամանակաշրջանում Հայաստանը գտնվում էր մոնղոլների տիրապետության տակ): Արղունի պալատում Սյունյաց միտրոպոլտին ցույց են տալիս արժանավայել ընդունելություն: Արղունը նրան որպես պատիվ իր ձեռքով հագցնում է «հայրապետական» զգեստներ, ման է ածում մոնղոլական բանակում ու մեծարում:

Սակայն, ինչպես պատմությունը մեզ ցույց է տալիս, Արղունի մահվանից հետո Օրբելյանի իրավունքները սկսում են խախտվել, և նա հարկադրված է լինում երկրորդ անգամ մեկնել Թավրիզ՝ Էլխան Քեյխաթունի մոտ, որը մի նոր հրամանով կրկին հաստատում է իր նախորդի կողմից Օրբելյանին տրված իրավունքները:

1290-ական թվականներին, Քեյխաթունի հաջորդ Ղազան խանի ժամանակ, Ստեփանոս Օրբելյանը երրորդ անգամ է լինում Թավրիզում: Ղազան խանի կողմից նրան տրված իրավունքներն ու արտոնությունները գերազանցում են բոլոր նախորդ տրվածներին:

Այդ բոլորից հետո Ստ. Օրբելյանը, եկեղեցական վեճերն ու պառակտումները արմատախիլ անելու համար, դիմում է վճռական միջոցների:

Պատմությունից մեզ հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Սյունյաց Աթոռը ոչ միայն կորցրել էր իր կարևորությունը, այլև «երկփեղկված և բաժնված էր երկու Աթոռներու»[6]: Տաթևի և Վայոց ձորի Նորավանքի առաջնորդարանները բաժանվել էին միմյանցից և գործում էին իրարից գրեթե անկախ: Այդ տխուր իրողության առջև բնականաբար անտարբեր չէր կարող մնալ, Սյունյաց մտիրոպոլտական Աթոռը իր նախկին փառքին վերադարձնելու տեսիլքը ունեցող և միաժամանակ դարի եկեղեցական, քաղաքական իրադրությունը լավ հասկացող Օրբելյան Սրբազանը: Ուստի նա Տաթևի և Նորավանքի առաջնորդությունները միացնելով, դարձրեց եկեղեցական «մեկ միավոր»[7] և ղեկավարությունը վերցրեց իր ձեռքը:

---

[4] Նույնը, էջ 349—350:

[5] Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V—XVIII դդ.), Երևան, 1976, էջ 340:

[6] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Պեյրութ, 1960, հտ. Բ, էջ 1702:

[7] **Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան**, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 29:

Ստ. Օրբելյանն այնուհետև մեծ ուշադրություն է դարձնում Սյունիքում եղած գրչության կենտրոնների վրա: Միաբանություններին ու հոգևոր հաստատություններին նյութապես ապահովելու համար նա նույնիսկ իր անձնական կալվածքներից ու գյուղերից էր առանձին հատկացումներ կատարում:

1297 թվականին Սյունիքի միտրոպոլիտն ավարտում է Տաթևի վանքի հիմնովին վերակառուցումը, որը, ինչպես ինքն է վկայում, մինչև հատակը փլված էր:

Պետք է նկատել, որ ԺԳ դարում Սյունիքում վերականգնված կամ նոր կառուցված վանքերն ու եկեղեցիները լոկ հոգևոր կենտրոններ չէին: Նրանք միաժամանակ միջնադարյան Հայաստանի մտավոր զարգացման վառ օջախներ էին, որտեղ ապրել ու ստեղծագործել են գիտության ու արվեստի ամենաբազմազան բնագավառների ականավոր շատ հոգևորականներ, այդ թվում՝ Խաչատուր Կեչառեցին, Մխիթար Սասնեցին, Կիրակոս Երզնկացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Մոմիկը և ուրիշներ: Մեծ թվով գիտնականներ ու արվեստագետներ ունեցող Վայոց ձորն էր, որ 1280 թվականին ծնունդ տվեց Գլաձորի համալսարանին, որի բարգավաճմանն, անշուշտ, մասնակցել է նաև Ստեփանոս արքեպ. Օրբելյանը: «Նրա հաղորդումներից պարզվում է, որ Գլաձորի համալսարանի ու Սյունիքի առաջավոր մտավորականությունը չէին սահմանափակվում միայն եկեղեցական ու գիտական խնդիրների շրջանակներով, այլև վճռական դեր էին կատարում երբեմն ամբողջ հայ ժողովրդի շահերը շոշափող հարցերի լուծման ժամանակ»[8]: Երկրի եկեղեցական ու քաղաքական կյանքում առանձնապես մեծ է եղել Ստ. Օրբելյանի դերը, որն իր հետևողականության ու հաստատակամության շնորհիվ հաղթանակ տարավ հոգևորականության այն թևի դեմ, որը Գրիգոր Զ Անավարզեցի կաթողիկոսի (1293—1307) հետ ԺԳ դարի վերջերին ձգտում էր Հայոց Եկեղեցին զրկել իր ինքնուրույնությունից և այն ենթարկել Հռոմի Պապի գերիշխանությանը (այս մասին կանդրադառնանք քիչ ավելի ուշ):

Ստ. Օրբելյանն իր կյանքի վերջին տարիները նվիրել է հայ մատենագրության զարգացման, Հայ Եկեղեցու ուղղափառության պահպանման ու նրա հաղթանակին: Նա վախճանվել է 1305 թվականին[9], իր գործունեության ծաղկման ու բուռն վերելքի շրջանում՝ դեռ չբոլորած իր վաթսունամյակը: Նրա գերեզմանը գտնվում է Հայկական ՍՍՀ Եղեգնաձորի շրջանի Ամուղու գյուղի մոտ գտնվող Նորավանքի բակում:

ՍՏ. ԱՐՔԵՊ. ՕՐԲԵԼՅԱՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ
(Ընդհանուր ակնարկ)

Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանն իր՝ համեմատաբար ոչ երկարատև կյանքի ընթացքում, եկեղեցական ու քաղաքական կարևորագույն անցուդարձերին ակտիվորեն մասնակցելու հետ միասին, մինչև կյանքի վերջին տարիներն էլ շարունակել է իր ստեղծագործություններով հարստացնել հայ մատենագրության գանձարանը: Նրա անունով պահպանվել ու մեզ են հասել իրենց բնույթով պատմական, դավանաբանական ու գրական արժեք ներկայացնող մի քանի աշխատություններ:

Պատմական արժեք ներկայացնող աշխատություններն են.

Ա.— «Պատմութիւն Տանն Սիսական»[10]. գիրքը բաղկացած է 73 գլուխներից: Օրբելյանը, որպես սյունեցի, ցանկացել է գրել Սյունյաց մեծ նախարարների և Սյունյաց աշխարհի եկեղեցական ու քաղաքական ամբողջական պատմությունն ու աշխարհագրությունը և նշում է, որ Մամիկոնյանները, Բագրատունիները, Արծրունիները ունեցել են իրենց տոհմական պատմիչները, իսկ Սյունեցիք՝ ոչ: Մեր գրավոր աղբյուրներում, --ասում է նա,—շատ քիչ բան գտանք սյունեցի իշխանների պատմության մասին, և ապա, ուսումնասիրելով, որոշեցի գրել «զպայազատութիւն նախարարութեան և զմեծ նահապետութիւն բարձր իշխանու-

[8] **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, նույնը, էջ 195:

[9] Հ. Ղևոնդ Ալիշանը և Կարապետ Կոստանյանցը Ստ. Օրբելյանի մահվան թվականը համարում են 1309-ը, իսկ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը՝ 1304-ը, մինչդեռ նրա գերեզմանաքարն ունի հետևյալ արձանագրությունը. «Ի թուին ՉԾԴ (1305), այս է շիրիմ հանգստեան մեծի միտրոպոլտի Սիւնեաց Ստեփաննոսի»: Մանուկ Աբեղյանը ևս ընդունում է 1305 թվականը:

[10] Ցուրաքանչյուր գործի մասին խոսելիս, ստորև նշում ենք նրա հրատարակությունները:

ա) Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Որբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, հտ. Ա, Բ, Փարիզ, 1859:

բ) Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:

գ) **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:

թեանս Սիւնեաց և զնախագահութիւն վսեմական և Աստուածամեծար Աթոռոյ հայրապետութեան (եպիսկոպոսություն)» պատմությունը:

Օրբելյանի պատմությունը կարելի է անվանել տոհմային պատմություն, որովհետև այն սկսում է Ադամից, Սյունյաց տոհմի նահապետ Սիսակից և հասցնում մինչև իր օրերը:

Ստ. Օրբելյանը պատմությունը սկսել է գրել 1297 թվականին և այն ավարտել 1299 թվականին:

Բ.— Ստ. Օրբելյանին է վերագրվում պատմագիտական մի այլ աշխատություն՝ «Ժամանակագրութիւն» վերնագրով: Թեև այդ աշխատությունն Օրբելյանին պատկանելու հարցը վիճարկվում է, բայց քանի որ այն հրատարակվել[11] է մեր հեղինակի անունով, ուստի անհրաժեշտ ենք համարում ընթերցողին մի քանի խոսքով ծանոթացնել նաև այդ մասին:

Հեղինակն այս աշխատանքը փաստորեն ձեռնարկել է 12-րդ դարի նշանավոր հայ պատմիչ-ժամանակագիր Սամվել Անեցու նույնանման աշխատությունը շարունակելու և լրացնելու դիտավորությամբ:

Օրբելյանին վերագրվող այս աշխատությունը հասցվում է մինչև 1290 թվականը և ավարտվում մեր պատմիչի հոր՝ Տարսայիճ Օրբելյանի մահվան ու Նորավանքում թաղվելու հիշատակումով:

Փոքրածավալ այդ «Ժամանակագրութիւնը» իր պարունակած փաստերով ու թվականներով կարևոր ճշտումներ ու լրացումներ է մտցնում «Ժամանակագրության» ընդգրկած տարիների պատմության մեջ:

Գ.— Ստ. Օրբելյանը հանդես է եկել նաև իբրև բանաստեղծ: Նա իր հայրենասիրական գաղափարներն ու ձգտումները ավելի խտացված ու ընդգծված ձևով արտահայտել է «Ողբ ի սուրբ Կաթուղիկէն»[12] քերթվածի մեջ, որը գրել է իր մահից մի քանի տարի առաջ. 1299 կամ 1300 թվականին:

Այն գրելու հորդորողներից առաջինը եղել է ժամանակի նշանավոր գիտնական ու բանաստեղծ Խաչատուր վարդապետ Կեչառեցին:

Օրբելյանն իր գաղափարներն ու մտքերը արտահայտել է դիմառնաբար: Նա Կաթողիկեի բերանով ողբում է Հայաստանի քաղաքական անկախության կորուստը, օտարների տիրապետությունը, երկրի անկյալ վիճակը, վերջում ցաքուցրիվ եղած հայությանը կոչ է անում վերադառնալ հայրենիք և խնամել նրան, որպես զավակը՝ ծերացած ծնողին: Հեղինակը հավատացած է, որ հայ ժողովրդի վիշտն ու տառապանքը անպայման վերջ կունենան: Օրբելյանի «Ողբը» ըստ էության մի կոչ էր՝ ուղղված ամբողջ հայ ժողովրդին՝ հագեցված նրա պետական անկախության վերականգնման ցանկությամբ:

Օրբելյան արքեպիսկոպոսի գրչին են պատկանում նաև դավանաբանական բնույթի մի քանի ստեղծագործություններ: Հավատարիմ մնալով Հայ Եկեղեցու ուղղափառ դավանության ավանդներին, նրա ստեղծագործությունները ուրույն տեղ են գրավում հայ դավանաբանական գրականության անդաստանում:

Այդ ստեղծագործություններն են՝

ա) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»[13] մեծածավալ ժողովածուն, որը գրել է 1302 թվականին:

բ) «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի»[14] թուղթը, որը գրել է 1302 թվականին Խաչատուր վարդապետ Կեչառեցու խնդրանքով:

գ) «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ...»[15]:

դ) «Տեսիլ Ս. Մեթոդի՝ եպիսկոպոսին Պատարայ և վկայի, յաղագս անցելոյն, ներկայիս և ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց», թարգմանել և մտցրել է իր պատմության իբրև 31-րդ գլուխ:

Ահա և Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի մատենագրական ժառանգությունը, որով նա անմահացրել է իր անունը հայ միջնադարյան մշակույթի պատմության և մատենագրության ակնառու գործիչների փաղանգում:

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ»[16] ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԳՐԵԼՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԸ

ԺԳ—ԺԴ դարերում Սյունիքի մտավորականության առաջավոր ներկայացուցիչնե-

[11] Աշոտ Աբրահամյան, Ժամանակագրութիւն Ստեփանոս Օրբէլեանի, Երևան, 1942:

[12] Ստ. Օրբելյան, Ողբ և հառաչանք ի դիմաց մօրըս մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Կալկաթա, 1846: Ողբ ի սուրբ Կաթուղիկէն, Թիֆլիս, 1885:

[13] Ժողովածուի մասին կխոսվի առանձին գլխով:

[14] Թուղթը հրատարակվել է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի մեջ, որպես 11-րդ գլուխ:

[15] Այս թուղթը ևս հրատարակվել է նույն ժողովածուի մեջ, որպես 12-րդ գլուխ: Օրբելյանը սույն թուղթը ընդգրկել է իր «Պատմության» մեջ, որպես 68-րդ գլուխ:

[16] «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողո-

որը իրենց գործունեությամբ չէին սահմանափակվում միայն եկեղեցական հարցերի շրջանակներով, այլ նաև ներգործուն դեր էին կատարում երկրի քաղաքական կյանքում:

Այդ խնդրում առանձնապես մեծ է եղել Ստեփանոս Օրբելյանի դերը, նրա դիրքորոշումն ու սկզբունքային պայքարը ընդդեմ Կիլիկիայի հոգևորականության այն թևի, որը կաթողիկոսի հետ միասին, հատկապես ԺԳ դարի վերջերին, ջերմ պաշտպան էր, հայ և կաթոլիկ Եկեղեցիների մերձեցման, հանուն եկեղեցական միության:

Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Գրիգոր Զ Անավարզեցի կաթողիկոսի նման ընթացքի մասին, ասում է, որ նա «սխալեաց մեծապէս և ի բաց եկաց ի ճշմարտութենէն, զի թողեալ զբնական և զհայրենի շաւիղս նախնեացն սրբոց՝ հետեւեցաւ ընդ թիւր և զարտուղի ընթացս Յունաց... և սկսաւ առ սակաւ-սակաւ զամենայն աւանդութիւնս Հոռոմց Եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս Եկեղեցի և ի մերոյս ի բաց քեցել մի մի»[17]:

Հեռատես պատմիչը, խոր կսկիծով հիշատակելով վերոհիշյալ փաստը, առանձնապես երկյուղ էր կրում, որ այդ հողի վրա Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի միջև կարող է ստեղծվել անցանկալի հակադրություն և այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Արևելյան Հայաստանը կոխկըրտվում էր մոնղոլների ձիերի սմբակների տակ, իսկ Կիլիկյան Հայկական Թագավորությունը տարուբերվում էր մի կողմից մոնղոլական, մյուս կողմից՝ Բյուզանդիայի, Եգիպտոսի և հարևան մյուս իշխանությունների մահաբեր փոթորիկների մեջ:

Ստեփանոս Օրբելյանի և նրա համախոհների հակա-կաթոլիկական վճռական ելույթը անշուշտ այն ժամանակվա համար ուներ առաջադիմական նշանակություն, որովհետև դրանով ոչ միայն պայքար էր ծավալվում օտար Եկեղեցու ազդեցությունների դեմ, այլև Հռոմի Պապի, եվրոպական տիրակալների միջամտությունների դեմ հայերի ներքին կյանքին, միջամտություններ, որոնք շատ հաճախ քողարկվում էին կրոնական ծածկոցով[18]:

Արտահայտելով իր գաղափարակիցների համոզմունքները, Ստեփանոս Օրբելյանը նպատակ ուներ հակահարված տալ քաղաքական ինքնուրույնությունը կորցրած, բզկտված ու օտարի լծի տակ հեծող հայ ժողովրդի մեջ խռովություն և բաժանության սերմեր ցանողներին, որոնց գործելակերպը կարող էր է՛լ ավելի դառն հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար:

Եկեղեցական ու քաղաքական վեճերի այս բուռն ընթացքի ժամանակ, 1297 թվականին, Գրիգոր Անավարզեցու հատուկ հանձնարարականով Սյունիք է գալիս կաթողիկոսի պատգամավորը՝ Կոստանդին եպիսկոպոս Կեսարացին: Կոստանդին եպիսկոպոսը համարվում էր կաթողիկոսի աջ թևը: Կիլիկիայի պատգամավորը Արևելյան Հայաստանի հոգևորականության հասցեով բերել էր Գրիգոր Անավարզեցու պաշտոնական առաջարկությունը՝ հայկական դավանանքի ու ծեսերի մեջ նորաձևություններ մտցնելու վերաբերյալ: Ուրեմն կաթողիկոսի պաշտոնական առաջարկությանը անհրաժեշտ էր տալ նաև պաշտոնական պատասխան, որը պետք է արտահայտեր Արևելյան Հայաստանի եկեղեցական դասի և Սյունիքի նախարարների կարծիքը: Դրա համար Անավարզեցու առաջարկությունը հիմնավորապես քննելու նպատակով Սյունյաց աշխարհի միտրոպոլիտը հրավիրում է հատուկ մի ժողով՝ եկեղեցականների և աչքի ընկնող ազնվականների մասնակցությամբ, որպեսզի ոչ միայն իր կողմից անհատապես, այլև «խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց» պատասխան տան կաթողիկոսին: Ժողովի մասնակիցները հարցի քննարկմանը ցուցաբերում են միասնական և հաստատական վերաբերմունք և միաձայն որոշում մերժել կաթողիկոսի առաջարկած բոլոր «բարեփոխումներն» ու «նորաձևությունները» և անխախտ պահել հայ ուղղափառ դավանանքի ավանդական սկզբունքները:

Ստորև թվարկենք Հռոմի կողմից Անավարզեցի կաթողիկոսին առաջարկված «զանազան կետերը», որոնք և վերջինս իր պատգամավորի միջոցով ուղարկել էր իրենց հավատքի մեջ հաստատուն և կայուն արևելյան վարդապետներին: Արևելյան վարդապետների կողմից «հրաժարական» կոչված անընդունելի կետերը հետևյալներն էին.

ա) Պատարագի հացի թթխմորի և բաժակի մեջ ջուր խառնելու հարցը, որոնք օտար էին համարվում Ավետարանի ոգուն.

բ) Մի նշխարով ութ կամ տասը պատարագ մատուցելը.

գ) Համաձայն չէին մտնել Հռոմեական Եկեղեցի և տոնակից կամ հաղորդակից լինել.

վածոն հրատարակվել է ընդամենը մեկ անգամ, Կ. Պոլսում, 1756 թ., որի մասին ավելի մանրամասն կխոսենք առանձին:

[17] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն Տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 327:

[18] **Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան**, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 88:

դ) Ծնունդը կամ Հայտնությունը չէին ուզում նրանց հետ տոնել.

ե) Ճրագալույցները ուզում էին «խթել յեղ և ի պանիր» և հինգ օր անխափան կերպով նավակատիք պահել.

զ) Մերժում էին հիվանդների և մեղավորների համար ձեթ օրհնելը[19] և այլն:

Սրանից կարող ենք հետևություն անել, որ Կեսարացու բերած առաջարկների մեջ եղել են նաև ուրիշ կետեր, որոնք պատմիչը կարևոր չի նկատում և լռությամբ անցնում է:

Այս կետերի շուրջ կարծիքների փոխանակումից հետո, ժողովականները խընդրանք են ուղարկում կաթողիկոսին, որ մի ընդհանրական թղթով «որոշակի յայտարարէ և իրենց յուղարկէ» այդ բոլոր կետերը և այնուհետև ավելացնում. «Ապա թէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր, զոր ոչ ունիմք ի հարցն ... յայնժամ մի աշխատ լինիք և մի զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ (այսինքն Կիլիկիան)[20] և զմեզ թողէք ի մեր ստրուկ գերութեանս (այսինքն նախնյաց հետևողության մեջ) և մեք կացցուք մնասցուք՝ ակն ունելով վերին այցելութեան»[21]: Իսկ վերջում համարձակորեն հայտարարում են. «Հաւան եմք մեք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել, և ոչ ընդ հոռոմց յերկինս ելանել»:

Անհավասիկ, թե որքան նշմարելի է արևվելյան վարդապետների երբեք չզիջող ընթացքը, որոնք նույնիսկ այնքան են առաջ գնում իրենց հայրենավանդ դավանանքի պահպանման մեջ, որ, արհամարհելով նույնիսկ իրենց կյանքը, հայտարարում են կաթողիկոսին, թե «մեք պատրաստ եմք ի տանջանս եւ յաքսորս և ի բանտ, ի մահ և ի մեռանել ի վերայ սուրբ և առաքելական հարցն աւանդից»[22]:

Միաժամանակ հանձնարարվում է Ստեփանոս Օրբելյանին, որպեսզի նա ժողովի որոշման մասին Գրիգոր Անավարզեցուն ուղարկի հատուկ մի նամակ:

Թեև Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի և նրա համախոհների բռնած դիրքը խիստ գրգռել էր Ստեփանոս Օրբելյանին և Արևվելյան Հայաստանի ու հատկապես Սյունիքի հոգևորականությանը, այնուամենայնիվ պատմիչը, Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի հայության հակասությունները չարելու համար, իր կազմած նամակում պահպանում է հարգանքի ու քաղաքավարական բոլոր ձևերը: Նա կաթողիկոսին ուղղված իր նամակը ավարտում է մեծարման հետևյալ խոսքերով: «Ողջ լե՛ր թաթգաւորական արգասիւքդ ծնողդ իմաստից և մայրդ ուղղափառութեան, աղբիւրդ հաւատոյ և անվախ պարոյեանդ սուրբ եկեղեցւոյ՝ Գրիգորիս կաթողիկոս Հայոց: Եւ Տէրն Տերանց հովանաւցի տիրական գլխոյդ»[23]: Արդարև, այս հարցում Ստեփանոս Օրբելյանի մեծահոգությունը և համեստությունը հատկապես բխում էր նրա հայրենասիրական զգացմունքներից:

Օրբելյանն այս գրությունը անվանում է «Թուղթ մաղթանաց», որը կաթողիկոսի պատվիրակ Կոստանդին Կեսարացին չի համաձայնվում տանել որոշ պատճառաբանությամբ, սակայն, վերջապես, չկարողանալով ընդդիմանալ, իր կամքից անկախ, պարտավորված է լինում այն տանել Անավարզեցուն:

Եվ այսպես, պատմական այս իրողությունները, որոնք կարող էին մեծ վեճերի դռներ բաց անել Հայ Եկեղեցու ծոցում, բնականաբար մտահոգություն պատճառեցին դարի պահանջը լավ հասկացող Օրբելյան սրբազանին, որը տեսնում էր հեռվում սպառնացող վտանգը և իր կոչումից բխող ճիրական պարտականություն էր համարում փրկել իր մի բուռ ժողովուրդն օտարի ոտնձգություններից: Եվ այդ էր պատճառը, որ նա պայքարելու համար գրիչը վերցրեց իր ձեռքը, ստեղծելու համար «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» մեծակտավ ու մեծ արժեք ներկայացնող երկասիրությունը, որով պիտի պաշտպաներ «հայադաւանութեան հնաւանդ սկզբունքները բաւական ամուր կերպով»[24]:

«ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն մինչև այժմ ունեցել է միայն մեկ հրատարակություն: Եզակի այդ հրատարակությունը, ինչպես տեղեկանում ենք նրա հիշատակարանից, կատարվել է 1756 թվականին Կոստանդնուպոլսում: Այն հրատարակվել է «Քրիստոսասէր և բարեպաշտ» ազնվական մի երիտասարդի ծախսերով՝ «անապատաց և վանորէից» ձրի

[19] Ստ. Օրբելյան, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 335—336:

[20] Մեկնաբանումները Օրմանյան սրբազանինն են:

[21] Ստ. Օրբելյան, Պատմութիւն Տանն Սիսական, էջ 336—337:

[22] Նույնը, էջ 337:

[23] Նույնը:

[24] Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ, Պեյրութ, 1960, էջ 1772:

բաժանելու, ինչպես նաև ժամանակի «միամիտ» հավատացյալների լուսավորության համար: Որովհետև, ինչպես հրատարակիչն է հիշում, ժամանակները շատ դառն էին և հերձվածողները գնալով շատանում էին:

Հիրավի, հրատարակության այս գործը ժամանակաշրջանի համար կարելի է նկատել կարևոր մի ձեռնարկ՝ Հայ Եկեղեցու հակառակորդների դեմ պայքարելու համար:

Հրատարակության հիշատակարանից տեղեկանում ենք, որ հրատարակությունը կատարվել է միայն մի ձեռագիր օրինակի հիման վրա, որը ձրիաբար հրատարակչին է տրամադրել «զԹոփղաբուցի տիրացու Գրիգորն»:

Հրատարակությունը բաղկացած է տասներկու գլուխներից կամ ձեռնարկներից, որոնցից վերջին տասնմեկերորդ և տասներկուերորդ գլուխները, որոնք են՝ «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի...» և «Վասն հաւատոյ և կարգաց Եկեղեցւոյ...», թեև տրամաբանորեն կապ ունեն «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի հետ, բայց նրան մաս չեն կազմում: Եվ ինչպես արդեն նշել ենք Օրբելյանի մատենագրական վաստակի մեջ, վերջիններս առանձին գործեր են: Նկատեցինք նաև, որ ժողովածուի իններորդ գլուխը հրատարակության մեջ բացակայում է:

Եվ ահա այս բոլորը մեզ թելադրեցին, որպեսզի ուսումնասիրենք Երևանի Մատենադարանի բոլոր այն ձեռագրերը, որոնք իրենց մեջ պարունակում են «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն, կամ նրան մաս կազմող առանձին գլուխները: Այդ ձեռագրերը թվով տասներեքն են: Եվ այդ բոլորի մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ չկա մի ձեռագիր, որ իր մեջ ամբողջապես պարունակի մեր ուսումնասիրության առարկա վերոհիշյալ ժողովածուն:

Ձեռագրերի մեր ուսումնասիրությունից պարզվեց նաև, որ դրանք իրենց մեջ պարունակած գլուխների տեսակետից բաժանվում են երկու խմբի, որտեղից կարող ենք եզրակացնել, որ այդ ձեռագրերը արտագրվել են հիմնականում երկու մայր ձեռագրերից ու այդպես տարածվել:

Սակայն կան նաև երեք ձեռագրեր, որոնք պարունակում են մեկ, երկու կամ մի քանի գլուխներ:

Այսպես, ձեռագիր № № 569, 570, 571, 576, 721, 2268 և 3483-ը գլուխների պարունակության տեսակետից միանման են, միայն ձեռագիր № 571-ում մի փոքր խախտված է գլուխների հերթականությունը: Սակայն այս ձեռագրերում «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» խորագիրը կրող ժողովածուի տակ հանդես են գալիս երկու գլուխներ, որոնք հրատարակության մեջ բացակայում են: Այդ գլուխներն են՝ «Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն» և «Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն» հատվածները:

Գլուխների նույն պարունակությունն ու հերթականությունն ունեն ձեռագիր № № 573, 2678 և 3192-ը, միայն այս ձեռագրերում, որպես «Տասներորդ ձեռնարկ» հանդես է գալիս մի հատված, որը նույնպես բացակայում է հրատարակության մեջ: Այդ հատվածը «Պատճառն տօնի սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ, ըստ այլ ազգաց քրիստոնէից և յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդ: Եւ այս ի խնդրոյ տեառն Յովհաննեսի Բջնոյ եպիսկոպոսի»-ն է: Այստեղ ասենք, որ Օրբելյանը «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն ձեռնարկելիս, նրա մի քանի հատվածներ գրել է որոշ մարդկանց խնդրանքով: Իսկ հիշյալ ձեռագիր № № 573, 2678 և 3192-ում՝ մյուս ձեռագրերում հայտնաբերած երկու հատվածները՝ «Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն» և «Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն» բացակայում են:

Իսկ ձեռագրերի մյուս խմբից (ձեռագիր № № 774, 841 և 1555) առաջինը իր մեջ պարունակում է ժողովածուի միայն մեկ գլուխ, երկրորդը՝ երեք, իսկ երրորդը՝ ութ:

Այսպիսով ձեռագրերում կարողացանք հայտնաբերել երեք հատվածներ, որոնք հրատարակությունում բաց են թողնված:

Մեր աշխատասիրության վերջում հավելվածի կարգով ներկայացրել ենք «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուին մաս կազմող երեք նորագյուտ հատվածների համեմատական բնագրերը, որոնք մեր աշխատանքի հիմնական մեկ մասն են կազմում: Այդ հատվածներից առաջին երկուսի «Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն» և «Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն» համեմատական բնագրերը պատրաստել ենք յուրաքանչյուրը յոթ ձեռագրերի հիման վրա: Իսկ վերջին՝ «Պատճառ տօնի սրբոյ Հոգւոյ...» հատվածը՝ երեք ձեռագրերի համեմատությամբ:

Ասենք, որ այն ձեռագիրը, որի հիման վրա պատրաստվել է հրատարակությունը, նույնպես պակասավոր է եղել: Այստեղ անշուշտ մեղքը հրատարակչինը չէ, պարզապես նա ձեռքի տակ ինչ ունեցել է, այն էլ հրատարակել է, որպես պայքարի լավագույն միջոց իր ժամանակաշրջանի համար,

որովհետև, ինչպես հրատարակության հիշատակարանից տեղեկանում ենք, ժամանակները շատ խառն էին, և երկաբնակյան վեճերը գնալով ավելի լայն թափ էին ստանում:

Որպեսզի ավելի հստակ լինի հրատարակության մասին մեր ասելիքը, փորձենք երկու խոսքով ներկայացնել այն: Հրատարակությունը բաղկացած է 189 էջից: Առաջին էջը տիտղոսաթերթն է (տես նկար 1), երկրորդ էջի վրա պատկերված է Ստեփանոս արքեպ. Օրբելյանի երևակայական նկարը՝ պատարագչի զգեստով (տես նկար 2), իսկ 3—148 էջերում ամփոփված է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» պակասավոր ժողովածուն: 148—187 էջերում վերջին երկու գլուխներն են, որոնք, ինչպես վերևում նշեցինք, առանձին գործեր են և ժողովածուի մաս չեն կազմում: Իսկ վերջին՝ 188—189 էջերում ամփոփված է հրատարակության հիշատակարանը, որից և տեղեկություններ ենք քաղում ժողովածուի հրատարակության պատմության վերաբերյալ:

Եվ այսպես, բոլոր ձեռագրերի համեմատությունից պարզվեց, որ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուն բաղկացած է տասներկու գլուխներից կամ ձեռնարկներից: Ստորև տանք գլուխների մեր կազմած հերթականությունը.

Գլուխ Ա.—Տէր Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի և ուղղափառ վարդապետի հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի և զանբաժանելի բնութիւն Որդւոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել և յերկուս հատանել և դնել առանձին կամք և կիրք և գործք: Առաջին ձեռնարկս սակաւ ինչ նախադրութիւն բանիս[25]:

Գլուխ Բ.—Երկրորդ ձեռնարկս, յորում զմի բնութիւն բանին յատկաբար յայտնի կացուցանէ, որ է առաքելական դաւանութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ կաթողիկէ սուրբ եկեղեցի[26]:

Գլուխ Գ.—Երրորդ ձեռնարկ.

ա) Բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն, և առնոյն լուծումն դիմադրաբար չորս գլխով, յորոց գլուխ այս առաջին[27]:

բ) Յաղագս բնութեան դուռն ինչ բնախօսութիւն[28]:

գ) Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի, թէ ոչ[29]:

դ) Յորում խնդիր ի մէջն, եթէ բնութիւնքս զոր ասեն անձնաւորք և դիմաւորք են, եթէ անանձ[30]:

Գլուխ Դ.—Ընդդիմաբանութիւն վասն երկու բնութեանցն այլ և այլ, եթէ անհնար է ի միում դիմում լինել և համաբան ձայնակցութիւն նոցին՝ Նեստորի և այլոց հերձուածողացն[31]:

Գլուխ Ե.—Ընդդէմ այնոցիկ, որք երկու ասեն բնութիւն (նորագյուտ հատված 1)[32]:

Գլուխ Զ.—Ընդդէմ այնոցիկ, որք զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն (նորագյուտ հատված 2)[33]:

Գլուխ Է.—Ընդդէմ այնոցիկ, որք ապականեն զաստուածային խորհուրդն ջրով և խմորով, յայտարարութիւն խորհրդոյ Եկեղեցւոյ կարճ ի կարճոյ[34]:

Գլուխ Ը.—Դիմադրութիւն այնոցիկ, որք ի խաչին ուրանան զԱստուածութիւնն և մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր և ոչ Աստուած: Եւ այլայլին զերեքսրբեան սրբասացութիւն և ոչ տան ասել խաչեցար և կամ անուն ի ներքս ածեն՝ Քրիստոս որ խաչեցար և զրպարտեն զմեզ, թէ ի դէմս երրորդութեան ասէք խաչեցար[35]:

Գլուխ Թ.—Տեսութիւն ի խորհուրդ նաւակատեաց հինգ աւուրն, յորում և վասն ճրագալոյցին: Ի խնդրոյ Բարսեղ վարդապետի՝ որդւոյ Սմբատայ Բարեպաշտի[36]:

Գլուխ Ժ.—Յաղագս մեծի տօնին Ծնընդեան եւ Յայտնութեան, որք բամբասեն զմեզ, եթէ ի միում աւուր տօնեն, և ինքեանք առնեն ի դեկտեմբերի քսանհինգ զծնունդն՝ և յունուարի վեց մկրտութիւն, իսկ զաւետիսն, որ նախքան զայս՝ ի մարտի քսաննհինգ: Ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Արարատեան նահանգի վերադիտողի[37]:

Գլուխ ԺԱ.—Պատճառ տօնի սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէր մի օր տօնեմք և ոչ ութ, ըստ այլ ազգաց քրիստոնէից: Եւ յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ի

---

[25] Տես ձեռագիր № № 569, 570, 571, 573, 576, 721, 2268, 2678, 3192, 3483:

[26] Տես ձեռագիր № № 569, 570, 573, 576, 721, 1555, 2268, 2678, 3192, 3483:

[27] Նույնը:

[28] Տես ձեռագիր № № 569, 570, 571, 573, 576, 721, 841, 1555, 2268, 2678, 3192, 3483:

[29] Նույնը:

[30] Նույնը:

[31] Տես ձեռագիր № № 569, 570, 571, 573, 576, 721, 1555, 2268, 2678, 3192, 3483:

[32] Տես ձեռագիր № № 569, 570, 571, 576, 721, 2268, 3483:

[33] Նույնը:

[34] Տես ձեռագիր № № 573, 774 (պակասավոր), 1555, 2678, 3192:

[35] Տես ձեռագիր № № 573, 1555, 2678, 3192:

[36] Նույնը:

[37] Նույնը:



Նկար 1.

Նկար 2

խնդրոյ տեառն Յովհաննիսի Բջնոյ եպիսկոպոսի (նորագյուտ հատված 3)[38]:

Գլուխ ԺԲ.—Ընդդէմ այնոցիկ, որք հակառակ կան և խափանեն զկանոնեալ մատաղսն, զգառն Զատկին և Տէրունական և զագաբս, որ է հոգեհանգիստ: Եւ զամենայն օրհնութիւնս խաչի և Եկեղեցւոյ և այլ զենմունք և նուէրք, որ լինին Աստուծոյ[39]:

Ահա և Ստեփանոս արքեպ. Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի ամբողջական պատկերը:

*
* *

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի այն մի քանի ձեռագրերը, որոնք գտնվում են Հայաստանից դուրս, այլ մատենադարաններում:

Այդ ձեռագրերն են՝

ա) Ցուցակ հայերեն ձեռագրերի Թիֆլիսի հայերեն Ներսիսյան հոգևոր դպրոցի
Ձեռագիր № 12

բ) Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի
Ձեռագիր № 441

գ) Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի
Ձեռագիր № № 323, 563

դ) Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի
Ձեռագիր № № 459, 633, 686, 1072:

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ

[38] Տես ձեռագիր № № 573, 2678, 3192:

[39] Տես ձեռագիր № № 573, 1555, 2678, 3192:



Հ. ԱՄԱԼՅԱՆ

ՄԱԿԱԲԱՅԵՑՎՈՑ ԳՐՔԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ*

Մակաբայեցվոց գրքերի տեղը ս. գրոց հայկական կանոնում նախապես դժվար է որոշել, որովհետև Աստվածաշնչի թարգմանությունից հետո, մինչև 12—13-րդ դդ. կանոնը դեռևս կայուն չէր, և ինչպես վկայում է Թեոդորոս Քռթենավորը՝ «շատերը թույլ էին տալիս նորարարություն՝ կանոնին նոր գրքեր ավելացնելով կամ պակասեցնելով»[31]:

Կանոնի անկայունությունը մտահոգում էր եկեղեցու գործիչներին. դեռևս 7-րդ դ. Սիոն կաթողիկոսը ստիպված էր եկեղեցական օրենք հրատարակելով՝ ցույց տալ կանոնական գրքերը[32]: Դրանից հետո էլ կանոնի հարցերն ըստ ամենայնի վերջնական լուծում չեն ստանում և «Մինչև 13-րդ դ. դժվար է հետևել կանոնի փոփոխություններին»[33]: Հայկական կանոնը նախապես հետևելով ասորական, ապա հետագայում դարձյալ, հիմնականում, համաձայնելով նրան, այլև հունական ու լատինական կանոններին՝ նրանցից զգալիորեն տարբերվում է Հին կտակարանի գծով[34]: Տարբերությունը մասնավորապես արտահայտվում է Մակաբայեցվոց գրքերի՝ հայկական կանոնի հետ ունեցած հարաբերությամբ: Այդ գրքերը չեն հիշատակվում Կորյունի երկում, Գրիգոր եպիսկոպոսի «Պատճառք լայն և նուրբ գրեանց»-ում[35], Անտիոքի երկրորդ[36] և Պարտավի[37] 678 թ. եկեղեցական ժողովներում ընդունված կանոններում, Մխիթար Այրիվանցու, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու և այլ հեղինակների կազմած կանոնական և անկանոն գրքերի ցանկերում: Գրիգոր եպիսկոպոսի «Պատճառք»-ը համապատասխանում է Թ. Ցանի գրքում բերվող հունական զանազան ցանկերից՝ **Նիկիֆորի** և **60 գրոց** կանոնին, որի մեջ Մակաբեյցվոց գիրքը կանոնական չի համարվում[38]: Այդ կանոններին նման է 485 եպիսկոպոսների ժողովի կողմից ընդունված կանոնը, որն արդեն կանոնական է համարում Մակաբայեցվոց գրքերը[39]: Դրանք կանոնական են համարված նաև, Հին կտակարանին վերաբերող, **առաքելական արանց** կանոնում, սակայն, **Սիրաքի** գրքի հետ, նախատեսված են մանուկների դաստիարակության համար[40]:

Մակաբայեցվոց գրքերը, որոնք առանձին ընդօրինակությամբ մեզ հայտնի չեն, ըստ պահպանված ձեռագրերի, կայուն տեղ ունեն Հին կտակարանում. զետեղված են **Տովբեթ**-ից հետո, հանդիսանալով Աստվածաշնչի հայկական կանոնի 21, 22 և 23-րդ պարագրաֆները: Միայն առանձին ձեռագրերում գրքերի կարգը տարբերվում է սովորականից. Երուսաղեմի № 2560 (M_2) ձեռագրում 12 մարգարեների գրքերին հետևում են **Եսթեր, Յուդիթ, Տովբիթ,** ապա՝ **Գիրք Մակաբայեցւոց,** և նահապետների կտակներով ավարտվում է Հին կտակարանը: Այդ ձեռագրին նման է № 2557 (V_7) ձեռագիրը, այն տարբերությամբ միայն, որ նահապետների կտակներից հետո գալիս է **Սաղմոսք Դաւթի:** Երևանի մատենադարանի № 352 (G_6) ձեռագրում Մակաբայեցվոց գրքերը գտնվում են Հին կտակա-

* Զարունակված «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի № Ը-ից:

[31] **Մ. Տեր-Մովսեսյան,** նշվ. աշխ., էջ 224:

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

[34] Տե՛ս **Հ. Ս. Անասյան,** նշվ. աշխ., էջ 335—336:

[35] Տե՛ս **Մ. Տեր-Մովսեսյան,** նշվ. աշխ., էջ 225—226:

[36] Տե՛ս նույն տեղում, էջ 255—256:

[37] Տե՛ս նույն տեղում, էջ 257—258:

[38] Տե՛ս **Ա. Դավթյան,** Կանոնք ժողովոց. «Լուսա», 1901, էջ 252:

[39] Տե՛ս **Մ. Տեր-Մովսեսյան,** նշվ. աշխ., էջ 253—254:

[40] Տե՛ս նույն տեղում, էջ 256—257:

րանի վերջում՝ **Եզեկիել**-ից հետո։ Այդպես է նաև Վենետիկի № 8 (G_5) ձեռագրում, որտեղ, այնուհետև, հետևում են **Սաղմոսաց, Առակաց, Բանք ժողովին, Երգ երգոց** և **Իմաստութիւն Սողոմոնի**։ Երևանի № 1500 (C_8) ձեռագրում, որտեղ Հին կտակարանի գրքերը բոլորովին այլ դասավորություն ունեն, Մակաբայեցիք հաջորդում են **Եզրի Բ** գրքին, իսկ № 188 (O_2) և № 203 (R_4) ձեռագրերում **Տավրիթ**-ից հետո գալիս են դրանց նախադրություններն ու գլխացանկերը, **Նեհեմեայ**, ապա՝ գրքերը։ Կան Հին կտակարանի գրքերի նաև այլ դասավորություն ներկայացնող ձեռագրեր։

Սակայն ձեռագրերի մեծ մասում Մակաբայեցվոց գրքերն իրենց հիմնական տեղում են՝ **Տովբեթ**-ից հետո և **Սաղմոսաց**-ից առաջ։

Նախադրություններն ու գլխացանկերը սովորաբար նախորդում են համապատասխան գրքերին։ Սակայն առանձին ձեռագրերում խախտված է նաև դրանց տեղը։ Դա ըստ էության, միշտ չէ որ կապված է խմբագրական հանգամանքների հետ և հաճախ բացատրվում է գրչագրման տեխնիկայով՝ գլխավորապես տեղն արդյունավետ օգտագործելու, մագաղաթը տնտեսելու ձգտումով։ Հաճախ նախադրությունների կամ գլխացանկերի բացակայությունը պարզապես թյուրիմացության արդյունք է։ Սակայն հնագույն ձեռագրերը ($A_8B_4C_{12568}D_{38}E_{20}F_{5678}$ և այլն) առհասարակ չունեն նախադրություններ ու գլխացանկեր. այդ ձեռագրերը գրված են 13-րդ դ. և հետո կամ ընդօրինակված են ավելի հին նախօրինակներից։ **Նախադրութիւն** բառի փոխարեն ձեռագրերում հաճախ գործածվում է **յառաջաբան, գլուխ(ք)**-ի տեղ՝ **ցանկ, գիրք**-ի համար՝ **գլուխ** և այլն։

Հայերեն զանազան նախօրինակների, այլև օտար բնագրերի հետևողությամբ բնագրերում մուծված սրբագրումներով և այլևայլ փոփոխություններով հանդերձ՝ Մակաբայեցվոց գրքերի հայերեն թարգմանությունը մեզ հասել է լրիվ և թարգմանությանը հարազատ կերպով։ Ավելին. բնագրերում առկա են բազմաթիվ հետաքրքիր, հազվագյուտ ընթերցվածներ, որոնք կարևոր նշանակություն ունեն հունարեն բնագրում սրբագրումներ, ուղղումներ ու լրացումներ կատարելու և հայերեն թարգմանության անհայտ բնօրինակը վերականգնելու համար։ Այդ առումով իրավացի են այն հայագետները (Պիկ, Լակրոզ և այլք), որոնք գտնում են, որ հայերեն բնագիրը լավագույնն է Աստվածաշնչի թարգմանությունների շարքում և շատ կարևոր է հունական բնագիրն ամբողջությամբ, կամ նրա առանձին մասերը վերականգնելու համար։ Հայերեն բնագրերի տարբերությունների օգտագործումով նման վերականգնման փորձեր կատարվել են Գ. Վիլֆրուայի, Հ. Գրիսբախի, Ռ. Հոլմզի, և ուրիշ գիտնականների կողմից։

Մակաբայեցվոց գրքերը, ի տարբերություն մի շարք այլ գրքերի (Սաղմոսաց, Առակաց, Իմաստ. Սողոմոնի, Սիրաք և այլն), Աստվածաշնչի ընդհանուր բնագրից դուրս, առանձին չեն տպագրվել և առաջին անգամ տպագրությամբ հանդես են եկել Ոսկան Երևանցու աշխատասիրությամբ լույս տեսած հայերեն առաջին Աստվածաշնչի կազմում, 1666 թվականին։ Այդ գրքերը կան նաև Աստվածաշնչի 1705 թ. Կ. Պոլսի հրատարակությունում, որը արտատպությունն է ոսկանյան բնագրի[42]։ Վերջինիս արտատպությունն է նաև Վենետիկի 1733 թ. հրատարակությունը, որոշ փոփոխումներով, սրբագրումներով, աշխատասիրողի՝ Մխիթար Սեբաստացու կողմից կատարված՝ Մակաբայեցվոց Գ գրքի տնատումով ու գլխակարգումով[43]։ Հայերեն Աստվածաշնչի լավագույն հրատարակությունը, մի արժեքավոր հին ձեռագրի հիման վրա, բնագրի հարազատ վերարտադրությամբ, այլև ութ գրչագրերի համեմատությամբ, առայժմ Հ. Զոհրապյանի տպագրված բնագիրն է, որը բանասիրական ու բնագրաբանական կարևոր նշանակություն ունի նաև Մակաբայեցվոց գրքերի ուսումնասիրության համար[44]։ Ապա՝ Աստվածաշնչի 1817 թ. Պետերբուրգի[45] և Սիրամփուրի[46] հրատարակություններից առաջինը, իսկ երկրորդը որոշ փոփոխություններով՝ հիմնականում լուսանցագրությունների բացթողումով վերարտադրում են՝ 1733 թ. Մխիթար Սեբաստացու հրատարակած բնագիրը։ Հ. Զոհրապյանի հրատարակությանն է հետևում Ա. Բագրատունու աշխատասիրությամբ՝ 1860 թ. Վենետիկում տպագրված բնագիրը[47], որոշ սրբագրումներով, ուղղագրական ու կետադրական ճշգրտումներով և մի քանի արտականոն գրվածքների ավելացումներով։

Մակաբայեցվոց գրքերը բացակայում են Աստվածաշնչի 1895 թ. Կ. Պոլսի հրատարակությունից[48]։ Հայերեն բնագիրը, որ համեմատված է եբրայական և լատինական բնագրերի հետ, հետևում է բողոքականների Աստվածաշնչի կանոնին, հետևաբար բաց է թողնում Մակաբայեցվոց և մյուս երկրորդականոն գրքերը։ Այդ աստվածաշնչից է արտատպված 1929 թ. Վիեննայի հրատարակությունից[49]։

Վերևում հիշատակված հրատարակություններից բնագրաբանական տեսակետից, մասնավորապես

---

[41] Տե՛ս Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Ամստերդամ, 1666։

[42] Տե՛ս Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1705։

[43] Տե՛ս Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց, Վենետիկ, 1733։

[44] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1805։

[45] Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց կտակարանաց, Պետերբուրգ, 1817։

[46] Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց կտակարանաց, Սիրամփուր, 1817։

[47] Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1860։

[49] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Կ. Պոլիս, 1895։

[49] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վիեննա, 1929։ Հիշատակված Աստվածաշնչերի մատենագիտությունը տե՛ս Հ. Անասյան, Նշվ. աշխ., էջ 359—381։

Մակաբայեցվոց գրքերի նկատառումով, ուշադրության արժանի են ոսկանյան և զոհրապյան հրատարակությունները՝ առաջինն իր լատինական կողմնորոշումով, երկրորդը՝ հայկական ավանդի ունաղարտ պահպանման ձգտումով: Հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը Ոսկան Երևանցու անձնվեր գործունեության արգասիքն էր: Այդ տպագրության մշակութային նշանակությունը դժվար է գերագնահատել իր ժամանակի համար: Եվրոպական առաջադիմության մթնոլորտում, հայ մշակույթի հուշարձանների տպագրության, այլև գիտական ուսումնասիրության և միջազգային ասպարեզ դուրս բերելու բավականին նպաստավոր պայմաններում, Աստվածաշնչի լույս ընծայումը հայ մշակույթի նշանակալից նվաճումն էր: Սակայն հայերեն բնագիրը բովանդակությամբ և հատկապես արտաքին հանգամանքների լատինական օրինակով ստուգելն ու նրան հարմարեցնելը պատմականորեն երաշխավորված փաստերի եղծման ու առհասարակ դարավոր մշակութային ավանդույթի խաթարման դրսևորում էր: Եվ որքան պատկառելի է հրատարակչի աշխատանքն իր ծավալով, նույնքան ափսոսանք է ներշնչում արդյունքը, «որ աւելի նախնեաց ընտիր թարգմանութեան աղաւաղումը և խանգարումը կըրնայ ըսուիլ»[50]:

Ոսկանյան Աստվածաշնչի բնագրով հետաքրքրվող բաՀասերներից Հ. Զոհրապյանը, անդրադառնալով կոնկրետ թերությունների և դրանց հանգամանքներին՝ այդ հրատարակության մասին գրում է. «Որով աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձեռացաւ խառնարան այլ և այլ թարգմանութեանց՝ հելլենականին և լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական լայնչաբանութեան՝ ընդ նորահնար օտարազուր բարբառոյ: Թողում և զոր ողջոյն գիրս Սիրաքայ՝ և չորրորդ Եզրայ՝ հանդերձ: Թղթովն ինչ Երեմիայ մարգարէի, իբրև ամբողջական մասունս՝ թարգմանեալ ի լատինականէն՝ իւրովն իսկ թերուսումն հմտությամբ բարբառոյն այնորիկ, յաւել ի մերս՝ խուժադոյժ հայկաբանութեամբ...»[51]:

Սակայն, պետք է ասել, որ Աստվածաշնչի առաջին հայերեն տպագրությունը չէր էլ կարող անթերի լինել, իսկ թերությունների մի մասը օբյեկտիվ պայմանավորվածություն ունի: Նախ՝ Ոսկան Երևանցուն հայտնի չէին Աստվածաշնչի այն բոլոր ձեռագրերը, որոնք գոյություն ունեն այսօր, ապա՝ եղած ձեռագրերից էլ հեշտ չէր ընտրել լավագույնը որպես հիմք տպագրության համար՝ այն էլ այն ժամանակ, երբ այդ ձեռագրերն ի մի բերված ու, թեկուզ, ինչ-որ չափով համեմատված չէին, և հայերեն թարգմանության բնագիրը դեռևս մասնագիտական ուսումնասիրության առարկա չէր դարձել: Չխոսենք այլևս շտապողականության, տպագրության ծախսերի և այլ հանգամանքների հետ կապված դժվարությունների մասին:

Վուլգատայի ազդեցությունը և ոսկանյան Աստվածաշնչի բնագրաբանական զանազան թերությունները, այնուամենայնիվ, այնքան շատ չեն, որչափ դրանք առ այսօր պատկերացվում են ըստ առանձին բանասերների կարծիքների ու գնահատման: Այդ հանգամանքը իրավացի կերպով նշում է Բ. Զոնսոնը[52]: Եվ եթե նկատի ունենանք, որ լատինականի ազդեցությունը ոսկանյան բնագրի վրա դրսևորվում է ոչ այնքան բուն բնագրում, այլ գերազանցապես դրա արտաքին կողմում՝ լուսանցքային սրբագրումներով ու ավելացումներով, հղումներով ու տեղեկատու նշումներով, համարակալումներով և այլ նշանակումներով, ապա բնագրին ու հրատարակչին ուղղված քննադատությունը չպետք է ընդունվի անվերապահորեն և ամբողջ խստությամբ: Ավելին. ոսկանյան բնագրի ու ձեռագրերի համեմատությունը (ըստ Մակաբայեցվոց գրքերի) ցույց է տալիս, որ բնագրային տարբերությունները քիչ են, տարընթերցվածները հիմնականում նույնն են, հատկապես այն ձեռագրերում ($B_4C_{256}D_{38}E_{40}F_{456}$ և այլն), որոնց խմբին է պատկանում ոսկանյան հրատարակության համար հիմք ընդունված ձեռագիրը: Մինչդեռ այլ ձեռագրեր ($C_8G_{135}H_{34}$ և այլն) տալիս են ավելի շատ տարբերություններ: Համեմատություններից պարզվում է նաև, որ Ոսկան Երևանցին տպագրության համար հիմք է ընդունել Աստվածաշնչի հայերեն թարգմանության հին և լավագույն ձեռագրերից մեկը:

Ինչ վերաբերում է Հ. Զոհրապյանի հրատարակությանը, ապա այն այսօր էլ մնում է որպես եզակի մի բնագիր, որը բովանդակությամբ ու կանոնով առավել հարազատ ու ամբողջական է ներկայացնում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը և ավանդված է լավագույն գրչագրերով: Հ. Զոհրապյանն իր հրատարակության առաջաբանում (էջ 16—19) քննադատում է ոսկանյան հրատարակությունը, ցույց տալով նրա թերությունները: Նրա համար սկզբունքային կարևոր նշանակություն է ունեցել հիմնական ձեռագրերի ճիշտ ընտրությունը, դրա հարազատ վերարտադրությունը՝ առանց նշանակալից սրբագրումների, ուղղումների և այլ միջամտությունների: Նա բնագիրը ներկայացնում է 8 հնագույն ու արժեքավոր ձեռագրերի տարընթերցվածներով՝ կանոնի և արտաքին հանգամանքների գրեթե անփոփոխ պահպանումով: Սակայն Հ. Զոհրապյանի հրատարակությունը, որի հանդես գալը նույնպես նշանակալից իրադարձություն էր հայագիտության համար, այնուամենայնիվ թերություններ ունի և, մանավանդ ժամանակակից գիտության տեսակետից, դեռևս հեռու է իսկական գիտահամեմատական բնագրին ներկայացվող պահանջների լրիվ բավարարումից: Հիմնական ձեռագիրը գրեթե նույնությամբ պատճենելու ձգտումը պատճառ է դար-

[50] **Մաղաքիա արքեպիսկ. Օրմանյան,** Ազգապատում, հատ. Բ, մասն Բ, Պեյրութ, 1960, էջ 2540:

[51] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1805, հատ. առաջին, էջ 18—19:

[52] Տե՛ս B. Johnson, Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im 1. Samuelbuch, London, 1968, S. 68, 159.

ձել տպագրության մեջ ձեռագրային վրիպումների, անճշտությունների, ուղղագրական, տառադարձական, քերականական, կետադրական և այլ սխալների սպրդման: Համեմատված են սահմանափակ թվով ձեռագրեր, որոնք, սակայն, ներկայացնում են բնագրի մեզ հասած գրեթե բոլոր խմբագրական տարբերակները: Բնագրում չեն արտացոլվել համեմատվող ձեռագրերի հատկապես ուղղագրական ու ձևաբանական բնույթի բոլոր տարընթերցվածները, իսկ բերվածներն էլ կոնկրետ աղբյուրային հատկացում չունեն և ուղեկցվում են «այլք» «ոմանք» «բազումք» և այլ նշումներով:

Հրատարակության պատրաստելով Աստվածաշնչի իր կազմած նոր բնագիրը, Ա. Բագրատունին նկատի է ունեցել Հ. Զոհրապյանի հրատարակության թերությունները: Իր առաջաբանում, որը լույս տեսավ Աստվածաշնչի տպագրումից շատ ուշ, նա գրում է. «Այլ քանզի յանչափս ճշմարտութեամբ կամեցաւ նա (Հ. Զոհրապյանը,—Հ. Ա.) պահել ի տպագրութեան իւրում և զվրիպակս գրչին, նմին իրի և աշխատասիրութիւն նորա ոչ սակաւ թերի գտաւ, եւ Աստուածաշունչ մատեանն տպագրեալ ի նմա՝ ոչ տիրապէս հարազատ ըստ թարգմանութեան նախնեաց»[53]: Այդ առաջաբանում, ներկայացնելով իր կատարած աշխատանքը, Ա. Բագրատունին մասնավորապես նշում է, որ ինքը ոսկանյան և զոհրապյան հրատարակությունների թերություններից խուսափելու նպատակով, նորից է քննել տասը գրչագրերի տարբերությունները, ապա ամբողջ հայերեն թարգմանությունը համեմատել է հունարեն բնագրերի հետ՝ անորոշ ու կասկածելի երևույթները պարզաբանելու համար[54]:

Ա. Բագրատունու Աստվածաշունչը, իրոք, զգալիորեն տարբերվում է Հ. Զոհրապյանի հրատարակությունից, որի վրա նա հիմնված է: Սակայն այդ բնագիրն էլ, առանձին վերականգնումներով, ձևաբանական ու ուղղագրական բարելավումներով հանդերձ, վերջնական չէ, դեռևս հեռու է Աստվածաշնչի հայերեն թարգմանության նախասկզբնական օրինակի վերականգնում լինելուց: Այդ բնագրի մասին բավականաչափ գիտական լրջություն ու արժեք չունի բանասեր Կ. Տեր-Մկրտչյանի կարծիքը, թէ «... Հ. Արսեն առաջինն է եղել, որ բուն գիտական եղանակով ձեռքի տակ եղած օրինակներից մի ընդհանուր բնագիր է կազմել, և իր ընդարձակ ըմբռնման ու հայերէնի մեծ հմտութեան շնորհիվ յաջողել է առհասարակ ուղիղը գտնել»[55]: Ա. Բագրատունու կազմած բնագիրը, որ հիմնականում նույնն է զոհրապյան բնագրի հետ, աղբյուրագիտական ու բնագրաբանական առումով՝ նրա արժեքը չունի:

Աստվածաշնչի հրատարակությունների մասին խոսելիս, անհրաժեշտ է ուշադրության առնել այն ձեռագրերը, որոնց վրա հիմնված են տպագիր բնագրերը: Ոսկան Երևանցու համար հիմք է եղել Երևանի մատենադարանի № 180 (C_2) ձեռագիրը, որը Հեթում Բ-ի արքայական Աստվածաշունչն է, գրված 1295 թ. Կիլիկիայում: Այս ձեռագիրը հայերեն Աստվածաշնչի հնագույն ձեռագրերից մեկն է[56] և բնագիրը ներկայացնում է ամբողջությամբ, աչքի է ընկնում գրչագրման կատարյալ արվեստով, ծաղկման ու արտաքին ձևավորման շքեղությամբ: Ոսկան Երևանցին իր բնագրի համար ձեռագիրը միանգամայն ճիշտ է ընտրել և իրավացի չէ Հ. Զոհրապյանը, որ գրում է. «Այս մատեան թէպէտ ըստ հանգամանաց՝ տեղւոյ և ժամանակի, և թէ՝ յումմէ և յոյր պէտս գրեցաւ՝ անգիտելի է մեզ. ոչ ունելով զբունն իսկ ի ձեռին. սակայն համեմատելով մեր զնորին օրինակն յոսկանեան տպագրութեան անդ՝ ընդ վերոյիշատակեալ գրչագրաց մերոց, չերևի ընտրելագոյն ինչ գաղափար՝ ոչ ըստ հմուտ գրչագրութեանն, և ոչ ըստ այլոց մասանց անվթարութեան»[57]: Կ. Տեր-Մկրտչյանը ճիշտ է նկատում, որ Զոհրապյանի կողմից Ոսկանի հիմք ձեռագրի հնությունը կասկածելը և լուսանցքներում գլխակարգման նշումները որպես ձեռագրի արժեքը նսեմացնող իրակներ դիտելը իրավացի չէ[58]: Այդ ձեռագրի առթիվ միանգամայն տեղին և հիմնավոր է Ս. Քոլանջյանի եզրակացությունը. «Այժմ, երբ գիտենք, որ Ոսկանը նախքան իր Աստվածաշնչի տպագրության հանձնումը մանրամասնորեն փոփոխության էր ենթարկել իր գրչագիրը, ուստի Զոհրապյանի ընտրելագոյն չլինելու մասին տված վճիռը վերաբերում է Ոսկանի հրատարակությանը և ոչ արքայական գրչագրին, որը մեկն է մեր լավագույն Աստվածաշնչերից»[59]:

Որքան էլ հրատարակության համար հիմք ընտրված ձեռագիրը հին և լավ գրչագրված լինի, այնուամենայնիվ չի կարող անթերի լինել և բացարձակ նույնությամբ պատճենվել տպագրությամբ: Դժվար է անվերապահորեն առավելություն տալ Ոսկանի և Զոհրապյանի ընտրած հիմնական ձեռագրերից որևէ մեկին: Դրանք բնագրով ու բոլոր այլ հանգամանքներով իրար հարազատ գրչագրեր են, ծագում են միևնույն նախօրինակից և ,վերջ ի վերջո, հանգում են հունական յոթանասնից այն օրինակին, որից հավանաբար թարգմանվել է հայերեն Աստվածաշունչը: Այդ ձեռագրերը, ինչպես և մանրամասն քննությունից հետո հավաստում է Բ. Զոնսոնը[60], խմբագրական նշանակություն ունեցող կարևոր տարբերություններ չեն դրսևորում, տարընթերցվածներն ունեն ներբնագրային, մասնավորապես գրչագրական նշանակություն: Բնագրերի տարբերությունը շոշափելի է տպագիր օրինակնե-

---

[53] **Հ. Ա. Բագրատունի**, Ցառաջաբան Աստուածաշունչ գրոց. «Բազմավէպ» 1966, էջ 350:

[54] Տե՛ս **Հ. Ա. Բագրատունի**, նշվ. աշխ., էջ 350—351:

[55] **Կ. Վ.** (Կարապետ վ. Տեր-Մկրտչյան), Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը, «Արարատ», 1902, էջ 1077:

[56] Տե՛ս **Ս. Քոլանջյան**, նշվ. աշխ., էջ 109—118:

[57] Աստուածաշունչ, 1805, էջ 15:

[58] Տե՛ս Կ. Վ., նշվ. աշխ., էջ 1074:

[59] **Ս. Քոլանջյան**, նշվ. աշխ., էջ 109:

[60] Տե՛ս **B. Johnson**, նշվ. աշխ., էջ 19:

ռում, որը և, ինչպես նշվել է, հետևանք է հիմք ձեռագրի նկատմամբ հրատարակիչների ունեցած տարբեր վերաբերմունքի: Զոհրապյանի օգտագործած մյուս ձեռագրերից մի քանիսը դարձյալ հարազատ են, ծագում են միևնույն նախօրինակից, իսկ մնացածները ներկայացնում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության իրարից նկատելիորեն զանազանվող տարբերակներ՝ խմբագրական, ինչպես նաև ուղղագրական, գրչագրական և այլ բնույթի տարընթերցվածներով հանդերձ:

Զոհրապյանը նույնպես ճիշտ է ընտրել իր տպագրության հիմք ձեռագիրը, չհիմնվելով իրեն հայտնի մեկ այլ ավելի հին ձեռագրի վրա, մանավանդ որ հնագույն ձեռագրերի գրության ժամանակները այնքան էլ հեռու չեն իրարից և ձեռագրերն էլ տարբերվում են գրչագրման որակով և նյութական վիճակով: Այլ բան է, թե Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեզ հասած տարբերակներից, որն է նախնականը, կամ բազմակի սրբագրվելուց ու հունականին հետագայում էլ հարմարվելուց հետո, այնուամենայնիվ, դրանցից որն է համեմատաբար լավ պահպանել իր նախնական կերպարանքը: Այդ հարցին դժվար է ճիշտ պատասխան տալ: Բանն այն է, որ մեր պատմիչների՝ մասնավորապես Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու մեջբերումները, որոնք մերթ համաձայնում և մերթ շեղվում են Զոհրապյանի Աստվածաշնչի համապատասխան հատվածներից, մատնացույց են անում տարբեր բնօրինակներ, ինչ մասնավորապես ավետարանների բնագրերի համեմատական ուսումնասիրության կոնկրետ փաստերի օգնությամբ ցույց է տալիս Պ. Էսապյանը[61]:

Մակաբայեցվոց գրքերը, որոնք թարգմանվել են հավանաբար Աստվածաշնչի թարգմանության առաջին շրջանում, հունարեն յոթանասնից խմբագրության ցարդ մի անհայտ տարբերակից, մեզ հասել են ամբողջությամբ: Այդ գրքերի բնագրաբանական ու լեզվաոճական ուսումնասիրությունների (Ե. Դուրյանի, Ս. Կոգյանի, Ն. Բյուզանդացու և այլոց) նպատակը եղել է հունական անհայտ բնօրինակի, թարգմանության համապատասխանության ու ճշտության և դասական գրաբարի նորմաներից լեզվաոճական կարևոր շեղումների բացահայտումը:

Անհայտ հայ թարգմանիչը, ի տարբերություն մյուսների, համարձակորեն փորձել է ոչ միայն ճիշտ թարգմանել ու լրիվ հաղորդել բովանդակությունը, այլև հայերենի լեզվական միջոցների առատ ու անկաշկանդ օգտագործումով, պատկերավորությամբ ու կարելվույն մեծ զգայականությամբ օժտել պատումը՝ ցուցադրելով հայերենի լեզվաոճական ու արտահայտչական լայն հնարավորությունները: Այդու հանդերձ նրա թարգմանությունը, որ «ազատ թարգմանություն» է կոչվել հայ բանասիրության մեջ, դեռևս լեզվաոճական հատուկ քննության չի ենթարկվել, չնայած ըստ էության այն նոր որակ, նոր երանգ է 5-րդ դ. հայ թարգմանական գրականության մեջ: Նման թարգմանությունների մասնագիտական ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն կունենար թե՛ լեզվաբանական և թե՛ բանասիրական առումով:

Թարգմանությունից հետո, բնագրում մուծված զանազան սրբագրումներով և հատկապես արտաքին փոփոխումներով հանդերձ, Մակաբայեցվոց գիրքը մեզ հասել է ոչ միայն հունարեն յոթանասնից խմբագրությանը հարազատ, այլև բազմաթիվ հետաքրքիր ընթերցվածներով, որոնք շատ կարևոր են հայերենի անհայտ հունական բնօրինակը բացահայտելու և առհասարակ յոթանասնից բնագիրը ճշգրտելու տեսակետից:

Մակաբայեցվոց գրքերի հայերեն թարգմանության տպագրության համար հիմք են եղել լավագույն ձեռագրերը: Արտաքին զգալի փոփոխումներով ու լատինական օրինակին հարմարեցվելով՝ Մակաբայեցվոց գրքերի ոսկեդարյան հրատարակության բնագիրը, այնուամենայնիվ, հայկական ավանդի եղծում և աղավաղում չէ, ինչպես խիտ կերպով գնահատում են բանասերները, իսկ զոհրապյան և հետագա տպագրությունները ձեռագրերի հարազատ վերարտադրություններ են:

[61] Տե՛ս Պ. Էսապյան, Տատիանի համաբարբառը և հայերէն ա.ետարաններու առաջին թարգմանութիւնը, Վիեննա, 1937:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(СЕНТЯБРЬ 1980)

1. О торжествах, имеющих место в Первопрестоле по случаю 25-летнего юбилея интронизации Его Святейшества (стр. 3—6).

2. Доклад архиепископа Серовбе Манукяна: «Обряд и служба». Прочитан во время собора членов Иерусалимской армянской братии, происходившего в Иерусалимской Армянской Патриархии с 3 по 10 августа (стр. 7—11).

3. Доклад архиепископа Торгома Манукяна: «Армянское религиозное воспитание в прошлом и сегодня». Прочитан в Иерусалимской Армянской Патриархии с 3 по 10 августа (стр. 12—19).

4. Доклад архиепископа Завена Чинчиняна: «Влияние условий зарубежной среды на исторические порядки Армянской Церкви». Прочитан в Иерусалимской Армянской Патриархии с 3 по 10 августа (стр. 20—27).

5. Торжества, посвященные открытию 1980—1981 учебного года в духовной академии и наставления Его Святейшества по этому случаю (стр. 28—30).

6. Юбилейные торжества в Иерусалимском армянском монастыре (с 3 по 10 августа), посвященные 200-летию со дня рождения патриарха Захария (1780—1980), 140-летию со дня основания (1843) Иерусалимского армянского лицея и 50-летию со дня смерти Патриарха Егише Дуряна (1930—1980), (стр. 31—33).

7. Церковный амвон: новости. О совершений Священных Литургий, чтений проповедей и проведении церковных торжеств в сентябре м-це (стр. 34—36).

Под тем же заглавием помещена статья о посещении архиепископом Вены, Кардинала Франца Кенига в Первопрестол (стр. 36).

8. Заметки архиепископа Сиона Манукяна и его впечатления о посещении с 13 августа по 7 сентября армянских епархий в Южной Америке (стр. 37—38).

9. В журнале сообщается также о годовой сессии Всемирного Совета Церквей, происходившего в Женеве, где от Первопрестола и от имени Его Святейшества, в качестве члена Центрального Комитета ВСЦ принимал участие начальник Канцелярий Католикосата епископ Арсен Берберян. На этом заседании ВСЦ решается вопрос о проведении предстоящей, шестой заседании ВСЦ по теме «Иисус Христос—жизнь миру» в Канаде, в 1984 году.

В дни заседаний, с 22 по 25 августа состоялась официальная встреча между представителями действующих церквей Советского Союза и США, где обсуждался вопрос «Содействии церквей Советского Союза и США делу мира, содружества и разоружении». В указанной встрече принимал участие также и епископ Арсен Берберян.

В дни своего пребывания в Женеве, епископ Арсен Берберян интересовался церковной и культурной жизнью местной армянской общины, имел встречи с уважаемыми ее представителями. В Воскресение, 17 августа, епископ Арсен Берберян совершил Божественную Литургию и произносил проповедь в Женевской Армянской Церкви им. св. Якова (стр. 39—41).

10. О посещении с 13 по 15 сентября генерального секретаря «Конференции Европейских Церквей», доктора Глен Гарфильда Уильямса и его супруги в св. Эчмиадзин и их встречи с Его Святейшеством (стр. 42).

11. 15 июня, духовный пастырь армян в Западной Германии, архимандрит Акоп Глнчян имел экуменическую встречу с немецкой церковной общиной г. Ганновер и ее руководством.

В этой связи совершаются богослужения с участием армянской и немецкой общин, после чего был дан «Обед любви» (стр. 43).

12. 14 сентября, в Ассирийской церкви им. св. Георгия г. Дамаска происходят торжества

по случаю интронизации новоизбранного патриарха Антиохии и Всего Востока, Его Святейшества Мар Игнатия Закка Первого. От имени Его Святейшества на торжествах принимал участие предводитель армян в Дамаске, Верховный архимандрит Воскан Галпакян. По этому случаю в журнале помещена фотография новоизбранного Патриарха (стр. 44).

13. С 9 по 12 сентября, в Ташкенте проходила Исламская Конференция мусульман СССР по теме «15 век ИДЖРИТА должен быть веком мира на земле и веком дружбы между народами». От первопрестола в этой конференции принимали участие архиепископ Иусик Санурян и член Верховного Духовного Совета Ованнес Топузян.

Его Святейшеством 5 сентября 1980 года конференции было послано приветственное слово (стр. 45—46).

14. Иеромонах Затик Аветикян в этом номере поместил свою статью—исследование о жизни и деятельности, а также о литературном наследии архиепископа Степанноса Орбеляна. Здесь же пишется о причинах создания книги «Полемика против Диафизитов» (стр. 47—55).

15. Айк Амалян напечатал в журнале свое исследование: «Об армянском подлиннике перевода Маккавейской книги» (стр. 56—60).

„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN (SEPTEMBER 1980)

1. Festivity devoted to the 25-th anniversary of the enthronement of His Holiness in the Holy See (pages 3—6).

2. „Rite and ceremony" the speech of Archbishop Serovbe Manoukian given during the days of 3—10 August in the congregational meeting of the Armenian Patriarchate at Jerusalem (pages 7—11).

3. „The Armenian religious education in the past and at present" the speech of Archbishop Torgom Manoukian given during the days of 3—10 August in the congregational meeting of the Armenian Patriarchate at Jerusalem (pages 12—19).

4. „The influence of the conditions of abroad on traditional order and organization of the Armenian Church" the speech of Archbishop Zaven Tchintchinian given during the days of 3—10 August in the congregational meeting of the Armenian Patriarchate at Jerusalem (pages 20—27).

5. The opening festivity of the Spiritual Seminary, on the 1980—1981 academic year and the blessing word of His Holiness (pages 28—30).

6. Jubilee festivities in the Armenian monastery of Jerusalem during the days of 3—10 August devoted to the 200-th birthday of Patriarch Zakaria (1780—1980), the 140-th anniversary (1843) of the foundation of the Seminary and the 50-th anniversary of the death of Patriarch Yeghishe Dourian (1930—1980) (pages 31—33).

7. Church pulpit, news, Holy Masses during the month of September, sermons spoken and church festivities (pages 34—36).

In the same chapter „The Archbishop of Vienna Cardinal Franz König the Holy See" (page 36).

8. The description of the visit and the impressions of Archbishop Sion from the Armenian pioceses of South America made during the days from 13th August until 7th September (pages 37—38).

9. In this number of the journal is published also information about the annual session of the Central Committee of the World Council of Churches at Geneva, to which on behalf of the Holy See and His Holiness has participated Bishop Arsen Berberian, as member of the Central Committee of WCC.

In this session of WCC it has been decided that the following conference of WCC takes place in Canada, with the following slogan „Jesus Christ-the life of the world".

On this occasion during the days of 22—25 August takes place an official meeting between the representatives of the working churches of Soviet Union and churches of U. S. A., about „The service of the churches of Soviet Union and U. S. A. for cooparation, peace and disarmament".

To this meeting has participated also Bishop Arsen Berberian, who, when he was in Geneva, has been interested in the church and cultural life of the local Armenian community, has met with the honourable representatives of the community. On Sunday, 17th August, Bishop Arsen has celebrated Holy Mass in the St. Hagop Armenian church at Geneva, given a sermon, consoling the believers (pages 39—41).

10. The visit of the General Secretary of the „Conference of European Churches" Doctor Glen Garfield Williams and his wife to the Holy See, during the days of 13—15 September, and their meeting with His Holiness (pages 42).

11. On 15th of June Rev. Hagop Kelendjian the spiritual pastor of the Armenians of Western Germany, has had an ecumenic meeting with the German church community of Hanover and its leadship. On this occasion take place church cere-

monies with the participation of the Armenian and German communities and then community dinner (page 43).

12. On the 14th of September in the St. George Syrian church at Damascus takes place the festivity of the enthronement of His Holiness Mar Ignatius Zakke I, the new-elected Patriarch of Antioch and of Syrians of All Orient. On behalf of His Holiness the Catholicos of All Armenians is present in this festivity Rev. Voskan Kalpakian, the prelate of the Armenian diocese at Damascus.

On this occasion it has been printed also in the journal the photograh of the new-elected Patriarch of the Syrians (page 44).

13. During the days of 9–12 September it has taken place in Tashkend the Islamic conference of the mahomentans of Soviet Union, devoted about the theme „The 15-th century of Hegira must be a period of world peace and friendship between the peoples".

To this Islamic conference on behalf of the Holy See have participated Archbishop Houssik Santurian and Hovhannes Topouzian, member of the Supreme Spiritual Council.

On the 5-th of September 1980 His Holiness has sent a message of greeting to this Islamic conference (pages 45–46).

14. Rev. Zatik Avetikian has published in this issue of the journal a study devoted to the life, activity and the literery labour of „Archbishop Stepanos Orbelian" (XIII centry), as well as the causes of the writing of his book „Discussion against the diophysites" (pages 47—55).

15. Haik Amalian has published in the journal the study „About the original Armenian translation of the Books of the Maccabees" (pages 56—60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (AOUT 1980)

1. Solennité au Saint-Siège d'Etchmiadzine consacrée au 25e anniversaire de l'intronisation de Sa Sainteté Vasken Ier (page 3—6).

2. „Rite et cérémonie": allocution de Mgr. Sérovbé Manoukian prononcée à l'assemblée consultative de la congrégation du patriarcat arménien de Jérusalem réunie à Jérusalem du 3 au 10 août (page 7—11).

3. „L'éducation religieuse des Arméniens dans le passé et aujourd'hui": allocution de Mgr. Torgom Manoukian prononcée à la même assemblée (page 12—19).

4. „L'influence des conditions de l'étranger sur les ordres et règles traditionnels de l'Eglise arménienne": allocution de Mgr. Zaven Tchintchinian prononcée à la même assemblée (page 20—27).

5. Réunion solennnelle au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion de la rentrée des classes de l'année scolaire 1980– 1981 et l'allocution de Sa Sainteté adressée aux séminaristes (page 28—30).

Festivités jubilaires au patriarcat arménien de Jérusalem consacrées au 200e anniversaire de la naissance du patriarche Zacharie, au 140e anniversaire de la fondation du séminaire arménien de Jérusalem et au 50e anniversaire de la mort du patriarche Yéghiché Dourian (page 31—33).

7. Sous la rubrique „Nouvelles du Saint-Siège" sont publiées de brèves informations concernant la célébration de saintes messes, les sermons prononcés à cette occasion et les cérémonies religieuses qui ont eu lieu à Ste Etchmiadzine au cours du mois de septembre de l'année courante (page 34—36).

Sous la même rubrique une information est publiée sur la visite au Saint-Siège du cardina Franz König, archevêque de Vienne (page 36).

8. Impressions de Mgr. l'archevêque Sion Manoukian sur sa visite aux diocèses arméniens de l'Amérique Latine (page 37—38).

9. Information sur la session annuelle du Comité Central du Conseil Oecuménique des Eglises qui s'est tenue à Genève du 14 au 22 août 1980 et à laquelle a participé, au nom du Saint-Siège d'Etchmiadzine, Mgr. Arsen Berbérian, membre dudit Comité.

Au cours de cette session il a été décidé de convoquer la VIe Assemblée du COE au Canada en 1983 sous la devise: „Jésus-Christ—la vie du monde".

A cette occasion, du 22 au 25 août, une rencontre a eu lieu à Genève entre les représentants des Eglises de l'U.R.S.S. et des U.S.A. sous le thème: „La contribution des Eglises de l'U.R.S.S. et des U.S.A. à la lutte pour la coopération, le désarmement et la paix".

A pris part à cette rencontre Mgr. Arsen Berbérian qui, pendant son séjour à Genève, a eu aussi des entretiens avec les représentants de la communauté arménienne de Genève et, en l'occurence, il s'est intéressé à la vie ecclésiastique et culturelle des Arméniens de ce pays. Dimanche, le 17 août, Mgr. Berbérian a célébré la messe à

l'église arménienne St Jacques de Genève (page 39—41)

10. La visite du Secrétaire Général de la Conférence des Eglises Européennes le Dr. Glen Garfield Williams et de son épouse au Saint-Siège du 13 au 15 septembre et leur entrevue avec Sa Sainteté Vasken Ier (page 42).

11. Information sur la rencontre du Révérend Père Hakob Kelendjian, pasteur des Arméniens de la République Fédérale d'Allemagne, avec les membres dirigeants de la communauté ecclésiastique de la ville de Hanovre. Le 15 juin, dans l'église Friedens, des cérémonies religieuses ont eu lieu à cette occasion dans un esprit oecuménique, avec la participation des communautés arménienne et allemande, et une réception a été donnée en l'honneur du Père Kelendjian (page 43).

12. Le 14 septembre a eu lieu à Damas, la cérémonie de l'intronisation de Sa Sainteté Mar Ignatius Zakké Ier, nouveau Patriarche de l'Eglise orthodoxe syrienne. Au nom de Sa Sainteté Vasken Ier, a été présent à cette cérémonie le Révérend Père Voskan Kalpakian, prélat des Arméniens de Damas (page 44).

Dans le présent numéro est inséré le portrait du nouveau Patriarche syrien d'Antioche et de out l'Orient.

13. Information sur la Conférence Islamique des musulmans de l'Union Soviétique tenue du 9 au 12 septembre à Tachkent sous le thème: „Le XVe siècle de l'Hégire doit être un siècle de paix dans le monde et d'amitié entre les peuples".

Au nom du Saint-Siège d'Etchmiadzine, à titre d'observateurs, ont participé à cette conférence Mgr. Houssik Santourian, prélat du diocèse arménien d'Azerbaïdjan, et Mr. Hovhannès Topouzian, membre du Conseil Suprême Spirituel du Saint-Siège d'Etchmiadzine.
Le message de salut de Sa Sainteté Vasken Ier adressé à la Conférence Islamique en date du 5 septembre 1980 (page 45—46).

14. L'article du Père Zatik Avétikian sur la vie, l'activité et l'héritage littéraire de l'archevêque Stépanos Orbélian, historien arménien du XIIIe siècle. Dans son article l'auteur s'arrête particulièrement sur les raisons qui ont poussé l'historien Orbélian à écrire son recueil intitulé „Contre les diophysites" (page 47—55).

15. L'étude du professeur Haïk Amalian sur la traduction arménienne classique du livre des Macchabées (suite et fin, page 56—60).

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՆԱՀԱՅԵՆՏԻՍ ԳՐՍԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի գահակալության բսանհինգամյա տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում 3
ԻԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ—Ծես և արարողություն . . . 7
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒՅԱՆ—Հայ կրոնական դաստիարակությունը անցյալին և այսօր 12
ՋԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆ—Արտասահմանյան պայմաններու ազդեցությունը Հայ Եկեղեցիի ավանդական կարգ ու սարքին վրա . . . 20
Վերաբացման հանդիսություն հոգևոր ճեմարանում 28
Հոբելյանական հանդիսություններ Երուսաղեմի հայոց վանքում 31
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 34
Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Կյոնիգը Մայր Աթոռում . . . 36
Այցելություն Հարավային Ամերիկայի տիրախնամ թեմերին 37
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը Ժնևում 39
Պաշտոնական հանդիպում Սովետական Միությունում գործող Եկեղեցիների և ԱՄՆ-ի Եկեղեցիների ներկայացուցիչների միջև օգոստոսի 22—25-ը Ժնևում 41
«Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» գլխավոր քարտուղար դոկտոր Գլեն Գարֆիլդ Վիլյամսի այցելությունը Մայր Աթոռ 42
Էկումենիկ հանդիպում Հանովեր քաղաքում 43
Գահակալական հանդիսություն Անտիոքի և համայն Արևելքի Ասորական ուղղափառ Եկեղեցու նորընտիր Պատրիարք Նորին Ամենապատվություն Մար Իգնատիոս Զաքքա Ա-ի 44
Իսլամական կոնֆերանս Տաշքենդում 45
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյան . . . 47
Հ. ԱՄԱԼՅԱՆ—Մակաբայեցվոց գրքերի հայերեն թարգմանության բնագրի մասին 56
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 24.09.1980 թ.: Ստորագրված է տպագրության 30.10.1980 թ.:
Տպագրական 4 մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 883

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան. 1980 թ.